Հովհաննես Ալեքսանյան

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1941–1991 ԹԹ.



947.0(=919.81)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## 1941–1991 ԹԹ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
154

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
154

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2016

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ա 296

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր **Կ.Հ. Խաչատրյան**

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր **Հ.Մ. Հարությունյան**
պատմական գիտությունների դոկտոր **Գ.Ս. Ստեփանյան**

**Ալեքսանյան Հովհաննես**

Ա 296 Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ. /Հ. Ս. Ալեքսանյան. խմբ. Կ. Հ. Խաչատրյան. - Եր.:
Պատմության ինստիտուտ, 2016. – 185 էջ

*Աշխատությունը ներկայացնում է Հայկական ԽՍՀ սահմաններից դուրս, միութենական հանրապետություններում բնակվող հայկական համայնքների և հայաբնակ կենտրոնների հայության պատմաժողովրդագրական գործընթացները ԽՍՀՄ-ում 1941–1991 թթ.: Սկզբնաղբյուրների և գրականության քննական ուսումնասիրման արդյունքում ներկայացվում է ավելի քան 1.5 մլն. կազմող հայության հասարակական քաղաքական և կրթամշակութային կյանքը, համայնքների վերելքն ու անկումը: Այն լրացնում է ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքների պատմության դեռևս բաց մնացած շատ էջեր: Աշխատությունն օգտակար է հայկական համայնքների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների, դիվանագետների, ինչպես նաև ընթերցող լայն հասարակայնության համար:*

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-44-2

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016
© Ալեքսանյան Հ., 2016

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը գործնական հիմքերի վրա դրվեց հետխորհրդային տարիներին, երբ նախկին միութենական հանրապետությունների տարածքի հայության թվաքանակը զգալիորեն աճեց, հիմնվեցին նոր համայնքներ, ընդլայնվեց հայության բնակության աշխարհագրությունը, ձևավորվեցին համայնքային-մշակութային տարատեսակ կառույցներ: Միջպետական կապերի զարգացումը և ինտեգրացիոն գործընթացները հետխորհրդային տարածքում, միգրացիան ու սոցիալ-տնտեսական հիմնահարցերը լրացուցիչ խթան դարձան այդ հանրապետությունների հայության պատմության ուսումնասիրման, գիտամշակութային կապերի պահպանման ու ամրապնդման համար: Նախկին խորհրդային հանրապետություններում բնակվող հայության անցյալի պատմությունը և ներկա իրականությունը տարբեր դրսևորումներ, զարգացումներ ունեն, որի ուսումնասիրությունը գիտագործնական ու սոցիալ-քաղաքական կարևոր նշանակություն է ստացել:*

*ԽՍՀՄ տարածքի հայկական համայնքների պատմությունն առաջին անգամ ուսումնասիրության առարկա է դարձել հետխորհրդային տարիներին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի աշխատակիցների կողմից: Այդ աշխատանքների արդյունքում հրատարակվել են առաջին ամփոփ աշխատությունները*[1]*, առանձին գիտական հոդվածներ են*

---

[1] Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Պատմության ինստիտուտ, Եր., 2011: Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ. (երկրորդ հրատ.), Տիր հրատ., Եր., 2014: Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений. Сб. статей и материалов. Составители: К. Хачатрян, О. Алексанян, Редактор К. Хачатрян. Ер.,

տպագրվել հանրապետության և արտերկրի գիտական հանդեսներում, ժողովածուներում: Բացի այդ՝ հրատարակված «Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի IV հատորի երկու գրքերի առանձին գլուխներում ենթագլուխներով ներկայացվել են «Հայությունը խորհրդային հանրապետություններում» բաժինները, որը բացակայում էր խորհրդային տարիներին կազմված նախկին ակադեմիական հրատարակության ութհատորյակի էջերում:

Հատկանշական է, որ զգալի հետազոտական աշխատանքներ են իրականացվում նաև հետխորհրդային երկրների տարբեր ուսումնական և գիտահետազոտական կենտրոններում, լույս են տեսնում հոդվածներ ու գրականություն, որոնք նպաստում են հայկական համայնքների պատմության նորովի լուսաբանմանը, արխիվային ու փաստագրական նյութերի լայն շրջանառությանը:

Հայաստանի և արտերկրի գիտնականների կողմից կատարվող այս հետազոտությունները, որոնք վերաբերում են խորհրդային հանրապետությունների հայության պատմաժողովրդագրական, էթնոսոցիոլոգիական հիմնահարցերին մեծ հետաքրքրություն ու կարևորություն են ներկայացնում ինչպես ՀՀ, այնպես էլ այդ հանրապետությունների (ՌԴ, Ուկրաինա, Մոլդովա, Վրաստան և այլն) գիտական ու հասարակական-քաղաքական շրջանակների համար:

Խորհրդային հանրապետությունների հայկական համայնքների պատմության ուսումնասիրության կարևոր կողմերից է, այն թելադրված անհրաժեշտությունը, որով հաստատվում, ապացուցվում էր այդ համայնքների գոյությունը, շարունակական ընթացքը, մերօրյա բազմամիլիոն համայնքների առկայությունը:

---

Институт истории НАН РА, 2012. Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Եր., 2015:

*Անվիճելի է, որ խորհրդային կարգերի հաստատումով ամբողջովին չմարեց միութենական հանրապետությունների հայության համայնքային-ազգային կյանքը, չձևավորվեց մեկ «խորհրդային ժողովուրդ կամ պատմական նոր հանրույթ», թեև տեղի ունեցավ հայկական համայնքների ազգային դիմագծի մասնակի կորուստ, ձուլում, սակայն ավանդական համայնքներում առավելապես նկատելի էր ինտեգրումը տեղի իրականությանը:*

*Միևնույն ժամանակ նախկին միութենական հանրապետություններում համախումբ բնակվող հայության նկատմամբ երբեմն կիրառվող «ներքին սփյուռք» բնորոշումը չի կարող համապատասխան լինել սփյուռքի դասական բնորոշմանը, որը կիրառական է Արևմուտքի, Ամերիկայի և Մերձավոր Արևելքի հայության առումով: Անկասկած է, որ այս պարագայում գործ ունենք «խորհրդահայ համայնքների» իրողության հետ:*

*Այս առումով բացառություն են կազմում Հայաստանին հարևան հարավկովկասյան Վրացական ու Ադրբեջանական ԽՍՀ-ների հայությունը, քանի որ նրանց բնակության, ազգային-մշակութային միջավայրը սերտորեն կապված են Հայաստանին և հայոց պատմությանը, հայ իրականությանն ընդհանրապես (այդ հանրապետությունների կազմում գտնվող պատմական Ջավախքը, Նախիջևանը, Արցախը, Գարդմանն ու Ուտիքը չեն կարող դիտարկվել որպես հայկական համայնքներ):*

*Միութենական մյուս հանրապետությունների հայության առումով միանգամայն կիրառելի է «հայկական համայնքներ» բնորոշումը, որն ամրագրվել է նաև հետխորհրդային տարածաշրջանի նորանկախ հանրապետությունների հայ համայնքները բնորոշելու համար, անշուշտ, ելնելով այն իրողությունից, որ այդ համայնքները հիմնականում*

արևելահայ միջուկն են ներկայացնում և միասնական պատմական կենսագրություն են թողել նախ Ռուսական կայսրության, ապա նաև խորհրդային ժամանակաշրջանում երկու դար գտնվելով միևնույն մշակութային, հասարակական և սոցիալ-քաղաքական միջավայրում:

1941–1945 թթ. Հայրենական պատերազմում կրած կորուստները, հետպատերազմյան առաջին տարիներին քաղաքական հետապնդումները և աքսորը, նկատելի փոփոխություններ մտցրեցին միութենական հանրապետությունների հայկական համայնքների կենսագործունեության մեջ: Թեև նկատելիորեն թուլացան հալածանքները եկեղեցու և հավատացյալների նկատմամբ, սակայն եկեղեցական կառույցների հետագա ավերն ու փակումը շարունակվեց, համայնքների հայկական դպրոցները կրճատվեցին, որը հանգեցրեց մայրենի լեզվի տիրապետման մակարդակի իջեցմանը, ազգային մշակութային հաստատությունների թվաքանակի նվազմանը:

Աշխատությունը կազմված է երկու մասերից.

– խորհրդային հանրապետություններում հայության թվաքանակի, նրանց տեղաբաշխման, հայ բնակչության լեզվական, գրագիտության և այլ ցուցանիշները, ինչպես նաև հասարակական-քաղաքական, կրթամշակութային կյանքի շուրջ տեղի ունեցած զարգացումները.

– հավելվածներով ներկայացված են արխիվային փաստաթղթեր, մարդահամարի տվյալների հիման վրա կազմված աղյուսակներ և նյութեր, որոնք ամբողջացնում են վերոշարադրյալ հիմնահարցերը:

Ուսումնասիրությունը համեստ փորձ է մեկ ամբողջության մեջ դիտարկելու միութենական հանրապետությունների հայության հասարակական-քաղաքական և կրթամշակութային կյանքը՝ ԽՍՀՄ պատմության համապատկերում 1941–1991 թթ.:

*Խորհրդահայ համայնքների պատմության այս ժամանակափուլը գալիս է բացահայտելու հետխորհրդային տարիներին նախկին միութենական հանրապետությունների հայության պատմության առանցքային կողմերը:*

*Այս հանրապետություններում հայկական համայնքների ստվարացումը, նրանց ներքաշվելը հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումների հորձանուտի մեջ որոշակի նոր մարտահրավեր են առաջացրել, որոշ տեղերում առաջ բերելով հակահայ դրսևորումներ, հայության իրավունքների ոտնահարումներ, որոնց հաջող դիմագրավումը կարող է իրականացվել նաև այդ տարածաշրջանների հայկական համայնքների բազմադարյա, հարուստ, ստեղծարար ու բեղմնավոր պատմության ներկայացմամբ:*

*Կարևորելով այս աշխատանքի անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ լիահույս ենք, որ այն կխթանի հետագա ուսումնասիրությունները, որոնք հնարավորություն կընձեռեն առավել խորը հետազոտել ու վերլուծել այս համայնքների պատմության դեռևս չբացահայտված էջերը, ճշգրտումներ մտցնել առանձին հարցերի վերաբերյալ և լայն շրջանառություն ապահովել նորահայտ փաստերի համար:*

# ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

## *ա. ՌԽԴՍՀ-ում, Ուկրաինական և Բելոռուսական ԽՍՀ–ներում*

*Հայրենական մեծ պատերազմը նոր փորձությունների առաջ կանգնեցրեց ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդներին, այդ թվում՝ հայությանը: Պատերազմի նախօրեին ԽՍՀՄ ամբողջ հայ բնակչության գրեթե կեսն ապրում էր Հայկական ԽՍՀ-ում, մյուս կեսը՝ միութենական այլ հանրապետություններում:*

*Պատերազմի տարիներին միութենական հանրապետություններից բանակ զորակոչվեց շուրջ 200 հազար հայ: Պատահական չէ, որ ԽՍՀՄ հերոսի կոչմանն արժանացած հայորդիներից ավելի քան 60-ը ծնունդով Միության տարբեր հանրապետություններից էին՝ ՌԽԴՍՀ-ից, Վրացական, Ուկրաինական, Ադրբեջանական և Ուզբեկական ԽՍՀ-ներից:*

*Հայրենական մեծ պատերազմը, սովը, հիվանդությունները, զանգվածային աքսորը Ղրիմից և Հյուսիսային Կովկասից նկատելի փոփոխություններ մտցրեցին միութենական հանրապետությունների հայության թվաքանակի ու տեղաբաշխման մեջ: Այդ տարիներին հատկապես տուժեցին ԽՍՀՄ հայկական այն համայնքները, որոնք հայտնվեցին ֆաշիստական ռազմակալման տակ գտնվող շրջաններում: Հայ բնակչությունը ենթարկվեց բռնությունների, տարհանման ու աքսորի: Ուկրաինական ԽՍՀ, Բելոռուսական ԽՍՀ և ՌԽԴՍՀ առանձին տարածաշրջանների հայությունը, անմիջականորեն հայտնվելով ֆաշիստական ռազմակալման տակ, իր մասնակցությունը բե-*

րեց պարտիզանական և ընդհատակյա պայքարին, կրեց զգալի կորուստներ։

Ղրիմահայությունը պատերազմի տարիներին սաստիկ տուժեց ոչ միայն ֆաշիստական ռազմակալման հետևանքով, այլև դարձավ ստալինյան բռնության զոհը՝ տեղահանման ենթարկվելով Ղրիմից Միայն 1950-ական թթ. կենդանի աքսորյալներին արդարացրեցին և կատարվեց մասնակի վերադարձ։ 1954 թ. Ղրիմը ՌԽՖՍՀ կազմից հանվեց և մտցվեց Ուկրաինական ԽՍՀ կազմի մեջ, իսկ թերակղզու հայությունը հետպատերազմյան Համամիութենական մարդահամարներում արդեն ներկայացվում է Ուկրաինական ԽՍՀ հայության ընդհանուր թվաքանակի մեջ։

1959 թ. հետպատերազմյան առաջին Համամիութենական մարդահամարի արդյունքներով ԽՍՀՄ ամբողջ հայ ազգաբնակչության թվաքանակը կազմում էր 2.786.912 մարդ[2], որից Հայկական ԽՍՀ-ում կեսից ավելին՝ 1.551.610 մարդ կամ 55.7 տոկոսը։ ԽՍՀՄ հայության ավելի քան 44 տոկոսը բնակվում էր միութենական մյուս հանրապետություններում։

1970 թ. ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակը, նախորդ մարդահամարի թվական տվյալների հետ համեմատած աճել էր 772.239 մարդով կամ 27.7 տոկոսով[3]։ Դա ոչ միայն բնական աճի արդյունք էր, այլ նաև սփյուռքահայ զանգվածների Հայկական ԽՍՀ շարունակվող ներգաղթի։ Նախորդ Համամիութենական մարդահամարի համեմատ Հայկական ԽՍՀ-ից դուրս բնակվում էր ԽՍՀՄ հայության արդեն 38 տոկոսը։

[2] Տես Итого Всесоюзной переписи населения 1959 г. СССР (Сводный том), Москва, 1962, էջ 184:

[3] Տես Всесоюзная перепись населения 1970 года: Сб. статей, Москва, 1976, էջ 196:

*1979 թ. մարդահամարով ԽՍՀՄ-ում բնակվող հայությունն իր թվաքանակով[4] կազմում էր բազմազգ Միության բնակչության 1,58 տոկոսը (4.151.241 մարդ): Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայության շուրջ 65,6 տոկոսը (2.724.975 մարդ), իսկ միութենական մյուս հանրապետություններում միասին՝ շուրջ 34,4 տոկոսը (1.426.266 մարդ), որն ամենամեծ տոկոսային ցուցանիշն էր այն էթնիկ խմբերի մեջ, որոնք բնակվում էին իրենց ազգային հանրապետության սահմաններից դուրս[5]:*

*Համամիութենական վերջին մարդահամարն անցկացվել է 1989 թ. հունվարի 12-19-ը՝ քաղաքացիների փաստական բնակության վայրի հարցմամբ, որի արդյունքներով, 1979 թ. համեմատությամբ, ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակն աճել էր 471.991 մարդով:*

*Այսպիսով, 50 տարում՝ 1939-1989 թթ., ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակն ավելի քան կրկնապատկվել էր (1939 թ.՝ 2.152.860, իսկ 1989 թ.՝ 4.623.232 մարդ), իսկ Հայկական ԽՍՀ-ում՝ գրեթե եռապատկվել էր (1.061.997-ից հասնելով 3.083.616 մարդու):*

*1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով ՌԽՖՍՀ-ում բնակվում էր 255.978[6], Ուկրաինական ԽՍՀ-ում 28.024[7], Բելոռուսական ԽՍՀ-ում՝ 1751 հայ[8]:*

*1970 թ. Համամիութենական մարդահամարի անցկացումը նպատակ ուներ ապահովելու ԽՍՀՄ «զարգացած սոցիալիզմի» փուլի ժողովրդագրական, տնտեսական, կրթական և այլ ասպարեզների վի-*

---

[4] Տես СССР в цифрах в 1984 году, Москва, 1985, էջ 12:
[5] Տես Всесоюзная перепись населения 1979 года: Сб. статей, Москва, 1984, էջ 154-155:
[6] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, РСФСР, Москва, 1963, էջ 300:
[7] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Украинская ССР, Москва, 1963, էջ 168:
[8] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Белорусская, Москва, 1963, էջ 124:

*ճակատագրական պատկերը: Վերոհիշյալ մարդահամարն արձանագրել է հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հետևյալ պատկերը՝ ՌԽՖՍՀ-ում 298.718 մարդ կամ ԽՍՀՄ ամբողջ հայության 8,4 տոկոսը, Ուկրաինական ԽՍՀ-ում 33.439 մարդ կամ ԽՍՀՄ հայության 0,9 տոկոսը, Բելոռուսական ԽՍՀ-ում 2362 մարդ կամ ԽՍՀՄ ամբողջ հայության 0,07 տոկոսը*[9]*:*

*1970 թ. ՌԽՖՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակը, նախորդ մարդահամարի համեմատ, գրանցել էր հայության թվաքանակի աճ 42.740 մարդով կամ 16,7 տոկոսով: Ուշագրավ է, որ ՌԽՖՍՀ ամբողջ հայության 33 տոկոսը բնակվում էր Կրասնոդարի երկրամասում, իսկ շուրջ 18 տոկոսը Ռոստովի մարզում: Այս երկու վարչական միավորների հայությունը միասին կազմում էին Ռուսաստանում ապրող հայության կեսից ավելին*

*1970 թ. Ուկրաինական ԽՍՀ հայ ազգաբնակչությունը, նախորդ մարդահամարի համեմատ, արձանագրել էր ավելի քան 19 տոկոս աճ՝ կազմելով 33.439 մարդ, որից Ղրիմում բնակվում էր այդ հանրապետության հայության 9,24 տոկոսը*[10]*: Ուկրաինայում առավել հայ բնակչություն ունեին Դոնեցկի ու Խարկովի մարզերը. Ուկրաինայի հայության գերակշիռ մասի համար մայրենի լեզու էր համարվում ռուսերենը (58,5 տոկոս), 38,4 տոկոսինը՝ հայերենը, 2,5 տոկոսինը՝ ուկրաիներենը:*

*1979 թ. Համամիութենական մարդահամարով հայությանը վերաբերող ամփոփ տվյալներն ունեն հետևյալ պատկերը. ՌԽՖՍՀ-ում՝*

[9] Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, Москва, 1973, էջ 324:

[10] Տե՛ս Беднарский И. Г., Атлас «Крым. Армяне», Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008, էջ 36:

*364.570 հայ (ԽՍՀՄ հայ բնակչության 8,8 տոկոսը), Ուկրաինական ԽՍՀ-ում՝ 38.646 հայ (ԽՍՀՄ հայ բնակչության 0,9 տոկոսը) և Բելոռուսական ԽՍՀ-ում՝ 2751 հայ (ԽՍՀՄ հայ բնակչության 0,06 տոկոսը)։*

*1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով ՌԽՖՍՀ-ում արձանագրվել է հայության թվաքանակի աճ 46 տոկոսով, Ուկրաինական ԽՍՀ-ում՝ 40 տոկոսով, իսկ Բելոռուսական ԽՍՀ-ում՝ մոտ 80 տոկոսով։*

*ՌԽՖՍՀ հայությունը կազմում էր ամբողջ ԽՍՀՄ հայության 11,5 տոկոսը կամ 532.390 մարդ։ Մոսկվայի հայ ազգաբնակչության թվաքանակը երեսուն տարում (1959–1989 թթ.) աճել է 2,5 անգամ՝1989 թ. կազմելով շուրջ 43.5 հազար մարդ*[11]

*ՌԽՖՍՀ Կրասնոդարի երկրամասի հայերի թիվը նույնպես զգալիորեն աճել է. 1979 թ. 120,8 հազարից 1989 թ.՝ հասնելով 182.2 հազար մարդու. 1989 թ. մարդահամարի տվյալներով երկրամասի հայության 25,4 տոկոսն ուներ բարձրագույն, թերի բարձրագույն և միջին մասնագիտական, 58,6 տոկոսը միջնակարգ կամ թերի միջնակարգ, 11,3 տոկոսն տարրական կրթություն։ Այս ցուցանիշը քաղաքային բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 31,3, 55,6 և 9,1 տոկոս, գյուղերում՝ 17,3, 62,7 և 14,3 տոկոս։*

*Կրասնոդարի երկրամասի քաղաքների հնաբնակ հայության շրջանում բավականին մեծ էր ծառայողների և մտավորականության թվաքանակը։ Հնաբնակ հայերը ապրում էին Անապայի, Գորյաչի Կլյուչի, Բելորեչենսկի, Ապշերոնսկի, Տուապսեի, Լազարևսկի, Խոս-*

[11] Տես Арутюнян Ю., Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара. Ереван, 2011, էջ 15:

*տիանսկի և Արզգիրի շրջանների ավելի քան 100 գյուղական վայրերում (չհաշված արդեն նախկին 74 գյուղերն ու խուտորները):*

*1989 թ. մարդահամարով Կրասնոդարի երկրամասի հայության 75,2 տոկոսն իր մայրենի լեզուն համարում էր հայերենը, 24,7 տոկոսը ռուսերենը: Քաղաքաբնակ հայերի շրջանում հայերենը մայրենի լեզու էր ճանաչել 68,2 տոկոսը, իսկ գյուղական վայրերում 84 տոկոսը:*

*1989 թ. մարդահամարով Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ-ում բնակվում էին 14.824 հայեր, այդ թվում 97,4 տոկոսը՝ քաղաքներում, հիմնականում Գրոզնիում: Այստեղ բնակվող հայության 73,2 տոկոսն իր մայրենի լեզուն համարում էր հայերենը, 26,7 տոկոսը ռուսերենը: 1990-ական թթ. սկզբներին չեչենական պատերազմների պատճառով, տեղի հայությունը հիմնականում հեռացավ Ստավրոպոլի երկրամաս[12]:*

*Ուկրաինական ԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը կազմում էր 54.200 մարդ կամ ԽՍՀՄ ամբողջ հայության շուրջ 1,2 տոկոսը: Բելոռուսական ԽՍՀ հայության թվաքանակը կազմում էր 4933 մարդ կամ ԽՍՀՄ հայության 0,1 տոկոսը:*

*

* *

*Հետպատերազմյան տարիներին խորհրդահայ համայնքների ազգային-հոգևոր կյանքի վերանորոգության առումով նշանակալի իրադարձություն էր 1945 թ. հունիսի 16-ի Սբ. Էջմիածնում Ազգային եկեղեցական ժողովի բացումը, որին ներկա էին ինչպես արտասահմանի, այնպես էլ ԽՍՀՄ թեմերից՝ Արարատյան, Շիրակի, Վրաստանի, Բաքու-Թուրքեստանի, Աստրախանի, Բեսարաբիայի, Հյու-*

---

[12] Տես Белозеров В., Этническая карта Северного Кавказа, Москва, 2005, էջ 293:

սիայի Կովկասի և Նոր Նախիջևանի թեմական առաջնորդներն իրենց պատգամավորներով. ընդամենը 102 պատգամավոր, այդ թվում՝ 28 հոգևորական և 74 աշխարհական[13]:

1945 թ. հունիսի 22-ին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը (Գևորգ Զ) ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Ժողովն ընդունեց Հայ Առաքելական եկեղեցու նոր սահմանադրություն (կանոնակարգ), իսկ շատ չանցած վերականգնվեցին Էջմիածնի ճեմարանի գործունեությունը, տպարանը, վանքի գրադարանը, «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը: Եկեղեցու կառուցվածքում հայտնվեցին նոր թեմեր ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ արտասահմանում:

Ազգային եկեղեցական ժողովն իր որոշումներով, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությամբ, հայ առաքելական եկեղեցուն վերակազմվելու և գործելու հնարավորություն ընձեռեց իր պատմական առաքելությունը շարունակելու հայության հոգևոր-մշակութային կյանքում:

Գևորգ Զ-ի գահակալությամբ շրջեց Հայ Առաքելական եկեղեցու դեմ սպառնալի չափերի հասած հալածանքների պատմափուլը, որը գործնականում հանգեցրել էր Հայ եկեղեցական կառույցի թուլացմանն ամբողջ ԽՍՀՄ տարածքում: Խորհրդահայ համայնքներում փակվել և քանդվել էին հարյուրավոր հայկական եկեղեցիներ, իսկ կանգուն մնացածները վերածվել էին պահեստների կամ ակումբների: Գևորգ Զ-ն խորհրդային իշխանությունների առաջ հանդես եկավ ազգանպաստ պահանջներով՝ կազմակերպել սփյուռքահայության ներգաղթ, լուծել բռնադատված և աքսորված հոգևորականների խնդիրը,

[13] Տես Մադոյան Ա., Գէորգ Զ Չորէքչեան. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին, 2011, էջ 97: Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994, էջ 170:

*1944 թ. Ղրիմից աքսորված հայերի վերադարձի կազմակերպում իրենց բնակության նախկին վայրեր կամ Հայաստան*[14]*:*

*Գևորգ Զ կաթողիկոսի գործունեությունը համառ ու նվիրական էր. «Գևորգ Զ Հայրապետը, պետական այրերի բարացած մտածողությունը հաղթահարելով իր նուրբ դիվանագիտությամբ, կարողացավ կանգնեցնել համայնավարական հակազգային և հակաեկեղեցական քաղաքական գիծը և ստիպեց հավիտենական ու մնայուն արժեքները զանազանել ժամանակավորից»*[15]*:*

*Հետպատերազմյան շրջանում նկատվող դրական տեղաշարժը լիարժեքորեն չլուծեց հայ եկեղեցու առջև ծառացած խնդիրները, ավելին՝ շարունակվեցին եկեղեցիների փակումն ու ավերը: Պատերազմի տարիներին Օդեսայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին հիմնահատակ ավերվել էր ռմբակոծությունից: Ավերված եկեղեցին վերադարձնելու և հոգևոր սպասավոր նշանակելու առաջարկով տեղական իշխանությունների առջև հանդես է եկել տեղի համայնքը, սակայն 1951 թ. քաղգործկոմը ավերված եկեղեցու տարածքն այլ նպատակներով օգտագործելու որոշում էր կայացրել*[16]*:*

*Ուկրաինայի ԽՍՀ տարածքում ծանր հարված կրեց լեհախոս կաթոլիկ հայ համայնքը: Արևմտյան Ուկրաինայի հայ կաթոլիկ համայնքի գույքն ու եկեղեցիները պետականացվեցին՝ վերածվելով պահեստների, մարզական և մշակութային հաստատությունների, իսկ Կամենեց-Պոդոլսկի, Մոգիլև-Պոդոլսկի, Տիսմենիցայի և մի շարք այլ եկեղեցիներ քանդվեցին:*

---

[14] Տես Մադոյան Ա., նշվ. աշխ., էջ 163–164:

[15] Եղիշէ ա. Քհնյ. Սարգսեան, Սուրբ Էջմիածնի հոգևոր Ճեմարանը. Գէորգեան Ճեմարան. Աստուածաբանական համալսարան (1945–2006), Ս. Էջմիածին, 2009, էջ 57:

[16] Տես Давтян Д., История храма Св. Григория Просветителя армянской Апостольской церкви в Одессе, Одесса, 2004, էջ 86–91:

*Խորհրդային տարիներին Լուցկի Սբ. Ստեփանոս կիսավեր հայկական եկեղեցին 1954 թ. վերափոխվել է բնակելի շենքի, Լվովի Սբ. Աստվածածին եկեղեցին՝ նկարների և սրբապատկերների պահոցի, իսկ Սբ. Խաչ եկեղեցին՝ հրշեջ ուսումնարանի: Բերեժանիի, Կուտիի, Չերնովցիի, Հորոդենկայի, Սնյատինի, Յազլովեցի, Լիսեցի, Իվանո-Ֆրանկովսկի հայկական եկեղեցիները վերածվել են պահեստների, կինոթատրոնի, աթեիզմի թանգարանի, երգեհոնային երաժշտության և մարզական դահլիճների*[17]*: Արևմտյան Ուկրաինայի հայ բնակչության աստիճանական ուծացման և Լեհաստան արտագաղթի հետևանքով հայկական այս եկեղեցիների մեծ մասը ժամանակի ընթացքում անցել են լեհ, հույն. ուկրաինացի կաթոլիկներին կամ ուղղափառ եկեղեցուն: Արևմտյան Ուկրաինայի տարածքում կանգուն մնացած հայկական եկեղեցիներից Հայ առաքելական եկեղեցուն են վերադարձվել միայն Լվովի և Չերնովցիի եկեղեցիները:*

*Գևորգ Զ Չորեքչյանի գահակալությամբ սկսված Հայ Առաքելական եկեղեցու նորոգիչ գործընթացը շարունակվեց և ավելի ամուր հիմքերի վրա դրվեց Վազգեն Վեհափառի օրոք:*

*Վազգեն Ա կաթողիկոսն իր գահակալության տարիներին (1955–1994 թթ.) մեծ ավանդ ունեցավ հոգևոր-մշակութային վերածննդի, եկեղեցաշինության, հայ եկեղեցու միասնության հաստատման և հայրենիք-սփյուռքյան համայնքներ կապերի ամրապնդման գործում: Վազգեն Ա-ի գահակալության տարիները, հակառակ խորհրդային իշխանության կողմից վարվող քաղաքականությանը, եղել են բեղուն*

---

[17] Տես Վարդանյան Ս., Արևմտյան Ուկրաինայի հայկական հուշարձանները, Վարձք, Երևան, № 9, 2013, էջ 38–64:

*ու արդյունավետ, հայ եկեղեցին իր հովվապետի ճկուն գործելակերպի շնորհիվ մնացել է իր բարձունքի վրա*[18]*:*

*Վազգեն Վեհափառը, հայրապետական աթոռին բազմելուց ամիսներ առաջ, ուղևորություն էր կատարել Հայ առաքելական եկեղեցու «ներքին» թեմերում՝ մոտիկից ծանոթանալու համար ԽՍՀՄ հայ հոգևորականության և եկեղեցիների աշխարհական գործիչների հետ*[19]*:*

*Հայ Առաքելական եկեղեցու ԽՍՀՄ թեմերում առկա էր դրոշակի ներքին պայքար հոգևորականների, եկեղեցական խորհուրդների և թեմական խորհուրդների միջև, որն արդյունք էր Գերագույն հոգևոր խորհրդի (ԳՀԽ) թուլացման, փոխհարաբերությունները կարգավորող հրահանգի և կանոնակարգի բացակայության: Փաստաթղթերից մեկում՝ կարդում ենք. «Անթույլատրելի, կարգազանց իրավիճակ ու անմաքուր պայքար էր առկա բոլոր թեմերում: Ընչաքաղց պայքարի և խռովությունների մեջ էին թե՛ Բաքուն, թե՛ Կիրովաբադը, թե՛ Ռոստովը, թե՛ Չալթըրը, և թե՛ Թբիլիսին ու Լենինականը»*[20]*:*

*Վազգեն Պալճյանի այցը Մոսկվա նրան բերել էր եզրահանգման, որ տեղի հայ աբեղաները հոգևոր ծառայության համար անհրաժեշտ նվազագույն տվյալներ չունեին՝ չխոսելով նյութական միջոցների շռայլ վատնումների մասին: Չնայած հայ եկեղեցու ԽՍՀՄ թեմերում առկա խնդիրներին, թեմական առաջնորդների անգործությանը և սպասվող աշխատանքներին՝ Վազգեն Ա-ին ոգևորել էր հայ հավատացյալների Առաքելական եկեղեցուն նվիրվածությունն ու ազգասի-*

[18] Տես Վազգեն Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008, էջ 4:
[19] Տես Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), կազմող Գ. Յազըճեան, Երևան, 2008, էջ 102:
[20] Նույն տեղում էջ 103–104:

*րությունը: Վազգեն Ա-ի հովվապետության օրոք վերանորոգվեցին ինչպես Հայաստանի, այնպես էլ «Բաքվի, Մոսկվայի, Դոնի Ռոստովի և Արմավիրի եկեղեցիները»[21]:*

*Վազգեն Ա-ի ձեռնարկած շինարարական-վերանորոգչական գործունեությունն ապահովվում էր հիմնականում արտասահմանյան թեմերի և բարերարների (հատկապես Գ. Կյուլպենկյան հիմնադրության) հատկացումներով, քանի որ ԽՍՀՄ թեմերից ստացվող եկամուտներն անբավարար էին: Այսպես, 1958 թ. Մայր Աթոռի տարեկան եկամուտը Մայր Տաճարից և ներքին հինգ թեմերից կազմել էր մոտ երկու միլիոն ռուբլի[22]:*

*Վերափառի ջանքերի շնորհիվ արդեն 1956 թ. փետրվարի 9-ին ՌԽՖՍՀ կառավարության որոշմամբ Մոսկվայի հայկական եկեղեցին[23] փոխանցվեց հայ հավատացյալներին, որին անմիջապես հաջորդեց հայ եկեղեցու ժամանակավոր գործադիր մարմնի կազմումը: Գործադիր մարմինը շփումներ հաստատեց պետական համապատասխան կառույցների հետ, ընդունեց եկեղեցին, կից շենքերը, գերեզմանատունը, որով բավարարվեց քաղաքի հայ հավատացյալների կրոնական պահանջմունքները[24]:*

*Վազգեն Ա-ի ազգանվեր գործունեության վկայությունն են խորհրդային ամբողջատիրական համակարգի պայմաններում նրա ցուցաբերած աննահանջ դիրքորոշումն ու քայլերը նաև միութենական*

---

[21] Վազգեն Ա. կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 4:

[22] Տես Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.), էջ 557:

[23] Խոսքը վերաբերում է Մոսկվայի հայկական գերեզմանատանը կից կառուցված Սբ. Հարության եկեղեցուն: Այն Մոսկվայի հայ համայնքին վերադարձնելու տարեթիվ է նշվում նաև 1954 թ.: Տես Рафиенко Л. С., Армянский религиозный, культурный и благотворительный центр в Москве в конце XVIII – первой трети XX вв., Московский регион: этноконфессиональная ситуация, Москва, 2000, էջ116:

[24] Տես ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 108, թ. 53:

մյուս հանրապետությունների հայկական հոգևոր-մշակութային հաստատությունները վերադարձնելու ուղղությամբ: Այդ համատեքստում կարևոր էին ԽՍՀՄ պետական մարմինների ու ղեկավարության առջև ունեցած ձեռնարկները (նամակները Ն. Բուլգանինին, Ն. Խրուշչովին, Ա. Կոսիգինին և այլոց), որոնցում ակնհայտ դրսևորվել են կաթողիկոսի՝ որպես մեծ հայրենասերի, հոգևոր առաջնորդի և ազգային-պետական գործչի հատկանիշները:

Կաթողիկոս Վազգեն Ա-ն ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն. Բուլգանինին հասցեագրած նամակում (1956 թ. մայիսի 12), ընդգծելով հայ եկեղեցու անխզելի կապերը հայ Սփյուռքի ու Խորհրդային հայրենիքի հետ, բարձրացնում էր հարցերի լայն շրջանակ. բերում էր հայության թվաքանակի ու տեղաբաշխման վերաբերյալ իրեն հասու թվային տվյալներ:

Նա իր նամակում հիշեցնում էր հայերով բնակեցված ԽՍՀՄ տարբեր շրջաններից ստացած բազմաթիվ խնդրագրերի մասին, որտեղ հավատացյալ հայերը դժգոհում էին, որ զրկված են գործող եկեղեցիներից, անհրաժեշտ ծեսերի կատարումից և հոգևոր մխիթարանքից.

Նամակում կաթողիկոսն անդրադարձել է նաև խորհրդահայ համայնքներում հայ կրթական խնդիրներին, դպրոցական ցանցի ընդլայնման հարցերին. «Արտասահմանյան հայերից շատերը որոշ դժգոհություն էին արտահայտում այն բանի համար, որ հայ հոծ բնակչությամբ Վրաստանի և Ադրբեջանի առանձին շրջաններում ու քաղաքներում շատ հայկական դպրոցներ ընդհանրապես փակ են, իսկ որտեղ կան՝ անբավարար են լիովին ընդգրկելու համար հայ երեխաներին, որոնք ցանկանում են ուսանել մայրենի լեզուն: Այսպես, օրինակ, Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Արմավիրում, Պյատիգորսկում, Բա-

*թումիում, Սուխումիում, անդրկովկասյան հանրապետություններում և այլ տեղերում, որտեղ մինչև 1937 թ. գոյություն են ունեցել հայկական միջնակարգ դպրոցներ, ներկայումս դրանք բոլորովին չկան»*[25]:

*Վեհափառը խնդրում էր կառավարության ղեկավարի թույլտվությունը բացելու 9 եկեղեցի և մատուռ Հայկական ԽՍՀ-ում, 36 եկեղեցի և ուխտավայր միութենական մյուս հանրապետությունների տարածքում, ինչպես նաև Սբ. Էջմիածնի ենթակայությանը փոխանցել Գանձասարի, Տաթևի և Սուրբ Խաչի (Դոնի Ռոստով) վանքերը*[26]:

*Վազգեն Ա-ն հետագայում ևս բազում ջանքեր գործադրեց, սակայն խորհրդային կենտրոնական իշխանությունները այս հարցադրումների ճնշող մասը նույնիսկ քննարկման չդրեցին: Ավելին, համապատասխան մարմինների միջոցով կաթողիկոսին հասկացնել էին տալիս, որ դուրս չգա զուտ եկեղեցական գործերի տնօրինման շրջանակներից:*

*Այդուհանդերձ կաթողիկոսը հովվապետական այցեր իրականացրեց խորհրդահայ համայնքներ ու եկեղեցական թեմեր՝ շտկելու հայ եկեղեցու դիրքերը, վերադարձնելու և վերանորոգելու վանքերն ու եկեղեցիները:*

*Հայկական եկեղեցիները թեմերին վերադարձնելու խնդիրը լուծելու համար Վազգեն Ա-ն 1958 թ. հատուկ նամակով դիմել է նաև ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն. Խրուշչովին, ուր նշվում էր, որ հայկական եկեղեցիների վերաբացման հարցը հայահոծ միութենական տարբեր հանրապետություններում դեռևս լուծում չի ստացել:*

*ԽՍՀՄ-ում հակակրոնական պայքարը և աթեիստական գաղափարախոսությունն ուժեղացնելու քաղաքականությունը նոր սրացում*

[25] Տես նույն տեղում, ֆ. 409, ց. 1, գ. 5787, թթ.1–8:
[26] Տես նույն տեղում, ֆ. 823, ց. 4, գ. 23, թթ.1–3:

*ստացավ հետստալինյան շրջանում: Այդ քաղաքականության արդյունքում խորհրդային տարբեր հանրապետություններում շարունակվեց հայկական եկեղեցիների փակման ու ավերման գործընթացը, հոգևորականներին նոր հարկային դրույքաչափերով ծանրաբեռնելու և եկեղեցու նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու փորձերը:*

*Ուշագրավ է Վազգեն Ա-ի 1958 թ. օգոստոսի 26-ի բողոքագիր-նամակն ուղղված ՀԵԳԽ-ի (Հայ եկեղեցու գործերի խորհուրդ) նախագահ Ս. Գասպարյանին, ուր մտահոգություն և հիասթափություն է արտահայտվել Պյատիգորսկ քաղաքի հայկական եկեղեցին քանդելու տեղական իշխանությունների քայլի առնչությամբ*[27] *(հակառակ տրված խոստումների, որ եկեղեցին վերաբացվելու է):*

*Հիշյալ նամակում Վազգեն Ա-ն համակողմանիորեն ներկայացրել է հայահոծ Կիսլովոդսկ, Ժելեզնովոդսկ, Պյատիգորսկ և Եսենտուկի քաղաքների ավելի քան 25 հազար հայ ազգաբնակչության և հավատացյալների ցանկությունը՝ գործող տեսնել շուրջ 30 տարի առաջ փակված իրենց երկու եկեղեցիները (Պյատիգորսկում և Կիսլովոդսկում):*

*Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ ոտնձգություններ են տեղի ունեցել նաև ՌԽԴՍՀ այլ վայրերում. 1959 թ. հուլիսին վերջնականապես փակվել է Դոնի Ռոստով քաղաքի հայկական եկեղեցին՝ իբրև Կ. Մարքսի հրապարակի վերակառուցման նպատակով: Մարզային և ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններն այդ փակումը «հիմնավորեցին» նրանով, որ տաճարից ոչ հեռու, «քաղաքում կայ եւ մէկ, գրանցուած հայկական եկեղեցի, որտեղ էլ Ռոստով քաղաքի հայ հաւատացեալները կարող են իրենց կրօնական պահանջմունքնե*

[27] Տես Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան..., նշվ. աշխ., էջ 680:

րը կատարել»[28]: Նոր Նախիջևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր դժվարին գոյությունն ապրեց մինչև 1960-ական թթ., երբ, ի վերջո, ավերվեց[29]:

Հայ Առաքելական եկեղեցու դիրքերի թուլացմանն էր ուղղված 1958–1959 թթ. Գևորգյան ճեմարանի սաների (թվով 40) զորակոչի վերաբերյալ որոշումը, ապա ԽՍՀՄ տարածքում նոր թեմեր և եկեղեցիներ բացելու մտադրություն չլինելով պայմանավորված նոր ուսումնական տարում ճեմարանում ընդունելությունը կրճատելու, անգամ ժամանակավորապես դադարեցնելու, տպարանը Էջմիածնի տնօրինությունից վերցնելու ծրագրերը[30]:

Հայ Առաքելական եկեղեցու առջև ծառացած վերոհիշյալ հարցերն ու առաջիկա ծրագրերը Վազգեն Ա-ի կողմից բարձրացվել են ԽՍՀՄ կառավարության նախագահի առաջին տեղակալ Ա. Կոսիգինի հետ 1960 թ. հոկտեմբերի 1-ին կայացած հանդիպման ժամանակ:

Ներկայացնելով հայ եկեղեցու ներքին խնդիրները՝ Վազգեն Ա-ն դրանք անմիջականորեն շաղկապել էր արտասահմանում Մայր Աթոռի հեղինակության հետ. «Ինձ աննպատակայարմար է թւում, որ մեր դիրքերն արտասահմանում թուլանան: Հիմա ՍՍՀՄ տարածքում կան աննշան թւով հայկական եկեղեցիներ, եւ եթէ դրանց մի մասը փակուի, ապա դա կվնասի արտասահմանում մեր գործին: Վերջին երկու տարուայ ընթացքում, մասնաւորապէս նման երեւոյթ գրանցուեց Հիւսիսային Կովկասում, ինչպէս նաեւ Աստրախանում, Կրասնոդարում եւ այլուր[31]»: ԽՍՀՄ ներքին թեմերում գտնվող եկեղեցիների և պատմական հուշարձանների պահպանության հարցերի հետ մեկտեղ կա-

[28] Նույն տեղում, էջ 756:
[29] Տե՛ս Тер-Саркисянц А., նշվ. աշխ., էջ 292:
[30] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 160, թթ. 14–15, ց. 4, գ. 36, թ. 4:
[31] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան..., նշվ. աշխ., էջ 890–891:

թողիկոսը բարձրացրել է նաև Գևորգյան ճեմարանի սաների թվաքանակի, նրանց զորակոչի, Բաքվի և Մոսկվայի թեմական առաջնորդների բնակարանի, հայրենադարձության կազմակերպման և ազգային-եկեղեցական ժողով գումարելու խնդիրները: Պետք է նշել, որ Ա. Կոսիգինի հետ հանդիպումն ունեցավ կարևոր և գործնական նշանակություն, բարձրացված հարցերի մի մասը լուծում ստացավ: Կարգավորվեցին ճեմարանի սաներին զորակոչից ազատելու, 1962 թ. ազգային-եկեղեցական նոր ժողովի հրավիրման, ֆիլմ ստեղծելու, հրատարակությունների ընդլայնման և այլ հարցեր:

Բայցևայնպես, խորհրդային իշխանությունների քաղաքականությունը կրոնական հաստատությունների նկատմամբ կտրուկ փոփոխություն չկրեց, քանի որ Աստրախանի հայկական եկեղեցին փակվեց գոյություն ունեցող կրոնական ընկերության ինքնալուծարման և եկեղեցական շինություններից հավատացյալների հրաժարման, իսկ Կրասնոդար քաղաքի եկեղեցին հայ հավատացյալներից վերցվեց շինության վթարային լինելու պատճառաբանությամբ[32]: ԽՍՀՄ տարածքի հայ եկեղեցական թեմերում առկա խնդիրները շարունակում էին մնալ չլուծված:

1964 թ. մայիսին ԽՍՀՄ իշխանությունները համաձայնություն տվեցին Հայ Առաքելական եկեղեցու Հյուսիսային Կովկասի և Նոր Նախիջևանի թեմը Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի վերակազմակերպմանը, որի կենտրոնը Ռոստովից տեղափոխվեց Մոսկվա[33]:

1966 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով Նոր Նախիջևանի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի թեմերի և

[32] Տես նույն տեղում, էջ 918:
[33] Տես ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 254, թ. 18:

*Մոսկվայի հովվության միավորմամբ կազմավորվել է Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը Մոսկվա կենտրոնով՝ առաջնորդանիստը Մոսկվայի Սբ. Հարության եկեղեցին[34]: Մինչև 1990-ական թթ. սկիզբը Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմն ուներ 7 եկեղեցի՝ Մոսկվայի Սբ. Հարության, Սանկտ Պետերբուրգի, Արմավիրի, Դոնի Ռոստովի, Չալթրի, Վլադիկովկասի, Բույյոնովսկի (Սբ. Խաչ) եկեղեցիները: Նորաստեղծ թեմը միավորել է խորհրդային հանրապետությունների հայ եկեղեցական համայնքները՝ բացառությամբ Անդրկովկասի:*

*1988 թ. ապրիլին քաղաքային իշխանությունների կողմից գրանցվեց Հայ Առաքելական եկեղեցու Սանկտ-Պետերբուրգի համայնքը, վերաբացվեցին և համայնքին հանձնվեցին քաղաքի Սբ. Հարության և Սբ. Կատարինե եկեղեցիները: 1989 թ. վերահաստատվել է Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը, ձեռնարկվել է Արցախի մի շարք եկեղեցիների ու վանքերի վերաբացումն ու նորոգումը, իսկ 1991 թ. հիմնվել է Հյուսիսային Կովկասի առաջնորդական փոխանորդությունը:*

*Հայ Առաքելական եկեղեցու ԽՍՀՄ ներքին թեմերում հետագայում կատարվեցին կառուցվածքային այլ փոփոխություններ ևս: Այսպես, ՌԴ կազմավորումից հետո Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմը վերակազմավորվել է երեք թեմերի.*

*1. Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի, որի առաջնորդը միաժամանակ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ներկայացուցիչն է Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարքության մոտ: Թեմի վարչական սահմաններն ընդգրկել են նաև Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Բելոռուսը, Մոլդովան և Մերձբալթիկան:*

[34] Տես Բարխուդարյան Վ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 346–347:

*2. Հարավային Ռուսաստանի թեմի, որի առաջնորդանիստն է Կրասնոդարի Սբ. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին: Թեմն ընդգրկում է Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում և Հյուսիսային Կովկասի ինքնավար հանրապետություններում գործող հայկական եկեղեցիներն ու համայնքները:*

*3. Ուկրաինայի թեմի, որը դեռևս 1991 թ. սեպտեմբերի 1-ի վճռագրով կազմակերպվել էր որպես թեմ, սակայն կանոնական ճանաչում է ստացել ավելի ուշ: Թեմի առաջնորդանիստն է Լվովի Սբ. Աստվածածնի Վերափոխման եկեղեցին:*

*Վազգեն Ա-ի գործունեության հետ են կապված միջեկեղեցական կապերի ամրապնդման ճանապարհով Հայ Առաքելական եկեղեցին նոր բարձրության վրա դնելը, ազգային խնդիրներին սատարելը: Հայ եկեղեցին իր մեծ հեղինակությամբ կանգնեց 1980-ական թթ. համազգային զարթոնքի դիրքերում, կարեկցեց և աջակցեց բազմահազար հայ փախստականներին, զորակցեց արցախյան ազատամարտը: Այս առումով անուրանալի են Վազգեն Ա Վեհափառի հայրենանվեր ձեռնարկները թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ ի Սփյուռս աշխարհի*

*Այսպիսով, խորհրդային տարիներին միութենական հանրապետությունների տարածքում գտնվող հայկական տասնյակ եկեղեցիներ ավերվեցին, քանդվեցին և օգտագործվեցին այլ նպատակներով: Եկեղեցու դեմ արշավի տարիներին, չնայած կրած մեծ գրկանքներին, բազմաթիվ հայկական եկեղեցիներ հանդիսացան ազգային-համայնքային կյանքի դրսևորման յուրօրինակ կենտրոններ՝ շարունակելով ծառայել հայության հոգևոր, կրթական, մշակութային առաջընթացին: Հայ Առաքելական եկեղեցին, դիմակայելով ծանր փորձություններ կարողացավ ազատվել ամբողջատիրական համակարգի կապանքնե-*

րից և գործունեության լայն հնարավորություն ստանալ՝ իր ազգանվեր գործը շարունակելու համար:

***Հասարակական-քաղաքական կյանքը***:

*Մեծ Հայրենականի տարիներին միութենական հանրապետությունների հայաբնակ շրջանները տուժեցին ոչ միայն պատերազմից, այլ նաև ԽՍՀՄ-ում գործադրվող ստալինյան բռնություններից, տեղահանություններից ու աքսորից: Ղրիմի ռազմակալման շրջանում ֆաշիստական վարչակազմի հետ գործակցության մեղադրանքով 1944 թ. հունիսին ղրիմահայությունը ենթարկվեց տեղահանության ու աքսորի: Պաշտպանության Պետական Կոմիտեի գաղտնի որոշման համաձայն Ղրիմի թաթարներից հետո տեղահանվեցին ու աքսորվեցին Ղրիմի հայ, հույն և բուլղար բնակիչները[35], առանց սեռի, տարիքի խտրականության և հաշվի առնելու խորհրդային իշխանությանը մատուցած ծառայությունները:*

*Տեղահանման նախօրեին Ի. Ստալինին ուղղված փաստաթղթերից մեկում (1944 թ. մայիս 29) ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Լ. Բերիան, բերելով իր պատճառաբանությունները, նպատակահարմար էր գտնում Ղրիմից տեղահանել նշված բոլոր ազգություններին: Վերոհիշյալ փաստաթղթում ներկայացվել են Ղրիմում գործող հայկական կոմիտեների և կրոնական միությունների գործունեությունը, անկախ Հայաստանի ստեղծման քարոզչության, հայկական լեգեոնի ձևավորման, գերմանական հրամանատարության կողմից տեղի հայության շրջանում առևտրի ու մանր արտադրության կազմակերպումը խոխանավորելու մասին շինծու փաստեր[36]: Արդյունքում Ղրիմից աքսորվե*

---

[35] Տե՛ս Григорьянц В. Е., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы, Историческое наследие Крыма, 2004, № 5, էջ 148:
[36] Տե՛ս ГАРФ, Ф. Р-9401, оп. 2, д. 65, лл. 162–163.

*ցին 9.621 հայեր (այլ աղբյուրի տվյալներով՝ 9.919[37]): Ղրիմահայ գաղութը փաստացի դադարեց գոյություն ունենալուց:*

*Աքսորված ղրիմահայերին ցրեցին Ղազախական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ և ՌԽՖՍՀ (Բաշկիրիա, Պերմ, Սվերդլովսկ, Կեմերովո և այլ մարզեր) հատուկ բնակության վայրերում:*

*Ֆաշիստական օկուպացիոն վարչակազմի հետ գործակցության և քայքայիչ գործունեության մեղադրանքով աքսորի ենթարկվեցին նաև Հյուսիսային Կովկասի բնիկ ազգությունները, որին հետևեց նաև տեղի հայերի մասնակի աքսորը: Հյուսիսային Կովկասի տարբեր շրջաններից աքսորի ենթարկված հայության գործած «մեղքերի» վրա որոշակի լույս են սփռում 1950-ական թթ. կազմված ԽՍՀՄ ՆԳՆ տեղեկանքները: Այսպես, ԽՍՀՄ տարածքում տեղաբաշխված աքսորյալների հատուկ հաշվառման վերաբերյալ 1953 թ. տեղեկանքներից մեկով Կովկասի սևծովյան ափամերձ շրջաններից աքսորված հայերին պաշտոնական փաստաթղթերում ներկայացված մեղադրանքն էր «դաշնակցական-նացիոնալիստ»: Նշված շրջաններից հայ աքսորվածների թիվը, ըստ որոշ փաստաթղթերի, կազմել է 15 486 մարդ, մեկ այլ տեղեկանքով՝ 15.508 (5.036 տղամարդ, 5.373 կին, 5.099 երեխա[38])*

*1940-ական թթ. հայ ազգաբնակչության, հիմնականում համշենահայերի, աքսոր տեղի է ունեցել նաև Վրացական ԽՍՀ-ից: Այսպես, 1944 թ. Վրացական ԽՍՀ-ից աքսորյալների ընդհանուր թվաքանակի մեջ նշվում են 1.451 համշենահայեր[39] (380 տղամարդ, 383 կին, 688 ե-*

[37] Տես Бугай Н.Ф., Депортация народов Крыма: документы, факты, комментарии, Москва, 2002, էջ 20:
[38] Տես նույն տեղում, էջ 182:
[39] Տես նույն տեղում:

*բեխա), որոնք մինչև 1950-ական թթ. գտնվում էին ԽՍՀՄ տարբեր աքսորավայրերում:*

*Վրացական ԽՍՀ-ից և ՌԽԴՍՀ Կրասնոդարի երկրամասից հայերի բռնագաղթեցում տեղի ունեցավ նաև 1949–1951 թթ.: Այս աքսորի հիմնական ուղղություններն էին Ղազախստանը, Կիրգիզիան, Ռուսաստանը (Ուրալ, Կրասնոյարսկ և արևելյան շրջաններ): 1950-ական թթ. Միջին Ասիայի հանրապետություններում իրենց պատիժն էին կրում տարբեր տարիների այստեղ ուղարկված հայ աքսորյալները:*

*Ստալինյան բռնաճնշումների ալիքի վրա խորհրդային Ադրբեջանի հայության, այդ թվում՝ նախիջևանահայերի նոր հալածանքներ սկսվեցին հետպատերազմյան 1948–1949 թթ., նրանց որպես «ժողովրդի թշնամի» աքսորեցին Սիբիր*

*1952 թ. Ղազախական ԽՍՀ աքսորավայրերում գտնվում էին 409 համշենահայեր (102 տղամարդ, 102 կին, 205 երեխա[40]), իսկ 488 համշենահայեր՝ Կիրգիզական ԽՍՀ-ում:*

*Ընդհանուր առմամբ, 1953 թ. հունվարի դրությամբ ԽՍՀՄ ՆԳՆ հատուկ բնակության վայրերում 17 տարեկան և բարձր տարիք ունեցող համակազմի մեջ ազգությամբ հայեր էին նշվում 20.238-ը, այդ թվում համշենահայեր՝ 720-ը[41] (որը կազմում էր ԽՍՀՄ հատուկ համակազմի աքսորյալների, ամբողջ թվաքանակի 1,15 տոկոսը):*

*Քաղաքական զանգվածային բռնաճնշումները ԽՍՀՄ-ում դադարեցին Ի. Ստալինի մահից հետո, որին հաջորդեց բռնադատվածների արդարացման և մասնակի վերադարձի գործընթացը: Արդեն 1956 թ. մարտին ԽՍՀՄ ԳԽ հրամանագրով Ղրիմի հայերը, հույները և բուլղարները, իսկ երկու տարի անց նաև թաթարները, ազատվե-*

---

[40] Տես ГАРФ, Ф.Р-9479, оп. 1, д. 436, лл. 111–112.
[41] Տես Бугай Н.Ф., նշվ. աշխ., էջ 171:

ցին աքսորավայրերին հատուկ պարետային կանոնակարգից՝ առանց Ղրիմի նախկին բնակության վայրեր վերադառնալու իրավունքի: Այդուհանդերձ, ղրիմահայերի շրջանում վերադարձի հույս հայտնվելուն պես, նրանցից շատերը անօրինական ճանապարհով վերադարձան Ղրիմ, մի մասն էլ՝ հարակից Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասեր: Ինչ վերաբերում է համշենահայերին, ապա ԽՍՀՄ ԳԽ 1956 թ. ապրիլի 28-ի հրամանագրով նրանք ևս արդարացվեցին, սակայն առանց բռնագրավված գույքի և բնակության նախկին վայրեր վերադարձի իրավունքի[42]:

1940–1950-ական թթ. ԽՍՀՄ-ում բռնությունների ենթարկված ժողովուրդների արդարացման և իրենց իրավունքներում վերահաստատելու գործընթացն իր մեջ ներառեց պետական իրավական ակտերի մի ամբողջ փաթեթ: Առաջնայինն էր ԽՍՀՄ ԳԽ-ի 1989 թ. նոյեմբերի 14-ի Հռչակագիրը, որով անօրինական և հանցավոր էին ճանաչվում խորհրդային ժողովուրդների նկատմամբ կիրառված բռնության և տեղահանության ակտերը, դրվում էր նրանց իրավունքների ապահովության հարցը:

Ղրիմի ԻԽՍՀ ԳԽ 1991 թ. մարտի 22-ի որոշման համաձայն ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդում ընտրվելու իրավունք ստացան (լրացուցիչ ցանկով) Ղրիմից աքսորված ազգությունների 11 ներկայացուցիչներ, այդ թվում՝ մեկ պատգամավոր հայկական համայնքից[43]: Ղրիմի տեղական և Ուկրաինայի հանրապետության կենտրոնական իշխանությունները մասնակիորեն լուծում էին աքսորված ժողովուրդներին տրամադրվելիք ֆինանսական փոխհա-

[42] Տես նույն տեղում, էջ 193:
[43] Տես նույն տեղում, էջ 45:

*տուցման խնդիրը, հողատարածք էին հատկացնում բնակչինարարության համար:*

*Դեռևս նախապատերազմական տարիներին միութենական հանրապետություններում, մասնավորապես ՌԽՖՍՀ-ում, կյանքի էր կոչվել իրենց պատմական հայրենիքի սահմաններից դուրս բնակվող էթնիկ խմբերի ազգային պահանջմունքներին ու շահերին միտված, այսպես կոչված, արմատավորման (коренизация) քաղաքականությունը:*

*Այդ քաղաքականության դրսևորումներից էին պետական և կուսակցական աշխատանքներում տեղական ազգային խմբերի ներկայացուցիչների, այդ թվում՝ հայերի լայնորեն ներգրավումը:*

*Ազգային փոքրամասնությունների համախումբ բնակության վայրերում ձևավորված ինքնավարության «փոքր ձևեր»-ը՝ ազգային շրջանները, օկրուգները և գյուղխորհուրդները տալիս էին ազգային լեզվի կիրառման լայն հնարավորություն գործավարության ու դատավարության ոլորտներում, մշակութային-լուսավորական և կրթական ապարեզներում*[44]*:*

*Այս միջոցառումները որոշակիորեն նպաստում էին ազգային ինքնության պահպանմանը, իսկ ՌԽՖՍՀ-ի հայաշատ շրջաններում պայմաններ էին ստեղծում հայկական ազգային շրջաններ և գյուղխորհուրդներ ձևավորելու համար:*

*Հյուսիսային Կովկասում, Դոնում և Ղրիմում ձևավորվել էին մի քանի տասնյակ հայկական ազգային գյուղխորհուրդներ և երկու ազ-*

---

[44] Տես Ալեքսանյան Հ., Հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները ՌԽՖՍՀ-ում, Հայոց պատմության հարցեր, № 14, Երևան, 2013, 211–221: Տես նաև Иванцов И. Г., Малоизвестные факты истории Армянского района в 1920-1930-е гг., Армяне юга России: история, культура, общее будущее: материалы Всероссийской научной конференции (30 мая – 2 июня 2012 г., Ростов-на-Дону) /отв. ред. акад. Г.Г. Матишов, Ростов н/Д, 2012, էջ 57:

*գային շրջաններ՝ Հայկական ազգային շրջանը (1925–1953 թթ.)[45] Հյուսիս-Կովկասյան երկրամասի Մայկոպի օկրուգի կազմում և Մյասնիկյանի ազգային շրջանը Դոնում (1926–1963 թթ.)[46]:*

*Թեև հետպատերազմյան 1950–1960-ական թթ. հայկական ազգային շրջաններն ու գյուղխորհուրդները ՌԽՖՍՀ-ում լուծարվեցին, սակայն դրանք երկար տարիներ շարունակ ստանձնել էին հայկական էթնիկ խմբի համախմբման, մշակութային և տնտեսական զարգացման կարևոր դերակատարություն:*

*Հետպատերազմյան տարիներին միութենական հանրապետությունների հայկական համայնքների կրթամշակութային կյանքում նկատվեց որոշ հետընթաց: Դա պայմանավորված էր պատերազմում մարդկային և նյութական ահռելի կորուստներով, առաջնային դարձած վերականգնման դժվարին աշխատանքներով, հայահոծ համայնքներում գործադրված լայնածավալ բռնություններով և այլն: Այս խնդրում որոշակի դեր էր խաղում նաև կոմկուսի որդեգրած ազգերի մերձեցման և ձուլման քաղաքականությունը:*

*Խորհրդահայ համայնքների կրթամշակութային կյանքի հիմնական կենտրոններն էին ՌԽՖՍՀ-ն, Վրաստանը և Ադրբեջանը: Միջինասիական միութենական հանրապետություններում հայկական վերջին կրթամշակութային օջախները փակվել էին դեռևս նախապատերազմյան տարիներին: ԽՍՀՄ եվրոպական մասում, այդ թվում Միության կազմ մտած Մերձբալթյան հանրապետություններում, հայկական կրթամշակութային և համայնքային կառույցներ սկսեցին ձևավորվել միայն 1980-ական թթ. վերջին – 1990-ական թթ. սկզբին:*

---

[45] Տես Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 225–232:
[46] Տես В семье единой, Мясниковский райисполком, Ростов-на-Дону, 1989, էջ 8.

*ՌԽՍԴՍՀ տարածքում հայկական կրթամշակութային կյանքը հիմնականում կազմակերպված էր Դոնի, Կուբանի և Հյուսիսային Կովկասի հայաշատ քաղաքային և գյուղական շրջաններում:*

*Դոնի հայկական կրթական և մշակութային հաստատությունների թվաքանակը 1930-ական թթ. վերջից սկսեց կրճատվել՝ երկրամասում գործում էին հայկական 15 դպրոցներ (8-ը՝ Մյասնիկյանի ազգային շրջանի գյուղերում), փակվեց հայկական թատրոնը: 1950-ական թթ. սկզբին Մյասնիկյանի ազգային շրջանի հայկական դպրոցներում հայերենին զուգահեռ բացվեցին նաև ռուսերեն կրթությամբ դասարաններ, իսկ 1956/1957 ուստարում բոլոր հայկական դպրոցներն անցան ռուսերեն կրթական ծրագրի: Սա հարուցեց տեղի հայության դժգոհությունը և միայն 1965 թ. շրջանի դպրոցական կրթական ծրագրերում վերականգնվեց հայոց լեզու առարկայի դասավանդումը*[47]:

*Կուբանի (Կրասնոդարի երկրամաս) հայկական կրթական հաստատությունների ցանցը բավականին մեծ էր պայմանավորված մեծաթիվ հայ բնակչությամբ. «Երկրամասի հայկական դպրոցների ամենածաղկուն տարիներն են 1930–1955 թթ., երբ համարյա բոլոր հայաբնակ գյուղերում և գյուղակներում, բազմաթիվ հայ բնակչություն ունեցող քաղաքներում գոյություն է ունեցել 134 հայկական դպրոց: Դրանցից 81-ը եղել է տարրական, 39-ը՝ 7–8-ամյա և 14-ը՝ միջնակարգ (10-ամյա)»*[48]:

*1953 թ. Կրասնոդարի երկրամասի կազմում գտնվող Հայկական ազգային շրջանի լուծարումից հետո երկրամասի հայկական դպրոցների թիվը նկատելիորեն կրճատվել է: Սա այն դեպքում, երբ հետպա-*

---

[47] Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России (25–27 ноября 2003 г.), Москва, 2006, էջ 268:

[48] Անտոնյան Ա., Համշենահայության պատմությունից, Բանբեր Հայաստանի արխիվների, № 3 (55), 1979, էջ121:

տերազմյան բոլոր մարդահամարների տվյալներով, ինչպես արդեն նշվել է, Կրասնոդարի երկրամասի հայության թվաքանակն անշեղ աճել է: Դպրոցներում մտցվեց ռուսական կրթական ծրագիր, իսկ հայերենը դասավանդվում էր որպես առանձին առարկա: Որոշ տվյալներով եթե երկրամասի հայկական դպրոցների թիվը 1951 թ. 140 էր, ապա 1967 թ.՝ 12, իսկ 1992 թ.՝ 3[49]:

Հյուսիսային Կովկասի հայաշատ կենտրոններ Պյատիգորսկում, Կիսլովոդսկում, Վլադիկավկազում, Ստավրոպոլում և բազմաթիվ այլ բնակավայրերում ազգային կյանքի օջախների դեր կատարող հայկական կրթական հաստատությունները հայրենանվեր գործունեություն ծավալեցին ընդհուպ մինչև պատերազմը: Դպրոցների զգալի մասը պատերազմի և հետպատերազմյան առաջին տարիներին լուծարվեցին: Պյատիգորսկի հայկական դպրոցը փակվել է հետպատերազմյան տարիներին, իսկ Կիսլովոդսկի հայկական դպրոցը, որի հիմնադրման հարցում մեծ է եղել Վ. Տերյանի աջակցությունը, գործեց մինչև 1940-ական թթ. կեսերը[50]: Տևական ընդմիջումից հետո՝ 1972 թ., տեղի հայ մանկավարժների ջանքերով Կիսլովոդսկի երեք դպրոցներում կազմակերպվեցին հայոց լեզվի ֆակուլտատիվ խմբեր[51], որոնք սակայն գործեցին ընդամենը մեկ տարի:

Վերոնշյալ փաստերը ցույց են տալիս, որ Խորհրդային Ռուսաստանի հայ համայնքներում նկատվել է ազգային-կրթական գործի շարունակական անկման միտում:

---

[49] Տես Тер-Саркисянц А., նշվ. աշխ, էջ 295:

[50] Տես Армяне Ставрополья и Терека, под общ. ред. Акопяна В. З., Пятигорск, 2007, էջ 16–17; Տես Акопяна В. З., Церковь, ставшая символом общины, Չամайнк, вып. 3, Минеральные Воды, 1996, էջ 5:

[51] Տես Акопян Т., «Язык-сердце народа», Չамайнк, вып. 3, Минеральные Воды, 1996, էջ 21–22:

*ՌԽՖՍՀ հայկական կրթամշակութային հաստատությունների շարքում ուրույն դերակատարությամբ առանձնանում է հանրահայտ Լազարյան ինստիտուտի հարկի տակ 1921–1953 թթ. գործունեություն ծավալած Խորհրդային Հայաստանի մշակույթի տունը: Այն դարձավ Ռուսաստանում հայկական մշակույթի խոշոր կենտրոն՝ ներկայացնելով Խորհրդային Հայաստանի և հայ ժողովրդի ձեռքբերումները:*

*Մշակույթի տանը գործում էր գրադարան, հրատարակչություն, թանգարան, կանոնավոր կերպով կազմակերպվում էին հասարակական-քաղաքական, գրական և երաժշտական երեկոներ, նկարիչների ցուցահանդեսներ, որոնց մասնակցում էին նաև մոսկվահայերը:*

*Խորհրդային Հայաստանի մշակույթի տան գործունեության վերաբերյալ 1946 թ. կազմված տեղեկանքի համաձայն հաստատության հիմնական նպատակն էր Հայաստանի համար վերապատրաստել թատերական գործի մասնագետներ: Լրացուցիչ ֆինանսական միջոցներ հայթայթելու և հայկական մշակույթի ժողովրդականացման նպատակով պարբերաբար կազմակերպվում էին ցուցադրական համերգներ, երեկոներ, դասախոսություններ և զեկույցներ Հայաստանի պատմության վերաբերյալ: Մշակույթի տունն ուներ 300 տեղանոց համերգային դահլիճ, գրադարան-ընթերցարան, ցուցասրահներ, մի քանի լսարաններ: Գործում էին կոմպոզիտորական, ռեժիսորական, պարարվեստի, նկարչության և քանդակագործության բաժինները (ստուդիա), ուր զբաղված էին 42 մարդ[52]:*

*Սկսած 1946 թ. Հայաստանի մշակույթի տանը Ռ. Սիմոնովի ղեկավարությամբ կազմակերպվել են ռեժիսորական դասընթացներ, որոնց շրջանավարտները (Ա. Արմենյան, Տ. Վարդազարյան, Ռ. Մի-*

[52] Տես ЦАОПИМ (Централный архив общественно-политической истории Москвы). ф. 635, оп. 1, д. 886, л. 15.

նայան, Վ. Վարձիգույան և այլք) երկար տարիներ ղեկավարել են Հայաստանի շրջանային թատրոնները: Նույնպիսի դասընթացներ են կազմակերպվել նաև կոմպոզիտորների, նկարիչների, կինոռեժիսորների և գրողների համար:

Օրինակ, 1946–1949 թթ. Ռ. Սիմոնովի և Վ. Փափազյանի ղեկավարությամբ անցկացվել են երիտասարդ կինոռեժիսորների կատարելագործման կուրսեր, որոնց մասնակցել են Յ. Երզնկյանը, Լ. Վաղարշյանը, Գ. Սարկիսովը և ուրիշներ:

Առանձին ուսումնական դասընթացներ են կազմակերպվել նաև երիտասարդ հայ կոմպոզիտորների համար, որին մասնակից են դարձել Ա. Բաբաջանյանը, Ա. Հարությունյանը, Է. Միրզոյանը, Ա. Խուդոյանը և ուրիշներ:

Երիտասարդ հայ գրողների և նկարիչների գործուղումը մշակույթի տուն 1949–1950 թթ. կարևոր նշանակություն է ունեցել նրանց ստեղծագործական վերելքի համար: Հայ ստեղծագործողների խմբում են եղել Ս. Կապուտիկյանը, Գ. Էմինը, Մ. Մարգարյանը, Ա. Սահինյանը, Կ. Վարդանյանը, Ա. Պապյանը և ուրիշներ:

Հայաստանի մշակույթի տան կարևոր առաքելություններից մեկն էլ ՌԽՖՍՀ և մյուս միութենական հանրապետությունների մշակույթի հետ ծանոթությունն էր: Այդ նպատակով կազմակերպվում էին թեմատիկ ցուցահանդեսներ Հայաստանի ստեղծագործողների և Մոսկվայում սովորող հայ ուսանողության համար[53]:

Մոսկվայում Խորհրդային Հայաստանի մշակույթի տան 1944–1950 թթ. գործունեության վերաբերյալ տնօրեն Ս. Սարուխանյանի զեկույցի համաձայն՝ ստեղծագործական դասընթացներով անցել են 99 նկարիչ, կոմպոզիտոր, ռեժիսոր, քննադատ, գրող, դրամատուրգ,

[53] Տես Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, Ереван, 1982, էջ 124:

*ճարտարապետ, երաժիշտ և այլն: Անցկացվել են ավելի քան 300 գեղարվեստական երեկոներ և համերգներ[54]:*

*1953 թ. Խորհրդային Հայաստանի մշակույթի տունը դադարեց գործելուց՝ խորը հետք թողնելով հայ մշակույթի զարգացման և տարածման գործում:*

*1960-ական թթ. հայ և ռուս գիտնականների ու մշակութային գործիչների ջանքերով, Հայկական ԽՍՀ և Ռոստովի մարզային իշխանությունների աջակցությամբ կանխվեց հայկական պատմաճարտարապետական մեծարժեք Սուրբ Խաչ վանական համալիրի քանդման փորձը: Կատարվեցին վերականգնողական աշխատանքներ և 1972 թ. բացվեց Հայ-ռուսական բարեկամության Սուրբ Խաչ թանգարանը, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության պատմության ցուցանմուշներով[55]:*

*Բազմաթիվ անվանի հայազգի գործիչներ մեծ ավանդ են ներդրել Ռուսաստանի և Ուկրաինայի պետական-կուսակցական, հասարակական, գիտական-մշակութային ասպարեզներում: Այս շարքում կարելի է թվարկել պետական խոշոր գործիչներ Ա. Միկոյանին, Ս. Ակոպովին, Ի. Թևոսյանին, Ա. Պետրոսյանցին, Լ. Կոստանդովին, Ս. Սիտարյանին և այլոց, գիտական ինստիտուտների տնօրեններ ու գիտական դպրոցների հիմնադիրներ, մեծանուն գիտնականներ Կ. Ծոլկինին (Կ. Մնաաքյան), Ս. Քոչարյանցին, Ա. Չիլինգարովին, Ա. Հարությունովին, Վ. Թութեյանին, Լ. Աղաևյանին, Ն. Գերսևանովին, Հ. Օրբելուն, Ի. Եղիազարովին, Ս. Բախուդարովին, Ռ. Ավանեսովին, Ա. Իոսիֆյանին, Ի. Կնունյանցին, Ա. Թախթաջյանին, Գ. Շահնազարովին, Ե. Հասրաթյանին, Յ. Օսիպյանին (ԽՍՀՄ և ՌԴ Գի-*

[54] Տես նույն տեղում, էջ 125:

[55] Տես 225-летию основания города Нахичевани-на-Дону и сел Мясниковского района Ростовской области, Ростов-на-Дону, 2004, էջ 77:

տությունների Ակադեմիայի փոխպրեզիդենտ), Ա. Աղանբեկյանին, Բ. Բաբայանին և այլոց:

Մշակույթի և արվեստի ականավոր գործիչներ էին Մ. Շահինյանը, Ի. Շապոշնիկովը (Ե. Փափախչյան), Կ. Հալաբյանը, Ռ. Սիմոնովը, Ե. Սիմոնովը, Լ. Կուլիջանովը, Դ. Նալբանդյանը, Է. Գրիկուրովը, Պ. Լիսիցյանը, Զ. Դոլուխանովան, Վ. Մերժանովը. Ա. Խաչատրյանը, Է. Խաչատրյանը, Ա. Բաբաջանյանը, Մ. Թարիվերդիևը, Ա. Հեքիմյանը, Ա. Ջիգարխանյանը, Լ. Ենգիբարովը, Է. Քյուրայանը, Ռ. Նահապետովը, Ռ. Աղամիրզյանը և բազում այլք: Ուկրաինայի ԽՍՀ մշակույթի ականավոր գործիչներ էին Թ. Ավետիքյանը, Թ. Դալուստյանցը. Ս. Փարաջանովը, Ռ. Բալայանը և այլք:

*
* *

Ռուսաստանը, Ուկրաինան և Բելոռուսը խորհրդային իշխանության վերջին տարիներին և դրանից հետո դարձան հայության արտագաղթի հիմնական ուղղություններից մեկը: Արցախյան ազգային-ազատագրական պայքարը նոր լիցք հաղորդեց խորհրդային հանրապետությունների հայկական համայնքների զարթոնքին, նպաստեց հայության հասարակական և ազգային-մշակութային կյանքի վերելքին, որը հնարավոր դարձավ երկրում ընթացող ժողովրդավարացման և վերակառուցման քաղաքականության պայմաններում: 1980-ական թթ. վերջին – 1990-ական թթ. սկզբին վերոգրյալ հանրապետությունների հայության ավանդական և նորաստեղծ համայնքներում սկսեցին ձևավորվել նոր ազգային-համայնքային, կրթական-լուսավորական, մշակութային կազմակերպություններ ու կենտրոններ: Այսպես. Մոսկվայում հիմնադրված ու գործունեություն ծավալած ասա

ջին հայկական կազմակերպություններից էին «Ղարաբաղ» կոմիտեն (1988 թ.), «Մաշտոց» ընկերությունը (1988 թ.), «Բարև ձեզ» (1988 թ.)[56], ապա մշակութային-լուսավորական «Հյուսիսափայլ» միավորումը (1988 թ.)[57] և այլն: Անմիջապես սկսվել է այդ կազմակերպությունների համախմբման և տարբեր համակարգող խորհուրդների ձևավորման գործընթացը, որն ավարտին է հասել 1989 թ. հունիսի 20–29-ին ձևավորված Մոսկվայի քաղաքային հայկական մշակութային կազմակերպության հիմնումով: Վերջինս, հավակնելով իրականացնել համայնքային կառույցի գործառույթներ, գոյատևել է մեկ տարի՝ մինչև 1990 թ. հունիսը:

Լենինգրադում 1989 թ. ստեղծվել էր Հայկական մշակույթի բարեկամների լենինգրադյան ընկերությունը, իսկ 1990 թ. սկսել է գործել «Ծիծեռնակ» վերականգնողական կենտրոնը և այլք: Դոնում վերածնվել է «Նոր Նախիջևան» մշակութային լուսավորական միությունը, իսկ 1989 թ. անցկացվել է հասարակական միջոցառում նվիրված Դոնի հայ գաղութի հիմնադրման 210-ամյակին:

Հայկական մշակույթի վերածննդի համար նկատելի դերակատարություն են ունեցել Հյուսիսային Կովկասում 1980 ական թթ. վերջին հիմնված հայկական մշակութային-լուսավորական կազմակերպությունները՝ Մ. Մաշտոց միությունը (Կրասնոդար), «Էրեբունի»-ն (Ստավրոպոլ), «Արմավիր»-ը (Արմավիր), «Ցանք»-ը և Հայ ազգային մշակույթի կենտրոնը (Անապա), «Համշեն»-ը (Տուապսե), «Սևան»-ը (Սոչի), «Անի»-ն (Գելենջիկ), «Լույս»-ը (Նովոռոսիյսկ), «Արև»-ը (Աստրախան), «Կռունկ»-ը (Կիսլովոդսկ), «Սուրբ Խաչ»-ը (Բուդյոննովսկ),

[56] Տես ЦАОПИМ, ф. 4, оп. 218, д. 157, лл. 8–26.
[57] Տես Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 358–359:

«Աղբյուր»-ը (Նալչիկ), «Նաիրի»-ն և «Էրեբունի»-ն (Վլադիկավկազ) «Բարեկամություն»-ը (Մայկոպ) և այլք:

Դեպի Սիբիրի և Հեռավոր Արևելքի երկրամասեր հայության նկատելի հոսքը և հայության թվաքանակի մեծացումը՝ նախապայմաններ է ստեղծել տեղերում ձևավորելու կազմակերպված ու ստվար հայկական համայնքներ: Այդպիսի կառույցներից էին դեռևս 1988 թ. ստեղծված Յակուտիայի հայերի միությունը, ապա Կրասնոյարսկի, Իրկուտսկի, Օմսկի, Օրենբուրգի, Նովոսիբիրսկի համայնքային ու հասարակական-մշակութային կազմակերպությունները:

Ուկրաինայում նույնպես հայկական տարաբնույթ կազմակերպությունների հիմնումը սկիզբ է առել 1980-ական թթ. վերջին: 1988 թ. Խարկովում հիմնվել է հայ-ուկրաինական բարեկամության ակումբ, Մաշտոցի անվան հայ մշակութային ընկերություն, որին կից 1991 թ. բացվել է «Հայք» գրական-երաժշտական ակումբ, իսկ Լվովում սկսել է գործել հայկական մշակութային «Աղբյուր» ընկերությունը (1988 թ.): 1989 թ. հիմնվել է Կիևի հայկական միավորումը, 1991 թ.՝ Դնեպրոպետրովսկի Սբ. Գր. Լուսավորչի անվան Հայկական մշակույթի ընկերությունը և այլն: 1989 թ. Սիմֆերոպոլում հիմնվել է ղրիմահայերի «Լույս» մշակութային միությունը, որի հիմքի վրա 1991 թ. ձևավորվել է Ղրիմի հայերի միությունը[58]:

Կիևի «Հայաստանի բարեկամներ» հասարակական կազմակերպությունը 1989 թ. հրատարակել է «Համայնք» և «Ազատամարտ» թերթերը, իսկ 1991 թ. Ղրիմում վերկանգնվել է «Մասյաց աղավնի» թերթի հրատարակությունը[59]:

---

[58] Տես Григорьянц В. Е., Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы. Историческое наследие Крыма. 2004, № 5, էջ 149:
[59] Տես Աթյան Մ., Հայ տպագիր խոսքը Ուկրաինայում, Օդեսա, 2012, էջ 10–12:

*Բելոռուսական ԽՍՀ-ում հայ համայնքը կազմակերպական տեսք է ստացել 1989–1990 թթ., իսկ ավելի ուշ՝ մայրաքաղաք Մինսկում հիմնվել և գործել են «Հայաստան» կրթամշակութային ընկերությունը, հայկական կիրակնօրյա դպրոցը:*

## *բ. Միջինասիական խորհրդային հանրապետություններում*

*1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով՝ միջինասիական միութենական հանրապետություններում միասին բնակվում էր 61.111 հայ: Ըստ հանրապետությունների հայ բնակչության թվաքանակն ուներ հետևյալ պատկերը. Ուզբեկական ԽՍՀ-ում՝ 27.370[60], Թուրքմենական ԽՍՀ-ում՝ 19.696[61], Ղազախական ԽՍՀ-ում՝ 9.248[62], Կիրգիզական ԽՍՀ-ում՝ 1919[63], Տաջիկական ԽՍՀ-ում՝ 2.878 հայ[64]:*

*Ըստ 1970 թ. մարդահամարի՝ միջինասիական հանրապետություններում հայ ազգաբնակչության թվաքանակը շարունակել է աճել և հասել է 76.517-ի: Ստվար հայ բնակչություն ունեին Ուզբեկական, Թուրքմենական և Ղազախական ԽՍՀ-ները: Միջինասիական հանրապետությունների հայ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը քաղաքաբնակ էր: Ուզբեկստանի 34.174 հայ[65] բնակիչների 94,5 տոկոսը քաղաքաբնակ էր, ընդ որում, Տաշքենդում բնակվում էր ավելի քան*

---

[60] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Узбекская ССР, Москва, 1962, էջ 138:
[61] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Туркменская ССР, Москва, 1963, էջ 128:
[62] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Казахская ССР, Москва, 1962, էջ 162:
[63] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Киргизская ССР, Москва, 1963, էջ 128:
[64] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Таджикская ССР, Москва, 1963, էջ 116:
[65] Տես Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, Москва,1973, էջ324:

13 հազար հայ: Սամարղանդի մարզում բնակվում էին 9.280, Ֆերգանայում՝ 3.307, Անդիժանում՝ 2.254 հայեր[66]:

Թուրքմենական ԽՍՀ-ում բնակվող 23.054 հայերից, քաղաքաբնակ էր հայության 97,4 տոկոսը, իսկ մայրաքաղաք Աշխաբադում բնակվում էր թուրքմենահայության կեսից ավելին՝ 11.722 մարդ, իսկ Մարի մարզում՝ շուրջ 5 հազար հայեր:

Ղազախական ԽՍՀ-ում բնակվող 12.814 հայերից գյուղաբնակ էին 24,5 տոկոսը, իսկ Կիրգիզիայի 2.688 հայերի շրջանում այդ ցուցանիշը կազմում էր 52 տոկոս:

Տաջիկական ԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը նույնպես ավելացել էր՝ կազմելով 3.787 մարդ:

1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով Ուզբեկական ԽՍՀ հայությունը կազմում էր ԽՍՀՄ ամբողջ հայության 1 տոկոսը, Թուրքմենական ԽՍՀ հայությունը՝ 0,6 տոկոսը, Ղազախական ԽՍՀ հայությունը՝ 0,4 տոկոսը, իսկ Տաջիկական և Կիրգիզական ԽՍՀ-ների հայությունը՝ 0,1-ական տոկոսը:

1979 թ. Համամիութենական մարդահամարով միջինասիական հանրապետությունների հայության ընդհանուր թվաքանակը կազմում էր 91.147 մարդ, որից՝ Ուզբեկական ԽՍՀ-ում 42.374, Թուրքմենական ԽՍՀ-ում 26.605, Ղազախական ԽՍՀ-ում 14.022, Տաջիկական ԽՍՀ-ում՝ 4.861, Կիրգիզական ԽՍՀ-ում՝ 3.285 հայ բնակիչ:

Նախորդ մարդահամարի համեմատ տարածաշրջանի հայությունը ավելացել էր շուրջ 15 հազար մարդով:

1989 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով միջինասիական հանրապետություններում բնակվող հայության ընդհա-

[66] Տես Այեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների, Հայոց պատմության հարցեր, Երևան, 2012, էջ 292:

*նուր թվաքանակը կազմում էր 111.111 մարդ, որից՝ Ուզբեկական ԽՍՀ-ում՝ 50.537 ԽՍՀՄ հայության 1,1 տոկոսը, Թուրքմենական ԽՍՀ-ում՝ 31.829 կամ ԽՍՀՄ հայության 0,7 տոկոսը, Ղազախական ԽՍՀ-ում՝ 19.119 կամ ԽՍՀՄ հայության 0,4 տոկոսը, Տաջիկական ԽՍՀ-ում՝ 5.651 և Կիրգիզական ԽՍՀ-ում՝ 3.975 մարդ*[67]:

*Ուզբեկական ԽՍՀ-ում բնակվող հայությունը կազմում էր այդ հանրապետության ամբողջ բնակչության 0,25 տոկոսը, իսկ Թուրքմենական ԽՍՀ-ում՝ 0,9 տոկոսը: Ղազախական, Տաջիկական և Կիրգիզական ԽՍՀ-ներում այդ ցուցանիշը կազմում էր յուրաքանչյուրում մոտ 0,1 տոկոս:*

*Այսպիսով, 50 տարում՝ 1939–1989 թթ., միջինասիական միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակը, շարունակաբար աճելով, գրեթե եռապատկվել էր: Հայության թվաքանակը ավելացել է գլխավորապես մեխանիկական տեղաշարժերի հաշվին:*

*Միջին Ասիայի հանրապետություններում իրենց աքսորին են կրել հազարավոր հայեր, որոնք այստեղ են տեղափոխվել բռնաճնշումների արդյունքում, իսկ արդարացումից հետո հիմնականում մշտական բնակություն են հաստատել տարածաշրջանում: Միջին Ասիայի, մասնավորապես, Ղազախստանի խոպան հողերի յուրացման քաղաքականության արդյունքում նույնպես այստեղ բնակություն են հաստատել հարյուրավոր հայ մասնագետներ և աշխատողներ: Այսպես, 1960–1980-ական թթ. զգալիորեն ընդլայնվել է արտագնացության (խոպան) ծավալները դեպի ԽՍՀՄ աշխատուժի պակաս ունեցող տարածքներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «1970-ական*

---

[67] Տես Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной пертеписи населения 1989 г., Москва, 1990, էջ 5:

թթ. մոտավոր հաշվումներով ՀԽՍՀ-ից ամեն տարի սեզոնային արտագնացության է մեկնել մոտավորապես 35–40 հազար մարդ... XX դարի 80-ական թթ. ընդլայնվեցին արտագնացության ուղիները. դրանք ընդգրկում էին ԽՍՀՄ-ի այն տարածքները, որտեղ զգացվում էր աշխատանքային ռեսուրսների խիստ պակաս... այդպիսիք էին Ռուսաստանի հյուսիսային և արևելյան շրջանները, Ղազախստանը և այլն»[68]:

Հատկանշական է, որ 1960–1980-ական թթ. աչքի են ընկել ինչպես Հայաստանի, այնպես էլ միութենական այլ հանրապետությունների հայ ազգաբնակչության միջհանրապետական տեղաշարժերով: Բավական է նշել, որ 1970–1984 թթ. ընթացքում միջինասիական հանրապետություններ են տեղափոխվել շուրջ 12 հազար հայեր, այդ թվում՝ Ղազախստան՝ 4,5, Ուզբեկստան՝ 4, Թուրքմենիա՝ 2, Տաջիկստան՝ 0,8, Կիրգիզիա՝ 0,5 հազար մարդ[69]:

Հետպատերազմյան տարիներին Միջին Ասիայի հայության հոգևոր-մշակութային կյանքի զարգացման համար պայմանները նպաստավոր չէին, փակվել էին եկեղեցիները, դպրոցները, մշակութային և ազգային կառույցները: Միջինասիական խորհրդային հանրապետություններում փակված հայկական եկեղեցիները վերաբացելու հայ հանրության և Սբ. Էջմիածնի խնդրագրերը, որպես կանոն, մնացել են անհետևանք:

Այսպես, կաթողիկոս Վազգեն Ա-ն ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն. Բուլգանինին հասցեագրած նամակում բարձրացրել է

---

[68] Տես Գասպարյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես – XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, պր. 26, Երևան, 2009, էջ 26, 73:

[69] Տես Գրիգորյան Մ., Միգրացիոն պրոցեսները Հայաստանում (1960–1980 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1991, № 5 (581), էջ 49:

*նաև տարածաշրջանի հայկական եկեղեցիների և կրթական հաստատությունների անհրաժեշտության հարցերը. «Ձեր բարձր ուշադրությանն ենք ներկայացնում Խորհրդային Միության ներսում գտնվող, մեծաթիվ հայ բնակչությամբ շրջաններում նոր եկեղեցիների բացման խնդիրը... Գործող եկեղեցի չկա Միջին Ասիայի հանրապետություններում, որտեղ հայ բնակչության թվաքանակը հասնում է մինչև 100 հազարի»: Շարունակելով միտքը՝ Վազգեն Ա-ն, ի թիվս Միության հայաշատ այլ վայրերի, նշել է, որ հայկական գործող դպրոցներ չկան «անդրկասպյան հանրապետություններում, որտեղ մինչև 1937 թ. գոյություն են ունեցել հայկական միջնակարգ դպրոցներ»[70]:*

*Միջին Ասիայի հայության հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը պայմանավորված էր 1988 թ. սկսված արցախյան շարժումով և Ադրբեջանից հայության արտաքսումով: Վերջինիս արձագանքները դրսևորվեցին նաև միջինասիական հանրապետություններում: Ադրբեջանի Ազգային ճակատը և մտավորականությունը, չբավարարվելով հանրապետության տարածքից հայության արտաքսումով և հայկական հուշարձանների նկատմամբ վանդալիզմի դրսևորումներով, հակահայ ջանքերն ուղղեց ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում բնակվող հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններ հրահրելուն:*

*Հակահայ լուրեր և թռուցիկներ տարածելով՝ ադրբեջանական գործակալները տեղական ազգության ներկայացուցիչներին «թունավորում էին» հայ բնակչության դեմ: Ադրբեջանական գործակալների միջամտությամբ հակահայ հուզումներ տեղի ունեցան Թուրքմենական ԽՍՀ-ում (Նեբիտ-Դաղ, Աշխաբադ), Ուզբեկական ԽՍՀ-ում*

[70] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5787, թթ. 1–8:

*(Սամարղանդ), Տաջիկական ԽՍՀ-ում (Դուշանբե), ՌԽՖՍՀ Հյուսիս-Կովկասյան և այլ տարածաշրջաններում*[71]*:*

*Թուրքմենստանում ազգամիջյան հարաբերությունների սրում նկատվեց 1990 թ. հունվարին՝ Բաքվի հայերի ջարդերից և թալանից հետո: Ջարդի ենթարկված Բաքվի հայության մի մասի ժամանակավոր տեղափոխումը թուրքմենական Կրասնովոդսկ նավահանգիստ դարձավ հակահայկական նոր հանրահավաքների և տրամադրությունների առիթ: Հակահայկական տրամադրությունները ծայրաստիճան սրվեցին, երբ լուրեր տարածվեցին, թե Թուրքմենական ԽՍՀ կառավարությունը համաձայնություն է տվել փախստական հայերին տեղավորել հանրապետության տարածքում:*

*Թուրքմենստանում այդ տրամադրությունները կտրուկ նվազեցին, երբ Բաքու մտցվեցին խորհրդային զորքեր, իսկ հեռուստաեթերով հայերի պաշտպանությամբ հանդես եկավ հանրապետության ղեկավար Ս. Նիյազովը, ում կոչն ուղղված էր Թուրքմենական ԽՍՀ-ում առողջ ազգամիջյան հարաբերությունները պահպանելուն և հայերի ունեցած ներդրումը երկրի զարգացման տարբեր ոլորտներում գնահատելուն*[72]*:*

*Հակահայ հիստերիայի ալիքը 1990 թ. փետրվարին արագորեն տարածվեց նաև Տաջիկական ԽՍՀ-ում: Դուշանբեում կեղծ լուրեր տարածվեցին՝ իբրև թե Բաքվի հայ փախստականներին տրամադրվելու են քաղաքի շահագործման պատրաստ բնակարանները, որը հանգեցրեց անկարգությունների: Տաջիկական ԽՍՀ ղեկավարության*

---

[71] Տես Ходжабекян В., Демография и проблемы занятости в Армении с начала XIX века до середины XXI века, Ереван, 2006, էջ 180:

[72] Տես Григорьянц В. Е., Армяне Средней Азии: История, современное положение, перспективы, Ереван, 1994, էջ 40:

և առաջադեմ մտավորականության ջանքերով հնարավոր դարձավ կանխել վտանգավոր հետևանքներով հղի իրադարձությունները:

Միջին Ասիայի հանրապետություններում բնակվող և ապաստանած հայության նկատմամբ բռնություններին հաջորդեց վերջ դնել այս տարածաշրջանում հնաբնակ հայության ունեցած ստեղծագործ աշխատանքի ու թողած բարի անվան շնորհիվ: Բանն այն է, որ 1940-1980-ական թթ. միջինասիական միութենական հանրապետությունների հայկական համայնքները, այստեղ գործուղված հայ մասնագետները տեղերում ակտիվորեն ներգրավվել էին պետական, արտադրական, կրթական, գիտական, մշակութային և հասարակական կյանքում՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ, նշանակալի ներդրում ապահովելով համապատասխան ոլորտներում:

Այսպես, Ղազախական ԽՍՀ անվանի հայ գործիչների թվում էին Ս. Խաչատուրովը (Ղազախստանի Պետպլանի նախագահի տեղակալ, իսկ 1962-1966 թթ. կառավարության նախագահի տեղակալ), Ա. Վարդանյանը (Ղազախստանի գունավոր մետալուրգիայի մինիստրի տեղակալ, 1966-1975 թթ. Ղազախական ԽՍՀ կառավարության նախագահի առաջին տեղակալ), Էրիկ Ղուկասովը (1978-1992 թթ. Ղազախստանի կառավարության ղեկավարի տեղակալ, ապա՝ երկրի փոխվարչապետ): Ե. Եժիկով-Բաբախանովը (Մոնտաժային և հատուկ շինարարական աշխատանքների գծով մինիստր, իսկ 1990-1993 թթ. Ղազախստանի կառավարության ղեկավարի տեղակալ, փոխվարչապետ)[73]: Երկրի գործադիր իշխանության մեջ երկարամյա աշխատանք են տարել Կապի մինիստրի տեղակալ Գ. Առաքելովը, Ավտոճանապարհների մինիստրի առաջին տեղակալ Մ. Տեր-Վար-

[73] Տես Всемирный армянский атлас, Москва, 2015, էջ 163:

դանուլը, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ, մշակույթի և գիտության գործիչներ:

Թուրքմենական ԽՍՀ-ում հայերը նկատելի դերակատարություն են ունեցել հանրապետության տնտեսության տարբեր ճյուղերում ղեկավար պաշտոններ զբաղեցնելով հատկապես նավթագազային արդյունաբերության ոլորտում: 1940-ական թթ. Թուրքմենական ԽՍՀ կառավարության ղեկավարի տեղակալ էր Լ. Սևյանցը, իսկ Ա. Սահակյանը Պետպլանի նախագահն էր:

1953–1961 թթ. «Թուրքմեննավթ» միավորումը գլխավորել է Պ. Մռավյանը, նույն միավորումում 1950–1980-ական թթ. պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել նաև Վ. Ավագյանը և այլք:

Թուրքմենական ԽՍՀ-ում անվանի երկրաբաններ էին Ի. Մելիք-Փաշաևը և ակադեմիկոս Գ. Գաբրիելյանցը, ովքեր տասնյակ տարիներ ղեկավարել էին երկրաբանական հետազոտությունները՝ նավթագազային պաշարների հայտնագործման ուղղությամբ: Գ. Գաբրիելյանցը երկար տարիներ Թուրքմենական ԽՍՀ կառավարությանը կից Երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության գլխավոր երկրաբանն էր, իսկ 1989–1991 թթ. ԽՍՀՄ Երկրաբանության մինիստրը: Ի. Մելիք-Փաշայանը երկար տարիներ «Թուրքմեննավթի» գլխավոր երկրաբանն էր, ապա Ադրբեջանի նավթի արդյունահանման գիտահետազոտական ինստիտուտի լաբորատորիայի ղեկավարը:

Կիրգիզական ԽՍՀ փոքրաթիվ հայ համայնքը և այնտեղ գործուղված, ապա հաստատված հայ մասնագետները ևս նկատելի դերակատարություն են ունեցել հանրապետության կյանքի տարբեր ասպարեզներում: Դրանց շարքում իրենց երկարամյա աշխատանքային գործունեությամբ բարի համբավ են վաստակել Գևորգի Բաղրամովը

(1947–1953 թթ. Կիրգիզիայի Գյուղատնտեսության մինիստր, Վլադիմիր Պետրոսյանցը 1963–1979 թթ. Կիրգիզիայի Առողջապահության մինիստր, Գուրգեն Զարիֆյանը 1947–1950 թթ. Առևտրի մինիստրի տեղակալ: Տասնյակ հայեր նկատելի ներդրում ունեցան Կիրգիզիայի մշակույթի, գիտության, արվեստի և տնտեսության տարբեր ճյուղերում:

Ուզբեկական ԽՍՀ պետական մարմիններում աշխատանքային փայլուն ուղի են անցել Հ. Սահակովը (Ֆերգանայի մարզխորհրդի նախագահ, կառավարությանը կից ներգաղթյալների հատուկ բաժնի պետ), Ա. Սարգիսովը (ոռոգման, էներգետիկ և տափաստանների յուրացման ծրագրերի ղեկավար, ԽՍՀՄ-ում մեծությամբ երրորդ Ֆարհադի ՀԷԿ-ի կառուցման աշխատանքների ղեկավար, լենինյան մրցանակակիր), Հ. Գաբրիելյանցը (1965–1972 թթ. Ուզբեկական ԽՍՀ կառավարության նախագահի տեղակալ), Գ. Սարկիսովը (Տաշքենդի քաղգործկոմի նախագահի տեղակալ) և այլք: Ուզբեկստանում հանրաճանաչ են ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Թամարա Խանումը (Պետրոսյանց), նկարիչներ Վ. Երեմյանը, Ն. Կարախանը, Ռ. Աղբալյանը, երաժշտագետներ Ա. Պետրոսյանցը, Տ. Գոլովյանցը և այլք:

Հայերը լայնորեն ներգրավված էին հանրապետության գիտակրթական ասպարեզում, ինչի ակնառու վկայությունն էր, որ 1967 թ. դրությամբ Ուզբեկստանի գիտնականների շարքերում հայերը ներկայացված էին 12 գիտության դոկտորներով և 84 գիտության թեկնածուներով[74]:

Տաջիկական ԽՍՀ-ում նույնպես հայ անվանի գործիչների ներդրումը հանրապետության կյանքի տարբեր ոլորտներում ակնառու էր: Հայազգի մասնագետները տարբեր տարիների կարևոր պաշտոններ

[74] Տե՛ս նույն տեղում, էջ 376:

էին զբաղեցնում կուսակցական և պետական օղակներում (Պետպլանում, գիտության ու արտադրության մեջ): Հանրապետությունում ամենաբարձր պաշտոնը զբաղեցրած հայազգի գործիչը այդ հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ստալինյան բռնությունների զոհ Սուրեն Շադունցն էր: Հետպատերազմյան տարիներին Տաջիկական ԽՍՀ Կագանովիչաբադի շրջկոմի առաջին քարտուղար, Լենինաբադի մարզկոմի քարտուղար, ապա գյուղատնտեսության մինիստրի տեղակալ, արտադրության և գյուղատնտեսական ապրանքների պահեստավորման մինիստր, իսկ 1960–1970-ական թթ. Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալն էր Հ. Միրզայանցը: 1946–1948 թթ. Տաջիկական ԽՍՀ Ներքին գործերի մինիստրի տեղակալն էր Գ. Միքայելյանը: Հանրապետության Շաարտուզի շրջկոմի առաջին քարտուղարի, իսկ 1968–1978 թթ. Տաջիկական ԽՍՀ կոմկուսի Կենտկոմի գործերի կառավարչի տեղակալի պաշտոնն է զբաղեցրել Ս. Հարությունովը:

Բեղուն աշխատանքային ուղի է անցել Սամարղանդում ծնված, Էդուարդ Միկիրտիչևը, ով Տաջիկական ԽՍՀ տարբեր շրջաններում զբաղեցրել է շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոններ, իսկ 1982–1985 թթ. եղել է հանրապետության Շինարարության մինիստրը:

Հայտնի խորհրդահայ կոմպոզիտոր, Սերգեյ Բալասանյանը մեծ ներդրում է ունեցել Տաջիկական ԽՍՀ մշակութային կյանքում՝ հանդիսանալով հանրապետության կոմպոզիտորների միության վարչության առաջին նախագահը, ապա արժանացել է Տաջիկական ԽՍՀ և ՌԽԴՍՀ ժողովրդական արտիստի կոչման:

ԽՍՀՄ փլուզման գործընթացով, «վերակառուցման» քաղաքականության ձախողմամբ, ազգային շարժումների ուժեղացմամբ և ազգամիջյան բախումներով, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարաց-

*մամբ. Սպիտակի աղետալի երկրաշարժով և այլ պատճառներով պայմանավորված ինչպես միութենական մյուս հանրապետություններից, այնպես էլ միջինասիական հանրապետություններից տեղի ունեցավ հայության արտահոսք տարբեր ուղղություններով: Վ. Խոջաբեկյանի տվյալներով 1988 թ. հետո միջինասիական տարածաշրջանի հայ փախստականների թիվը Ուզբեկստանից կազմել է 900, Տաջիկստանից՝ 600 և այլն*[75]*:*

*1980-ական թթ. վերջին և 1990-ական թթ. սկզբին միջինասիական հանրապետությունում սկսեցին կազմավորվել բազմաբնույթ հասարակական-մշակութային կազմակերպություններ, որոնք էլ ուղղորդեցին հայկական համայնքների կյանքը: Այսպես, Ուզբեկստանի Հայ ազգային մշակութային կենտրոնը հիմնվել է 1989 թ., որի նախաձեռնող խմբի ղեկավարն էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Թամարա-Խանումը (Պետրոսյանց), իսկ կառույցի ղեկավարը միջինասիայի հայ համայնքների պատմության հետազոտող Ա. Գրիգորյանը: 1989 թ. հիմնվել է նաև Տաջիկստանի՝ Մեսրոպ Մաշտոցի անվան հայ համայնքային կառույցը*[76]*: Հայկական համայնքային և մշակութային կազմակերպությունների ստեղծումը Միջին Ասիայում լայն թափ է հավաքել հետխորհրդային տարիներին:*

---

[75] Տես նույն տեղում:
[76] Տես Амелин В., Межнациональные конфликты в республиках Средней Азии на рубеже 80–90-х годов, Москва, 1993, էջ 105, 135:

### *գ. Մերձբալթյան հանրապետություններում և Մոլդովական ԽՍՀ-ում*

*1959 թ. Համամիութենական մարդահամարը հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ առաջին անգամ տվյալներ արձանագրեց նաև միութենական հանրապետության կարգավիճակով ԽՍՀՄ կազմի մեջ ընդգրկված Մերձբալթյան հանրապետություններում՝ Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում, ինչպես նաև Մոլդովայում: Մարդահամարի արդյունքներով՝ Մերձբալթյան միութենական հանրապետություններում միասին բնակվում էին 2.179 հայեր, որից՝ Լիտվական ԽՍՀ-ում՝ 471, Լատվիական ԽՍՀ-ում 1.060 և Էստոնական ԽՍՀ-ում 648, իսկ Մոլդովական ԽՍՀ-ում՝ 1.218 հայ*[77]*:*

*1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով, բացառությամբ Էստոնական ԽՍՀ-ի, մերձբալթյան մյուս հանրապետություններում և Մոլդովական ԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակն աճել էր: Այսպես, Լիտվական ԽՍՀ-ում բնակվում էին 508, Լատվիական ԽՍՀ-ում 1.511, Էստոնական ԽՍՀ-ում 604*[78]*:*

*Մոլդովական ԽՍՀ հայության թվաքանակը կազմում էր 1.336 մարդ: Այս հանրապետությունների հայության գերակշիռ մասը քաղաքաբնակ էր, միայն Մոլդովական ԽՍՀ-ում էր գյուղաբնակ հայության կշիռը փոքր-ինչ նկատելի՝ կազմելով 16 տոկոս: Մոլդովական ԽՍՀ հայության ընդամենը 36 տոկոսի համար էր հայերենը մայրենի լեզու, գերակշիռ մասը, որպես մայրենի լեզու, նշել էր ռուսերենը: Ռու-*

[77] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Молдавская ССР, Москва, 1962, էջ 90:

[78] Տես Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, Москва, 1973, էջ 324:

*սերենի տիրապետությունն ու գործածությունը գերակշռում էր նաև Մերձբալթյան հանրապետությունների հայության շրջանում:*

*1979 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Մերձբալթյան հանրապետությունների հայության թվաքանակը աճել էր ավելի քան հազարով՝ կազմելով 3.713 մարդ: Լիտվական ԽՍՀ-ում բնակվում էին 955, Լատվիական ԽՍՀ-ում՝ 1.913, Էստոնական ԽՍՀ-ում՝ 845 հայ*

*Մոլդովական ԽՍՀ-ում հայության թվաքանակը նույնպես ավելացել էր՝ հասնելով 1.953 մարդու: Ըստ վիճակագրական տվյալների՝ Մերձբալթյան հանրապետությունների ու Մոլդովական ԽՍՀ հայ բնակչության թվաքանակը 1970–1984 թթ. աճել է հիմնականում Հայաստանից և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից հայերի դեպի այդ հանրապետություններ կատարված միգրացիայի հաշվին:*

*1989 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքներով Մերձբալթյան հանրապետություններում ընդհանուր թվով բնակվում էին 6.393 հայեր, որից՝ Լիտվական ԽՍՀ-ում՝ 1.655, Լատվիական ԽՍՀ-ում՝ 3.069, Էստոնական ԽՍՀ-ում՝ 1.669 հայ[79]: Այսպիսով, Մերձբալթյան հանրապետություններում հայության թվաքանակը գրեթե կրկնապատկվել և կազմում էր ամբողջ ԽՍՀՄ հայության 0,14 տոկոսը. Մոլդովական ԽՍՀ-ում հայության թվաքանակը կազմում էր 2.873 մարդ: Մոլդովահայերի մոտ 85 տոկոսը բնակվում էր քաղաքներում, հիմնականում Քիշնևում: Հայերենը մայրենի լեզու էր մոլդովահայերի ավելի քան կեսի համար[80]:*

---

[79] Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների, Սփյուռքագիտության տարեգիրք, Երևան, 2013, էջ 53:

[80] Տե՛ս Алексанян О., Армяне и армянская церковь в Молдавии, Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений, Сб. статей и материалов. Составели: К. Хачатрян, О. Алексанян, Ереван, 2012, էջ 176:

Մերձբալթյան խորհրդային հանրապետություններում նույնպես 1980-ական թթ. վերջին 1990-ական թթ. սկզբին սկսեցին ձևավորվել ազգային-մշակութային կառույցներ:

1988 թ. Լիտվայում հիմնվել է «Գառնի» հայ մշակութային միությունը (նախագահ՝ Օ. Իսան), ապա նաև Լիտվա-Հայաստան ընկերությունը: Լիտվահայ համայնքը զգալի օգնություն է կազմակերպել Սպիտակի երկրաշարժից տուժած և ԼՂ հայրենակիցներին: 1989 թվականից Վիլնյուսում, Կլայպեդայում նաև Վիսագինասում և Կաունասում գործել են հայկական կիրակնօրյա դպրոցներ:

1988 թ. նոյեմբերին Լատվիայի հայության համընդհանուր համագումարում հիմնվել է հայ ազգային-մշակութային կազմակերպությունը՝ Լատվիա-հայկական ընկերությունը (նախագահ՝ գիտության վաստակավոր գործիչ Ս. Գասպարյան), որի նախաձեռնությամբ 1989 թ. գործում էր Ռիգայի հայկական կիրակնօրյա դպրոցը, հրատարակվում «Լույս» տեղեկատվական բյուլետենը:

Վերոնշյալ ընկերությունը հայկական մշակույթը Լատվիայի հայ համայնքի մեջ քարոզելու ու հասարակայնացնելու նպատակով տարիներ շարունակ կազմակերպել է գրական-երաժշտական երեկոներ, գեղարվեստական և բարեգործական ցուցահանդեսներ, որից ստացված հասույթը փոխանցել է հայկական հիմնադրամներին:

1989 թ. Ցիրուլիշիում կառուցվել է առաջին հայկական հուշարձան-աղբյուրը, իսկ 1990 թ. Ռիգայում կանգնեցվել է քանդակագործ Ս. Մուրադյանի հուշարձան-խաչքարը նվիրված Հայոց մեծ եղեռնի 75-ամյակին: Հետխորհրդային տարիներին Լատվիայում հիմնվել են հայկական նոր կազմակերպություններ, որոնք զգալի աշխատանք են կատարել համայնքային կյանքի ակտիվացման գործում:

*Էստոնիան 1980-1990-ական թթ. ընդունեց Սպիտակի երկրաշարժից տուժած, Ադրբեջանից փախստական դարձած և Հայաստանից տեղափոխված հարյուրավոր հայերի, նույն շրջանում էլ սկսեցին ձևավորվել հայկական կառույցները:*

*Էստոնիայում 1987 թ. սկզբնապես հիմնվել է Տալլինի և Էստոնիայի հայերի միավորումը (նախագահ՝ Ա. Դավիդյանց), որի նախաձեռնությամբ Հաապսալու քաղաքի այն տան պատին, որտեղ բնակվել է հայ ժողովրդի բարեկամ, էստոնուհի միսիոներ Աննա Հեդվիգ Բյուլը, փակցվել է հուշատախտակ: 1989 թ. հիմնվել է Տարտուի Խ. Աբովյանի անվան հայկական մշակութային ընկերությունը (նախագահ՝ Ռ. Գրիգորյան), որը հայոց պատմության և արդի հայկական խնդիրների լուսաբանման ուղղությամբ հայ համայնքի մեջ ծավալել է լայն գործունեություն: Հայկական կազմակերպությունների մասնաճյուղեր են գործել նաև Պայդեում և Վալգայում[81]:*

*1991 թ. Տալլինում կազմակերպվել է «Հայաստանի տուն» փառատոնը, որի շրջանակներում իրականացվել են տարաբնույթ մշակութային միջոցառումներ.*

*1989-1991 թթ. Տալլինում հրատարակվել է տեղի Հայկական մշակութային ընկերության «Վահագն» ամսաթերթը: Հայկական այս ընկերություններին կից Տալլին և Տարտու քաղաքներում բացվել են հայկական կիրակնօրյա դպրոցներ[82]:*

*1950-1980-ական թթ. Մոլդովայի հայերի շարքում առանձնահատուկ հեղինակություն և հարգանք է վայելել կուսակցական-պետական գործիչ Արտյոմ Ջեմեջիյանը, որը պատասխանատու պաշտոններ է վարել Քիշնևի քաղկոմում, եղել է Մոլդովական ԽՍՀ Գերա-*

---

[81] Տե՛ս Всемирный армянский атлас, էջ 423:
[82] Տե՛ս Հայ Սփյուռք հանրագիտարան, էջ 171:

*գույն Խորհրդի պատգամավոր, իսկ 1963–1989 թթ. Մոլդովական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղարի առաջին օգնականը:*

*Մոլդովայի հայերի ազգային կյանքի վերակենդանացման, համախմբման ու կազմակերպման գործը սկիզբ է առել 1991 թվականից, երբ համայնքի ղեկավարությունը ստանձնել են Արմեն և Սիմոն Գուլքանյանները[83], որոնց միջոցներով վերանորոգվել է Քիշնևի Սբ. Աստվածածին եկեղեցին:*

*Խորհրդային այս հանրապետությունների անկախացումից հետո տեղերի հայկական համայնքները համախմբվել են, հիմնվել են նոր համայնքային կազմակերպություններ, որոնք շարունակում են իրենց ազգանվեր ու ազգապահպան գործունեությունը:*

### *դ. Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ ներում*

*1959 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Անդրկովկասի միութենական հանրապետությունները՝ Ադրբեջանն ու Վրաստանը, հայ բնակչության թվաքանակով Հայաստանից հետո ամենահայահոծ միութենական հանրապետություններն էին, որտեղ համապատասխանաբար բնակվում էին 442.089 և 442.916 հայեր[84], այսինքն՝ երկու հանրապետություններում միասին բնակվում էին 885.005 հայեր: Ադրբեջանում հայության հոծ զանգվածներով բնակության շրջաններն էին ԼՂԻՄ-ը, պատմական Արցախի հյուսիսային շրջանները, Բաքուն, Կիրովաբադը (Գանձակը), Սումգայիթը և այլն:*

---

[83] Տես նույն տեղում, էջ 413:

[84] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Азербайджанская ССР, Москва, 1963, էջ 134: Всесоюзной переписи населения 1959 года, Грузинская ССР, Москва, 1963, էջ 134: Минасян М., Этнические меньшинства Грузии: потенциал интеграции на примере армянского населения страны, Ереван, 2006, էջ 10:

*Քաղաքաբնակ էին 268.509 հայեր, որից միայն Բաքու քաղաքում (քաղխորհրդին ենթակա բնակավայրերով հանդերձ) բնակվում էին ավելի քան 170 հազար մարդ:*

*Վրաստանում հայության համախումբ բնակության հիմնական շրջաններն էին Ջավախքն՝ իր հարակից շրջաններով, Աջարիան, Աբխազիան, Թբիլիսին և այլն: Քաղաքաբնակ էին 242.399 հայեր, որից միայն Թբիլիսիում բնակվում էին 149.258 մարդ: Աբխազական ԻԽՍՀ-ում բնակվում էին 64.425, Աջարական ԻԽՍՀ-ում՝ 15.830, Հարավ-Օսական ԻՄ-ում՝ 1.555 հայեր:*

*1970 թ. մարդահամարի տվյալներով ԽՍՀՄ տարածքում Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչության թվաքանակի մեծությամբ երկրորդն Ադրբեջանական ԽՍՀ-ն էր: Այստեղ հայ բնակչությունը, նախորդ մարդահամարի համեմատ, աճել էր ավելի քան 40 հազար մարդով և կազմել 483.520 մարդ, որը կազմել է ԽՍՀՄ ամբողջ հայության 13,6 տոկոսը: Ընդ որում, միայն Բաքվում (քաղխորհրդին ենթակա բնակավայրերով հանդերձ) բնակվում էր 207.464 հայ*[65] *կամ ադրբեջանահայության 42,9 տոկոսը:*

*ԼՂԻՄ-ում բնակվում էր Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ հայության 25 տոկոսը, իսկ Նախիջևանի ԻԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակը շարունակում էր նվազել:*

*1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Վրացական ԽՍՀ-ում հայ բնակչության թվաքանակն ավելացել էր 9.393 մարդով՝ կազմելով 452.309 մարդ: Վրացական ԽՍՀ հայության շուրջ 1/3-ը կամ 150.205 մարդ բնակվում էր Թբիլիսիում, Աբխազական*

---

[65] Տես Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, էջ 269:

ԻԽՍՀ-ում՝ 16,5 տոկոսը կամ շուրջ 75 հազար մարդ, Աջարական ԻԽՍՀ-ում՝ 3,4 տոկոսը կամ ավելի քան 15 հազար մարդ:

Վրացական ԽՍՀ-ում բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայության 12,7 տոկոսը: Անդրկովկասյան այս երկու հանրապետություններում միասին բնակվում էին 935.829 հայեր: 1970 թ. դրությամբ ԽՍՀՄ հայության ավելի քան 88 տոկոսը կենտրոնացած էր Անդրկովկասում, որն անգերազանցելի ցուցանիշ էր նաև հաջորդ մարդահամարների ժամանակ:

1979 թ. Համամիութենական մարդահամարով Ադրբեջանի և Վրաստանի խորհրդային հանրապետությունների հայության թվաքանակն առաջին անգամ արձանագրեց նվազում՝ կազմելով համապատասխանաբար 475.486 (Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ բնակչության մոտ 8 տոկոսը) և 448.000 մարդ (Վրացական ԽՍՀ ամբողջ բնակչության մոտ 9 տոկոսը): Մարդահամարը ցույց տվեց հայության արտագաղթի իրողությունն այս հանրապետություններից, որոնք ուղղված էին հիմնականում դեպի Հայաստան և Ռուսաստան:

Այդուհանդերձ, անդրկովկասյան այս հանրապետությունները Հայաստանից հետո ամենաստվար հայ բնակչությունն ունեին ԽՍՀՄ-ում՝ իրենց հայ ազգաբնակչության թվով կազմելով ամբողջ Միության հայության 11,4 տոկոս (Ադրբեջան) և 10,8 տոկոսը (Վրաստան):

1989 թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով Ադրբեջանական ԽՍՀ-ում բնակվող հայության թվաքանակը նվազել էր մոտ 18 տոկոսով՝ կազմելով 390.505 մարդ: Ադրբեջանում հայության թվաքանակի անկումը պայմանավորված էր 1988 թ. ազգային-ազատագրական շարժման ծավալմամբ և այդ հանրապետությունից հայության սկիզբ առած բռնագաղթով: ԽՍՀՄ-ում անցկացված վերջին

*մարդահամարով ադրբեջանահայությունը կազմում էր Միության ամբողջ հայ ազգաբնակչության 8,4 տոկոսը:*

*Նույն դրությամբ Վրացական ԽՍՀ հայ ազգաբնակչության թվաքանակը կրճատվել էր մոտ 3,5 տոկոսով: Սակայն վիրահայությունը դեռևս պատկառելի թիվ էր կազմում՝ 437.211 մարդ կամ ԽՍՀՄ հայության ընդհանուր թվաքանակի 9,5 տոկոսը: Հաջորդող տարիներին հայաշատ այս հանրապետություններից հայության արտահոսքը ավելի մեծ չափերի հասավ, իսկ ադրբեջանահայությունը, բացառությամբ անկախ հռչակված ԼՂՀ-ի հայության, ամբողջովին բռնագաղթվեց:*

*Օգտագործելով խորհրդային ամբողջատիրական համակարգի քաղաքական ու գաղափարական հնարավորությունները՝ այս հանրապետությունների կուսակցական-պետական, հասարակական, գիտական ու այլ շրջանակները մեծածավալ ունենձգություն իրականացրեցին հայկական ժառանգության նկատմամբ՝ փոխելու տարածաշրջանի պատմաժողովրդագրական, մշակութային անցյալն ու դիմագիծը:*

*Հետպատերազմյան տարիներին այս հանրապետությունների հայության ազգային-մշակութային առաջընթացի խոչընդոտները վերացնելուն էր ուղղված կաթողիկոս Վազգեն Ա-ի հայրենանվեր գործունեությունը:*

*1957 թ. սեպտեմբերին, հովվապետական այց կատարելով Ադրբեջանական ԽՍՀ և ԼՂԻՄ, նա կրկին բարձրացրել է հայկական եկեղեցիների վերաբացման և վերանորգման հարցը: Այցի ավարտին կաթողիկոսը Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Կրոնի գործերի պետական խորհրդի (ԿԳՊԽ) լիազորին է փոխանցել հայկական եկեղեցիների ու վանքերի ցանկը՝ դրանք վերաբացելու համար կառավարության առաջ միջնորդություն կատարելու*

նպատակով: Կաթողիկոսը ադրբեջանահայ հավատացյալների և Թեմական խորհրդի միջնորդությամբ խնդրում էր վերաբացել Գանձասարը, Ամարասը, Ստեփանակերտի աղոթատունը, Չոլակ ուխտատեղին (Կիրովաբադի շրջան), Ջաբաթալա, Նախիջևան, Նուխի քաղաքների և Մադրասա գյուղի (Շամախիի շրջան) եկեղեցիները, վերանորոգել Շուշիի եկեղեցին և այլն[86]:

Անդրկովկասի հայկական եկեղեցիները թեմերին վերադարձնելու խնդիրը լուծելու համար Վազգեն Ա-ն 1958 թ. հատուկ նամակով դիմել է նաև ԽՍՀՄ կառավարության նախագահ Ն. Խրուշչովին, ուր նշվում էր. «Սրտի խոր ցավով Մենք պէտք է հաստատենք, որ կայ չափազանց կարեւոր խնդիր մը, որն իր լուծումը բաւարար չափով չէ ստացած առ այսօր: Ան հայ եկեղեցիներու բացման հարցն է... միայն Սովետական Հայաստանի սահմաններուն մէջ ընդամէնը քանի մը եկեղեցիներ ու վանքեր բացուեցան: Մինչդեռ Հիւսիսային Կովկասի, Վրաստանի, Ատրպէյճանի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի մէջ առ այսօր որեւէ մէկ եկեղեցի եւ վանք չէ բացուած... Բոլորին յայտնի է, որ Հայաստանի եւ հարեւան հանրապետութեանց մէջ նախապէս հազարէ աւելի եկեղեցիներ գործած են: Մեր այսօրուան պահանջը անհամեմատ փոքր է, նուազագոյնէն ալ պակաս, անտանապէս՝ Սովետական Միութեան այն շրջաններուն մէջ, որտեղ մեծ թիւով հայեր կ'ապրին, առաւելապէս Հայաստանին դրացի հանրապետութեանց մէջ ընդամէնը քանի մը տասնեակ (երեսուն-քառասուն) եկեղեցի բանալ՝ այսօր գործող 44 եկեղեցիներուն կողքին: Մենք կ'ուզենք մասնայատուկ կերպով ընդգծել, որ այս հարցը, չափազանց համակրելի պատճառնե-

86 ՀԱԱ, ֆ. 409, ց. 3, գ. 129, թթ. 35–41:

*րով, շատ կարևոր հանգամանք մըն է նաև արտասահմանի հայոց աչքերուն մէջ...»*[87]:

*ԽՍՀՄ-ում հակակրոնական քաղաքականությունը նոր սրացում ստացավ հետպատերազմյան շրջանում, որն ուղղված էր եկեղեցիների փակման ու ավերման գործընթացը շարունակելուն, հոգևորականներին նոր հարկային դրույքաչափերով ծանրաբեռնելուն և եկեղեցու գործունեության վրա վերահսկողությունն ուժեղացնելուն:*

*Հայկական եկեղեցիները առանձնապես անմխիթար վիճակում էին Վրացական ԽՍՀ-ում և Ադրբեջանական ԽՍՀ-ում: Այսպես, Թբիլիսիի Սբ. Նշան Սբ. Նիկողայոս հայկական եկեղեցին վերածվել է նախ պահեստի, ապա Վրաստանի ազգային գրադարանի գրապահոցի (այստեղ պահպանվում էր հայկական պարբերական մամուլը) և երբևիցե հոգածության առարկա չի դարձել իշխանությունների կողմից, ենթարկվել է հետևողական ավերի՝ չնայած այն հանգամանքին, որ համարվում էր ճարտարապետական հուշարձան և պահպանվում էր պետության կողմից*[88]: *Նմանօրինակ անտարբերության էին մատնված նաև վիրահայ թեմի շատ եկեղեցիներ:*

*Ուշագրավ է Վազգեն Ա-ի 1958 թ. օգոստոսի 26-ի բողոքագիր-նամակն ուղղված ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարյանին, ուր մեծ հոգություն և հիասթափություն է արտահայտել Ադրբեջանական ԽՍՀ-ում հայկական եկեղեցիների շարունակվող անմխիթար վիճակի առնչությամբ*[89]: *Հիշյալ նամակում Վազգեն Ա-ն մանրամասն ներկայացրել է ԼՂԻՄ-ում և Նախիջևանի ԻԽՍՀ տարածքում (Նախիջևան, Վերին Ագուլիս, Օրդուբադ, Աբրակունիս և տասնյակ այլք)*

[87] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան..., նշվ. աշխ., էջ 672–673:

[88] Տես Документы армянской архитектуры: 1: Церковь Сурб Ншан Сурб Никогайоса, Тбилиси, 2012, էջ12:

[89] Տես Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան..., նշվ. աշխ., էջ 680:

հայկական պատմամշակութային հուշարձանների և եկեղեցիների անմխիթար վիճակը: Վազգեն Ա-ն հույս էր հայտնում, որ ՀԵԳԽ-ի նախագահը այդ նամակի բովանդակության մասին տեղյակ կպահեր Հայաստանի և միութենական պատկան մարմիններին:

Ադրբեջանում հայկական մշակութային արժեքների նկատմամբ օրըստօրե թափ հավաքող վանդալիզմի վերաբերյալ Վազգեն Ա կաթողիկոսը գրում է. «1950–1960-ական թվականներին, երբ խորհրդային տերությունն այլևս հրաժարվել էր պաշտամունքային հուշարձանների դեմ իրականացված կույր պայքարից, Ադրբեջանում պետական հովանավորությամբ շարունակվում էր քրիստոնեական ծագում ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և խաչքարերով գերեզմաններ) զանգվածային ջարդարարությունը»[90]:

Հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականությունն Ադրբեջանում նոր ծավալներ է ընդունել նաև 1960-ական թթ. հետո, երբ քաղաքական դրդապատճառներով ադրբեջանական կեղծ պատմաշինարարները հանրապետության տարածքի հայկական հուշարձանները «դրակել» են աղվանական, որոնց ոչնչացումը կամ յուրացումն ավելի մեծ չափերով շարունակվեց նաև հետխորհրդային տարիներին: Նմանօրինակ գործելաոճ են որդեգրել նաև Վրացական ԽՍՀ իշխանությունները:

Հայկական հուշարձանների յուրացումները Վրաստանում կանխելու նպատակով Վազգեն Ա-ն նամակներ է հղել Վրաստանի պատրիարք-կաթողիկոսին՝ հայ և վրաց հեղինակավոր մասնագետների հանձնախումբ կազմելու հորդորով, լուծելու Վրաստանի տարածքում

[90] Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում, Վարձք, Երևան, դեկտեմբեր 2010 – ապրիլ 2011, № 3, էջ 3:

*հայկական պատմամշակութային հուշարձանների, վանքերի ու եկեղեցիների պատկանելիության հարցը դրանց վրացականացումից առաջ*[91]:

*Հետպատերազմյան տարիներին Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս կրթամշակութային կյանքը նկատելի չափով պահպանվել էր Վրաստանի և Ադրբեջանի միութենական հանրապետություններում:*

*Նշված ժամանակաշրջանում Վրաստանի տարածքում գործում էին հարյուրավոր հայկական դպրոցներ, կրթամշակութային այլ օջախներ: Հայկական Ջավախքը, Աբխազիան և Թբիլիսին, վիրահայ այլ կենտրոններ շարունակում էին մնալ հայահոծ շրջաններ, ուր և կենտրոնացած էր հայկական կրթամշակութային հաստատությունների առավել մասը:*

*Ջավախքի գրեթե յուրաքանչյուր հայկական գյուղում առկա էր հայկական դպրոց, գրադարան կամ մշակույթի տուն: Երկրամասում հայկական դպրոցների, ուսումնարանների, մշակութային օջախների թիվն անցնում էր հարյուրից:*

*1980 թ. դրությամբ Ախալցխայի շրջանում գործում էր 16 հայկական դպրոց, որից մեկը՝ Ախալցխա քաղաքում: Շրջանում գործում էին նաև երկու վրաց-հայկական և մեկ վրաց-ռուս-հայկական դպրոց: Հայկական դպրոցներում սովորում էին 3342 աշակերտ, աշխատում 300 մանկավարժ*[92]:

*Հետպատերազմյան տարիներին տասնյակ հայկական և խառը կազմով դպրոցներ են գործել Վրացական ԽՍՀ Մառնեուլի (Աղբյոր-*

---

[91] Տես Բայրամյան Հ., Էջեր հայ–վրացական գրական կապերի պատմությունից, Երևան, 2010, էջ 173–174:

[92] Տես Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, 1997, էջ 59–60, 85–86:

*վի, Խոժոռնի, Խոխմել, Ծուի, Ջանախչի, Շահումյան, Գյուլբաղի, Դամիա և այլ գյուղերում), Ծալկայի (Տաշբաշ, Ղուշչի, Ջինիսի և այլ գյուղերում), Բոլնիսի (Կիանեթի գյուղում), Թեթրիծղարոյի (Սամշվիլդա գյուղում) և այլ շրջաններում:*

*Հայկական կրթական հաստատությունների բավականին մեծ ցանց կար Աբխազիայի ԻԽՍՀ հայաշատ բնակավայրերում: Պատերազմի դժվարին պայմաններում, երբ մանկավարժական կադրերի զգալի մասը զորակոչվել էր բանակ, Աբխազիայում շարունակում էին կանոնավոր կերպով գործել 128 հայկական դպրոցներ՝ 12.040 սովորողներով: Հետպատերազմյան տարիներին նկատվում է հայ սովորող երեխաների հոսք դեպի ռուսական դպրոցներ, բայց և այնպես 1949/1950 ուստարում Աբխազիայի հինգ շրջաններում միայն գործել է 118 հայկական դպրոց, որից՝ 74 տարրական, 39 ութամյա, 5 միջնակարգ, ընդամենը 11.494 աշակերտներով:*

*Արդեն 1971 թ. Աբխազիայի հայկական դպրոցներում սովորողների թիվը հասնում էր 20 հազարի: 1980 թ. դրությամբ Աբխազիայում գործել է 57 հայկական, վրաց-հայկական զուգահեռ բաժիններով՝ 6 և ռուս-հայկական զուգահեռ բաժիններով՝ 2 դպրոցներ: Սոխումիում գործում էր նաև հայկական մանկավարժական ուսումնարան*[93]*:*

*Ի տարբերություն Աբխազիայի՝ Աջարիայի ԻԽՍՀ-ում բնակվող հայ երեխաները հիմնականում հաճախել են ռուսական դպրոցներ: Բաթումիում գործել են հայկական և հայ-վրացական միջնակարգ դպրոցներ: Մինչև 1970 թ. հայկական 8-ամյա դպրոց է գործել Չաքվիում: 1980 թ. դրությամբ Բաթումիում գործել է մեկ հայկական դպրոց՝ 190 աշակերտներով:*

---

[93] Տես Очерки истории Абхазской АССР, часть II, Дзидзария Г. и др., Сухуми, 1964, էջ 238:

*Թբիլիսիի հայկական դպրոցները շարունակում էին իրենց գործունեությունը նաև հետպատերազմյան շրջանում: Թբիլիսիում հայ երեխաները մեծամասամբ հաճախում էին քաղաքի հայկական դպրոցներ: 1976 թ. այստեղ գործում էր 32 հայկական դպրոց, որոնց շրջանավարտները հաջողությամբ շարունակում էին բարձրագույն կրթությունը տարբեր ԲՈՒՀ-երում, այդ թվում Թբիլիսիում գործող Ա. Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնում, ինչպես նաև հայաստանյան բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատություններում:*

*1966/1967 ուսումնական տարում Վրացական ԽՍՀ բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էին համապատասխանաբար 3.244 և 2.051 հայ ուսանողներ, որը բարձր ցուցանիշ էր մյուս էթնիկ փոքրամասնությունների համեմատ[94]:*

*1980 թ. Թբիլիսիի հայկական դպրոցների թվի կտրուկ նվազում է արձանագրվել (ընդամենը՝ 7 դպրոց), իսկ Վրաստանում գործող բոլոր հայկական դպրոցներում, այդ թվում սովորում էր 48.790 հայ աշակերտ: Վրաստանում գործել է նաև երկու հայկական գիշերօթիկ դպրոց, ուր միասին սովորում էր 610 աշակերտ*

*Թբիլիսիի Ա. Պուշկինի անվան մանկավարժական (ուսուցչական) ինստիտուտում 1941 թ. հիմնվեց նախ պատմա-բանասիրական, ապա հայոց լեզվի և գրականության ֆակուլտետ, որը տարիներ շարունակ Վրաստանի հայկական դպրոցները ապահովում էր որակյալ ուսուցիչներով:*

*Դեռևս նախապատերազմական տարիներին վիրահայ համայնքում հայ գրական կյանքը նկատելի ձեռքբերումներ էր արձանագրել՝*

---

[94] Տես История Грузии, т. III, Тбилиси, 1968, էջ 385:

*հայ գրական ուժերը համախմբելով «Հայաստան» շուրջը: Գրական-գեղարվեստական ուղղվածության հանդեսների շարքում առանցքային գործունեություն էին ծավալել «Խաթաբալա», «Նոր աշխարհ», «Դարբնոց», «Բարձունքներ», «Դիրքերում», «Զարթոնք», «Խելովնեբա-Արվեստ», «Լուսաբաց» և «Արշավ» հանդեսները:*

*Վիրահայերի գրական կյանքը շարունակվել է նաև Հայրենական պատերազմի տարիներին, տպագրվել են ժողովածուներ, թեև գրողներից շատերը ռազմաճակատում էին: Հետպատերազմյան տարիներին գրականագիտության ղեկը վարել են Լ. Մելիքսեթ-Բեկը, Հ. Ազատյանը, Ա. Մխիթարյանը, Ա. Խառատյանը:*

*1956 թ. սկսում է լույս տեսնել Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի գրական-գեղարվեստական և տեսական-քննադատական «Ալմանախ»[95] (1961 թ.՝ «Կանթեղ») տարեգիրքը: Այստեղ տպագրվել են արձակ, չափածո, դրամատիկական երկեր, գրականագիտական, քննադատական և հրապարակախոսական հոդվածներ, թարգմանություններ:*

*Թբիլիսիի հայ գրական կյանքը աշխուժացել է 1960-ական թթ., երբ տեղի էին ունենում հայ և վրաց գրողների պատվիրակությունների փոխայցելություններ, գրական և մշակութային փառատոններ, հոբելյանական հանդիսություններ:*

*Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի աշխատանքները շուրջ 30 տարի ղեկավարել է անվանի արձակագիր Բենիկ Սեյրանյանը: Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղը զգալիորեն նպաստել է Վրաստանի հայաբնակ վայրե-*

---

95 Տե՛ս Հայ պարբերական մամուլը. Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմ.՝ Մ. Բաբլոյան, Երևան, 1986, էջ 264:

րում ապրող և ստեղծագործող ուժերի հայտնաբերման և համախմբելու գործին.

1962 թ. տեղի ունեցավ հայ գրողների, մշակույթի և հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնի վերաբացումը, որը դարձավ յուրօրինակ ուխտատեղի համայնքի համար, վերսկսվեց սայաթնովյան Վարդատոնի ամենամյա անցկացումը:

Վրահայ գրական կյանքի անբաժան միջոցառումները դարձան 1967 թ. նշվող «տերյանական օրերը» Գանձայում, «Ջիվանու օրը»՝ Կարծախում:

1954 թ. աբխազահայ գրող Ա. Ջիդարյանի նախաձեռնությամբ Սուխումիում ստեղծվել է նախ «Համշեն» հայկական գրական միավորումը, ապա նույն տարում Աբխազիայի խորհրդային գրողների միության աբխազահայ գրողների բաժանմունքը՝ Ա. Ջիդարյանի գլխավորությամբ: Վերականգնվել է տեղի հայկական տպարանը, որտեղ տպագրվել են Ա. Ջիդարյանի «Ծովի շունչը», Հ. Գուրունյանի «Հայրենի ծուխ», Ի. Ռահանյանի «Ծիր կաթին», Ա. Բահարյանի «Խաղաղություն» և այլ ժողովածուներ: Սկսել են հրատարակվել «Շավիղ» (1962 թ.), «Ձայն համշենական» (1972 թ.) և «Սևծովյան այգաբաց» (1991 թ.) պարբերականները:

Թբիլիսիում կազմակերպված Հայպետդրամայի հիմքի վրա սկսվել է քաղաքի հայկական պետական թատրոնի գործունեությունը, որը 1936 թվականից Հավլաբար հայաշատ թաղամասում ունեցավ իր շենքը: 1955-1991 թթ. թատրոնը կոչվել է Ս. Շահումյանի անվան, որից հետո կրում է Պ. Ադամյանի անունը: Հիմնադիրների թվում էին Ի. Ալիխանյանը, Ա. Վրույրը, Օ. Մայսուրյանը, Լ. Երեմյանը, Օ. Գուլազյանը, Զաբելը, Ա Հարությունյանը, Պահարեն, Ա. Ռշտունին և ուրիշներ: Լավագույն բեմադրություններից էին Մուրացանի «Գևորգ

Մարզպետունի», Պ. Զեյթունցյանի «Սողոմոն Թեհլերյան», Ա. Շիրվանզադեի «Չար ոգի» և այլն: Թատրոնում խաղացել են Վ. Փափազյանը, Ա. Արմենյանը, Դ. Ամիրբեկյանը, Ա. Լուսինյանը, Դ. Մալյանը, Բ. Ներսիսյանը, Գ. Աշուղյանը և ուրիշներ: Թատրոնում աշխատել են ռեժիսորներ Լ. Քալանթարը, Ս. Քափանակյանը, Ա. Բուրջալյանը, Լ. Ոսիկյանը, Ռ. Չալթիկյանը, Ա. Աբարյանը և ուրիշներ, իսկ երաժշտական ձևավորումները կատարել են Ա. Տիգրանյանը, Ս. Բարխուդարյանը և ուրիշներ:

Թբիլիսիում 1927–1945 թթ. գործել է նախ մանկապատանեկան թատրոն, որն ապա վերակազմավորվել է պատանի հանդիսատեսի Հայկական թատրոնի (ղեկավար՝ Ա. Բուրջալյան)[96], իսկ 1989 թ. կազմակերպվել է նաև «Հավլաբար-89» թատրոնը:

Վրացական ԽՍՀ տարածքում 1937–1944 թթ. հայկական պետական թատրոն է կազմակերպվել նաև Ախալցխայում, հետագայում, որպես ինքնագործ թատրոն, գործել է մինչև 1972 թ.: Մինչև 1964 թ. Բաթումում գործել է ժողովրդական թատրոն:

Մինչև 1949 թ. Սուխումիում գործել է հայկական դրամատիկական թատրոն[97], իսկ 1953 թ. ներկայացումներ է կազմակերպել Սուխումիի հայկական ժողովրդական թատրոնը[98]: 1985 թ. ստեղծվել է «Ծովինար» հայկական ժողովրդական երգի պարի անսամբլը:

Սուխումի հայ համայնքի մշակութային կյանքի վերելքին մեծապես նպաստել է հայ երգի և պարի նվիրյալ, երգահան և պարուսույց Բ. Շաշիկյանը, ով ստեղծել է տասնյակ մշակութային խմբեր:

---

[96] Տես Мамулов С. С., Армяне в Грузии. Москва, 1995, էջ 156:
[97] Տես նույն տեղում:
[98] Տես Մաղալյան Վ., Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Երևան, 2012, էջ 243:

*Վրաստանի միակ հայկական երաժշտական ուսումնարանը (ղեկ.՝ Վ. Ֆրանգուլյան) գործել է Թբիլիսիում (1907-1945 թթ.), որի շրջանավարտները որոշակի արտոնություններով ընդունվում էին Մոսկվայի, Երևանի և Թբիլիսիի կոնսերվատորիաներ:*

*1932 թ. հիմնադրվել է Վրաստանի կոմպոզիտորների միության հայկական սեկցիան, որի նախագահն էր Վ. Տալյանը: Թբիլիսիի երաժշտական հաստատություններում գործել են անվանի հայ երաժիշտներ, կոմպոզիտորներ՝ Տ. Տեր-Ստեփանովը, Կ. Վարդելին (Վարդանյան), Մ. Քամոնը, Ս. Բարխուդարյանը, Ա. Տեր-Ղևոնդյանը, Ա. Առաքելովը, Ա. Ադամյանը, Վ. Տալյանը, Ա. Բաբայանը, Ս. Օգանեզաշվիլին, Ա. Բեգիջանյանը, Գ. Մաղալովը, Ե. Մայիսյանը, Վ. Կորգանովը, Ն. Մկրտչյանը, Ռ. Ղազարյանը և ուրիշներ:*

*Վրաստանի պետական ֆիլհարմոնիայի հիմնադիրը և առաջին ղեկավարն էր հայազգի Տ. Տարումովը: Մշակութային կյանքի ականավոր գործիչներից էին նաև Կ. Շահ-Ազիզովը, Ա. Մելիք-Փաշաևը, Վ. Մուրադելին (Մուրադյան), Ն. Հովհաննիսյանը, Գ. Մելիք-Ավագյանը և այլք:*

*Ուշագրավ է Վրաստանի հայալեզու մամուլը, որն ավանդաբար ունի հարուստ պատմություն. տարբեր ժամանակներում այստեղ հրատարակվել են ավելի քան 260 անուն հայերեն պարբերականներ, որոնց շարքում առանձնանում էին գրական-գեղարվեստական և հասարակական-քննադատական ուղղվածություն ունեցող հանդեսները:*

*Խորհրդային տարիների Վրաստանում հասարակական քաղաքական կյանքը լուսաբանող կենտրոնական պաշտոնաթերթը «Սովետական Վրաստան»-ն էր, որը հրատարակվել է 1920-1990 թթ.՝ հանդես գալով տարբեր անուններով («Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար», «Սովետական Վրաստան», «Խորհրդային Վրաս-*

տան», «Վրաստան»): Օրաթերթն ունեցել է գրական-գեղարվեստական և հասարակական-քաղաքական բազմաթիվ հավելվածներ և ուշադրության կենտրոնում է պահել Վրաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական և կրթամշակութային կյանքի հարցերը, ինչպես նաև Հայաստանի քաղաքական, մշակութային և գիտական անցուդարձը:

Ախալքալաքում, Ախալցխայում, Ծալկայում և այլ շրջկենտրոններում հրատարակվող թերթերն ու պարբերականները, լինելով տեղական կուսակցական և խորհրդային ղեկավար մարմինների օրգաններ, լայնորեն լուսաբանել են հայաբնակ այս շրջանների տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը՝ շեշտը դնելով ժողովուրդների բարեկամության սկզբունքների տարածման ու ամրապնդման վրա:

1950-ական թթ. ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշումներով միութենական հանրապետությունների համապատասխան մարմիններին հանձնարարականներ էր տրվել հետևողականություն հանդես բերել տեղական ազգային մամուլում տպագրվող նյութերի գաղափարաքաղաքական որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքներին: 1960-ական թթ. իրականացված վարչատարածքային փոփոխությունները, շրջանների խոշորացումը հանգեցրել է ազգային լեզուներով, այդ թվում՝ հայերենով, տպագրվող մամուլի օրգանների թվի կրճատմանը: Դրա արդյունքում հայալեզու են դարձել շրջանային թերթերի առանձին էջեր:

Աջարիայի և Աբխազիայի տարածքում տասնամյակներ շարունակ հայալեզու մամուլ չի հաջողվել կազմակերպել, որին խոչընդոտել է Վրաստանի կուսակցական ղեկավարությունը[99]:

---

[99] Տես նույն տեղում, էջ 243:

*Վրացական ԽՍՀ-ում հայկական առաջին հասարակական և մշակութային կազմակերպությունները հիմնվել են 1980-ական թթ. Ջավախքում, Աբխազիայում և հարակից շրջաններում: 1990-ական թթ. Վրաստանում հայկական համայնքային և հասարակական-մշակութային կազմակերպությունները համախմբվելու, դրսևորվելու ու ազատ գործունեության առավել բարենպաստ հնարավորություններ ստացան:*

*Ադրբեջանական ԽՍՀ-ում կիրառվող հակահայ քաղաքականությունը դրսևորվեց խորհրդային իշխանության ամբողջ տարիների ընթացքում՝ աստիճանաբար, ընդունելով բացահայտ ու մասշտաբային բնույթ: Հայերի նկատմամբ տարվող խտրականության քաղաքականությունը պետական մակարդակով տարածվեց նաև հայության հոգևոր և կրթամշակութային բնագավառների վրա:*

*Բավական է նշել, որ 1930–1950-ական թթ. միայն Բաքվում գործում էին 80 հայկական դպրոցներ, որոնք 1950–1970-ական թթ. մեկը մյուսի հետևից փակվեցին: Հայաստանից մայրենի լեզվով դասագրքերի, ուսումնական ձեռնարկների առաքումը Բաքու արգելվեց, փակվեցին քաղաքի հայկական գրադարանները: Վերջին հայկական դպրոցը Բաքվում փակվել է 1983 թ.*[100]:

*Վարչական մեթոդներով փակվում էին նաև հանրապետության տարբեր շրջաններում գործող հայկական դպրոցները, այսպես 1953 թ. Զաքաթալայի Ս. Գևորգ եկեղեցուն կից հիմնված Ս. Վարդանյան դպրոցը դադարել է գործելուց: Հայկական կրթամշակութային հաստատությունների զարգացման և ընդլայնման առումով ադրբեջանա-*

[100] Տես Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան, 2011, էջ 496–497:

կան իշխանությունների բացասական գործելաոճն առավել ցայտուն էր ԼՂԻՄ-ում և Նախիջևանի ԻԽՍՀ-ում:

Բաքուն մշտապես եղել և մնում էր հայկական կրթամշակութային ու հոգևոր խոշոր կենտրոններից մեկը: Այստեղ գործում էր «Հայարտուն» գրական-մշակութային կազմակերպությունը, որի գրական մասնաճյուղի հիման վրա գործել է Հայ պրոլետգրողների ասոցիացիան՝ «Հայարտուն» և «Վիշկա» հանդեսներով:

Ե. Չարենցի, Վ. Ալազանի և այլ հայ գրողների հաճախակի այցելությունները նպաստել են Բաքվում հայ գրական միջավայրի զարգացմանը և Ադրբեջանի գրողների միության հայկական բաժանմունքի հիմնմանը: Հայկական գրական-մշակութային այս կազմակերպությունները ևս հետպատերազմյան տարիներին դադարեցին գործելուց՝ Բաքու քաղաքի բազմահազար հայությանը զրկելով ազգային կյանքի որոշակի դրսևորումներից:

Բաքվի ԲՈՒՀ-երում են դասավանդել անվանի հայ գիտնական-իրավագետներ Բ. Դանիել-Բեկը, Ա. Սարկիսովը, Ն. Մանասյանը, Բաքվի պետհամալսարանի պրոռեկտոր, ակադեմիկոս Ա. Արզումանյանը (տնտեսագետ), նավթաքիմիկոսներ Բաղդասարովը և Իոնեսյանը, բժիշկներ հայր և որդի Ամիրջանյանները, գիտության ու արվեստի տարբեր ճյուղեր ներկայացնող հարյուրավոր այլ մասնագետներ:

Բաքվում գործել է հայկական մանկավարժական տեխնիկում և հայկական ֆակուլտետ Բաքվի համալսարանում: 1969 թ. լուծարվել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժանմունքը: Ավելի վաղ՝ 1949 թ. փակվել էր Բաքվի հայկական պետական դրամատիկական թատրոնը:

Ադրբեջանում հակահայ քաղաքականությունը տարվում էր պետական բարձր մակարդակով, կենսագործվում էր հայկական պատմամշակութային հուշարձանների յուրացմամբ ու ոչնչացումով:

Գիտության, կրթության, առողջապահության, տնտեսության և այլ ոլորտներում առաջատար դիրքեր զբաղեցնող ու փորձառու հայ մասնագետները տարիներ շարունակ ենթարկվում էին հալածանքների, բռնությունների, կեղծ մեղադրանքներով հեռացվում էին աշխատանքից:

Հայոց լեզուն, խոսքն ու երաժշտությունը արմատախիլ անելու նպատակով խիստ կրճատվեցին հայերեն լեզվով հաղորդումների ծավալը, իսկ 1988 թ. լիովին փակվեց ռադիոհեռուստատեսային հաղորդումների հայկական բաժինը:

1920–1989 թթ. Բաքվում լույս է տեսել Ադրբեջանի կոմկուսի հայալեզու պաշտոնաթերթ «Կոմունիստ»-ը, որն իր էջերում լուսաբանել է հանրապետության հայության առօրյա կյանքը, նրա «լուսավոր» ապագայի ձգտումները, տպագրել հայ գրողների գործերը: 1960-ական թթ. սկսած, Ադրբեջանի պետական և կուսակցական ղեկավարության ճնշումների պայմաններում, օրաթերթը պասիվ դիրքորոշում է որդեգրել ադրբեջանահայության խնդիրների, հայկական հուշարձանների կազմակերպված ոչնչացման ու յուրացման, Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի հայության հետապնդումների ու հայրենի օջախներից նրանց դուրս մղման գործընթացների նկատմամբ:

Բաքվում լույս են ընծայվել Ադրբեջանի խորհրդային գրողների միության հայկական բաժանմունքի «Սովետական գրող» ամսագիրը («Խորհրդային գրող»), «Գրական ալմանախ»-ը և «Գրական Ադրբեջան» հայալեզու գրական-գեղարվեստական և տեսական-քննադատական հանդեսը:

Հայաշատ Կիրովաբադում 1930–1980-ական թթ. լույս է տեսել քաղխորհրդի և քաղկոմի օրգան «Բանվորական Կիրովաբադ» երկօրյա թերթը, իսկ 1949–1952 թթ.՝ նաև «Կիրովաբադի բանվոր» թերթը: Հայ պարբերականներ են տպագրվել նաև Շամխորում, Խանլարում և այլն:

ԼՂԻՄ-ում նշված տարիներին տպագրվել են տասնյակ մամուլի օրգաններ, որոնք լայնորեն լուսաբանել են մարզի հայության հասարակական-քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքը:

Հետպատերազմյան տարիներին Ադրբեջանում «հայկական ազգայնականության» դեմ պայքարը տարվում էր պետական բարձր մակարդակով՝ հանրապետության կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովի գլխավորությամբ: ՀամԿ(բ)Կ ԿԿ 1950 թ. հաշվետու փաստաթղթերից մեկում ներկայացված են մեղադրանքներ Ադրբեջանի կուսակցական-պետական համակարգում և տնտեսության օղակներում պաշտոններ զբաղեցնող հայ գործիչների նկատմամբ: Ինչպես, օրինակ, առողջապահության մինիստր Կարկարյանի դեմ այն պատճառաբանությամբ, որ ազգությամբ հայերը մինիստրության համակարգի արտադրական տարբեր ճյուղերում պաշտոնների են նշանակվել ի հաշիվ աշխատանքներից ազատված ադրբեջանցիների և դա բնութագրվել է որպես «դաշնակցականություն»[101]:

Ադրբեջանահայության նկատմամբ տասնամյակներ շարունակ տարվող ազգային-մշակութային, սոցիալ-տնտեսական և քաղաքական բռնաճնշումների, խտրականության քաղաքականությունը հանգեցրել էր հայության զանգվածային արտագաղթի, հայաբնակ շրջանների վերջնական հայաթափությանը:

[101] Տե՛ս РГАСПИ, Ф. 17, оп. 88, д. 958, лл. 133–136.

1988 թ. փետրվարի 27-29-ը Սումգայիթում, 1990 թ. հունվարի 13-19-ին Բաքվում, Գանձակում, Շաքիում և այլուր, Խորհրդային Ադրբեջանի պետական և կուսակցական ղեկավարության գիտությամբ, իրավապահ մարմինների թողտվությամբ և մասնակցությամբ հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվեց ցեղասպանության մեթոդներին բնորոշ սպանդ, որին զոհ գնացին հարյուրավոր հայեր, իսկ հազարավորներն էլ խեղվեցին ու հաշմանդամ դարձան:

ԽՍՀՄ փլուզման շեմին Ադրբեջանական ԽՍՀ-ում աճող հակահայկական ալիքն ու ջարդարարությունը Նախիջևանում ավարտին հասավ 1988 թ. դեկտեմբերին, երբ հայերի վերջին բնակիչները ստիպված էին լքել հայրենի օջախը:

Բաքվի հայության ջարդերից հետո ադրբեջանահայության բռնագաղթը հասավ վերջնակետին. ավելի քան 361.000 ադրբեջանահայերի վերջին հատվածը բռնագաղթեց Հայաստան, ՌԽՖՍՀ, Թուրքմենիա (Կրասնովոդսկ), Հյուսիսային Կովկաս և այլուր: Ընդհանուր առմամբ, 260.000 փախստական ապաստան գտավ Հայաստանում, 90.000-ը՝ ՌԽՖՍՀ-ում, Ուկրաինայում և այլ պետություններում: Ադրբեջանի իշխանությունները չբավարարվելով հանրապետության տարածքից հայության արտաքսմամբ և հայկական նյութական մշակույթի նկատմամբ վանդալիզմի դրսևորումներով, իրենց հակահայ ջանքերն ուղղեցին ԽՍՀՄ տարբեր հանրապետություններում՝ բնակվող հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններ հրահրելուն:

## *Նախիջևանի ԻԽՍՀ-ում*

*Հետպատերազմյան ժամանակաշրջանում Ադրբեջանական ԽՍՀ-ն շարունակում էր վարել Նախիջևանի ԻԽՍՀ-ից հայերին դուրս մղելու քաղաքականություն: Երկրամասի ժողովրդագրական պատկերն արմատապես փոխելու նպատակով մինչ այդ էլ կիրառվել էր նախիջևանահայության վերադարձն իր նախկին բնակության վայրեր արգելող քաղաքականություն, որն ուղեկցվել էր երկրամասի լքված հայկական բնակավայրերը թուրք-թաթարներով և հարևան Իրանից հրավիրված վերաբնակիչներով բնակեցնելու ծրագրի իրականացմամբ*[102]:

*Միևնույն ժամանակ, Նախիջևանի դեռևս հայաբնակ գյուղերը երկրամասի իշխանությունների կողմից միտումնավոր կերպով դատապարտվել էին սովամահության, արտագաղթի, ինչի մասին Խորհրդային Հայաստանի կառավարությանը բազմիցս դիմումներ էին հղվել Նախիջևանի հայության ներկայացուցիչների կողմից:*

*1930-ական թթ. վերջին ստալինյան բռնաճնշումների ալիքը ադրբեջանական իշխանությունների կողմից հմտորեն օգտագործվել էր հայ բնակչության նկատմամբ: Փակվել էին հայկական կրթամշակութային հաստատությունները (գործում էին 30 գյուղական, 4 քաղաքային հայկական դպրոցներ, Նախիջևանի մանկավարժական և բժշկական ուսումնարանների հայկական բաժանմունքները, հայկական թատրոնը), հետապնդվում էին հայազգի գործիչները: Բռնությունների զոհ են գնացել Նախիջևանի ԻԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Հազարապետ Գրիգորյանը, Նախիջևանի ԻԽՍՀ*

[102] Տե՛ս Иванов В., Деарменизация Нахиджевана XX в. (сжатый обзор), Нахиджевана в XX – начале XXI веков: некоторые факты. Сб. статей под. ред. Захарова В., Москва, 2011, էջ 43:

*Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Մնացական Մինասյանը, Շահբուզի (Շահկերտի) շրջկոմի առաջին քարտուղար Մամիկոն Հովակիմյանը, պետական և կուսակցական գործիչներ Հովհաննես Գրիգորյանը. Նորիկ Գրիգորյանը և ուրիշներ Հետպատերազմյան բռնաճնշումների հետևանքով նախիջևանահայերի նկատմամբ նոր հալածանքներ են սկսվել 1948–1949 թթ., նրանց որպես «ժողովրդի թշնամի» աքսորել են Սիբիր*[103]*:*

*Երկրամասի հայկական բնակչությունը հայրենի օջախներից արմատախիլ անելու քաղաքականության նոր դրսևորում էին 1950-ական թթ. իրադարձությունները, որոնց արդյունքում դատարկվեցին հայաբնակ Աստապատ, Երնջակ, Լենինաբադ գյուղերը, արտագաղթեցին Նախիջևան ու Ջուլֆա (Ջուղա) քաղաքների հայության մեծ մասը:*

*Նախիջևանի իշխանությունները կանխամտածված խոչընդոտում էին Խորհրդային Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատմանը, իսկ ՀԽՍՀ կառավարությունը, ինչպես հարկն է, չկարողացավ սատարել նախիջևանահայությանը, ապահովել մանկավարժական, բժշկական ու մշակույթի բնագավառների մասնագետներով, միջամտել ու կասեցնել հայաթափությունը, մշակութային արժեքների ոչնչացումը: Բացառություն էր ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Յա. Զարոբյանի միջամտությամբ ամենախոշոր հայկական գյուղի Ազնաբերդի հետ Երևանի միտական ավտոբուսային երթևեկության հաստատումը, որը մեծապես նպաստեց բնակավայրի գոյատևմանը*[104]*:*

---

[103] Տե՛ս Мелик-Шахназаров Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ереван, 2007, էջ 24:

[104] Տե՛ս Варданян А., Исход армян из Нахиджевана // Национальная идея. № 6, Ереван, 2008: http://hayasanews.com/1341125854/#sthash.scu0seow.dpuf

*1960 թ. սկսած երկրամասի շրջկոմները առավելապես հայկական գյուղերի վրա դրեցին գյուղատնտեսական առաջադրանքների մեծ մասը, աշխատանքից հեռացվում էին ղեկավար կադրերը: Այսպես, Գյումուր և Առինջ գյուղերի կոլտնտեսությունների հայազգի նախագահներին աշխատանքից հեռացնելուց հետո ինչպես այդ գյուղերի, այնպես էլ Բաքունքի, Ղարաբաղքայի, Օցուպի, Բաղամլուի, Նորսի, Շահապոնք ու Շահբուզ շրջկենտրոնների հուսալքված հայությունը սկսեց գաղթել Հայաստան: Այն բանից հետո, երբ հայերը լքեցին երկրամասի այս բնակավայրերը, օրեր անց ադրբեջանցիները զավթեցին հայերի լքած տներն ու այգիները: Նրանց հետևեց Ջուղայի շրջանի հայկական Շոռոթ, Փարադաշտ և Գյալ գյուղերի հայ բնակչությունը: Աստապատ գյուղի հայաթափումը սկսվեց Արաքս գետի վրա ՀԷԿ կառուցելու ԽՍՀՄ-ի և Իրանի միջև 1963 թ. հուլիսին պայմանագրի կնքումով. «...այդ օրից գյուղի դպրոցի հայկական բաժինը սկսեց աստիճանաբար նվազել և սկիզբ առավ հայերի զանգվածային գաղթ դեպի Հայաստան և այլ վայրեր: 1968 թ. տարրական դասարաններում կային 3–5 աշակերտներ, իսկ 1971 թ. հոկտեմբերի 19-ին Աստապատի դպրոցի վերջին զանգը հնչեց...»: Աստապատի պատմաճարտարապետական հուշարձանները, բնակելի տները և դպրոցը մնացել են ջրի տակ, փրկվել են միայն գերեզմանատունը և Կարմիր վանքը, իսկ հայությունը որոշ ժամանակ անց տեղափոխվել է հարևան Բաբեկ ավան, որն էլ վերջնականապես հայաթափվել է 1989 թ. դեկտեմբերին[105]:*

*Նախիջևանի երկրամասի հայ բնակչության թվաքանակը նվազեց հետագա տարիներին նույնպես, և տասնամյակներ շարունակ*

[105] Տե՛ս Պողոսյան Պ., Աստապատ. արաքսամերձ հայաշխարհ, Երևան, 2005, էջ 52:

*կիրառվող հակահայ քաղաքականության արդյունքում «ապահով վեց» ադրբեջանցիների էթնիկ գերակշռությունը երկրամասում:*

*Նախիջևանի հայկական հետքը խսպառ վերացնելուն էր ուղղված նաև երկրամասի իրավական փաստաթղթերից ու խորհրդանիշերից հայերի գոյությանը վերաբերող բոլոր տեսակի արձանագրումները: Այսպես, մինչև 1937 թ. Նախիջևանի ԻԽՍՀ դրոշի վրա առկա էր գրություն ադրբեջաներենով և հայերենով, սակայն երկրամասի Սահմանադրության մեջ 1938 թ. հուլիսի 25-ի և 1939 թ. հուլիսի 28-ի համապատասխան «շտկումներից» հետո (հոդված 112) դրոշի հայերենով գրությունը անհետացավ: Նախիջևանում հայության հիմնավոր ներկայությունը վկայակոչող մեկ այլ դրսևորում էր Սահմանադրության 7-րդ գլխի («Դատարան և դատախազություն») 78-րդ հոդվածը, ուր ասվում է. «Նախիջևանի ԻԽՍՀ-ում դատավարությունը վարվում է ադրբեջաներեն լեզվով, իսկ գերակշռող հայ բնակչություն ունեցող գյուղերում և ավաններում՝ հայերեն լեզվով», սակայն արդեն 1978 թ. Սահմանադրության 150-րդ հոդվածով լղոզված կերպով նշվում է. «Նախիջևանի ԻԽՍՀ-ում դատավարությունը իրականացվում է ադրբեջաներեն լեզվով կամ տվյալ վայրի բնակչության մեծամասնության լեզվով»[106] այս կերպ դուրս մղելով հայերենը և անտեսելով տեղաբնիկ հայ բնակչության իրավունքները:*

*Հետպատերազմյան շրջանում Նախիջևանի ԻԽՍՀ-ն և ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու խնդրով հանրապետության իշխանությունները ու հայ ժողովուրդը բազում դիմումներ են հղել ԽՍՀՄ միութենական ու կուսակցական ղեկավար մարմիններին. ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Գ. Հարությունյանը 1945 թ. նամակով դիմել է Ի. Ստալինին հիշյալ հայկական երկրամասերի*

[106] Иванов В., նշվ. աշխ., էջ 49:

վերամիավորման խնդրով, որի լուծման կարևորությունը պատճառաբանում էր այն հանգամանքով, որ Ադրբեջանի կազմում այդ երկրամասերի զարգացման հնարավորությունները բավարար չէին օգտագործվում[107]: 1966 թ. սեպտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ քննարկվել է Հայկական ԽՍՀ գիտության և մշակույթի մի խումբ գործիչների՝ ԽՄԿԿ XXIII համագումարին հասցեագրված նամակը, որում բարձրացվում էր ԼՂԻՄ-ը և Նախիջևանի ԻԽՍՀ-ն Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցը[108]: Ուսումնասիրելով և վերլուծելով նամակի բովանդակությունը, ստեղծված իրավիճակը ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Ա. Քոչինյանի և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանի անունից ԽՄԿԿ ԿԿ-ին տեղեկացվել է, որ այդ հարցը չվճռելը լուրջ դժվարություններ է ստեղծում կուսակցական մարմինների գործունեության և հանրապետության բնակչության լայն խավերի շրջանում քաղաքական, դաստիարակչական աշխատանքների իրականացման համար. «Մեր կարծիքով նպատակահարմար կլիներ քննարկել և դրական լուծել Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին հանձնելու հարցը, ընդսմին, Նախիջևանի ԻԽՍՀ-ն կարող է իր ինքնավարությունը պահպանել Հայկական ԽՍՀ կազմում, որի տարածքում էլ գտնվում է»[109]:

Նախիևջանի ԻԽՍՀ իշխանությունները, երկրամասից հայ բնակչությանը դուրս մղելուն զուգահեռ, իրագործել են հայկական պատմամշակութային ժառանգության նպատակային ոչնչացում:

---

[107] Տե՛ս Հարությունյան Գ., Կյանքը և գործունեությունը, կազմողներ՝ Ավետիսյան Հ. և ուրիշներ, Երևան, 2000, էջ 115–116:
[108] Տե՛ս Հայության պայքարը ԼՂԻՄ–ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Երևան, 2011, էջ 61–74:
[109] Տե՛ս նույն տեղում:

*Ադրբեջանի ԽՍՀ տարածքում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանների ու եկեղեցիների պահպանության, ավերածություններից փրկելու ու դրանց վերաբացման խնդրով Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն հանդես է եկել տարբեր դիմումներով, որոնք ուղղված էին ինչպես Հայաստանի, այնպես էլ միութենական իշխանություններին:*

*ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Բուլգանինին հասցեագրած նամակում (1956 թ. մայիսի 12) Վազգեն Ա-ն նշում էր, որ գործող եկեղեցի չկա Նախիջևանի երկրամասի հայ բնակչության շրջաններում, ավելին՝ հարցադրում էր. կատարում արդյոք ժամանակը չէ ԼՂԻՄ-ի, Նախիջևանի ԻԽՍՀ և Ախալքալակի շրջանի հարցի արդար լուծման համար, որոնք շարունակում են դուրս մնալ Հայկական ԽՍՀ սահմաններից: 1957 թ. սեպտեմբերին հովվապետական այց կատարելով Ադրբեջանական ԽՍՀ Վազգեն Ա-ն բարձրացրել է հայկական եկեղեցիների վերադարձի և վերանորոգման հարցերը: Այցի ավարտին կաթողիկոսը Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Կրոնի պետական գործերի խորհրդի լիազոր Մ. Մամեդովին է փոխանցել հայկական եկեղեցիների ու վանքերի ցանկը, այդ թվում Նախիջևանում, դրանք վերաբացելու համար կառավարության առաջ միջնորդություն կատարելու նպատակով*[110]*: 1958 թ. Վազգեն Ա-ն նամակով դիմել է նաև ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Խրուշչովին, ուր, ի թիվս այլ հարցերի նշում էր. «Սրտի խոր ցավով Մենք պէտք է հաստատենք, որ կայ չափազանց կարեւոր խնդիր մը, որն իր լուծումը բաւարար չափով չէ ստացած առ այսօր: Այն հայ եկեղեցիներու բացման հարցն է...Մինչդեռ Հիւսիսային Կովկասի, Վրաստանի, Ատրպէյճա-*

[110] Տես ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 129, թթ. 35–41:

*նի. Ղարաբաղի և Նախիջեւանի մէջ առ այսօր որեւէ մէկ եկեղեցի եւ վանք չէ բացուած... Բոլորին յայտնի է, որ Հայաստանի եւ հարեւան հանրապետութեանց մէջ նախապէս հազարէ աւելի եկեղեցիներ գործած են: Մեր այսօրուան պահանջը անհամեմատ փոքր է. նուազագոյնէն այլ պակաս...»*[111]*: Ուշագրավ է Վազգեն Ա-ի 1958 թ. օգոստոսի 26-ի բողոքագիրն ուղղված Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանին, ուր մտահոգություն և հիասթափություն է արտահայտել Ադրբեջանական ԽՍՀ-ում հայկական եկեղեցիների անմխիթար վիճակի առնչությամբ*[112]*: Հիշյալ նամակում Վազգեն Ա-ն հանգամանորեն անդրադարձել է Նախիջևանի ԻԽՍՀ տարածքում (Նախիջևան, Վերին Ագուլիս, Օրդուբադ, Աբրակունիս և տասնյակ այլ) հայկական պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների ոչնչացմանն ու անմխիթար վիճակին: Վազգեն Ա-ն հույս էր հայտնում, որ ՀԵԳԽ-ի նախագահը այդ նամակի բովանդակության վերաբերյալ տեղյակ կպահի Հայաստանի և միութենական պատկան մարմիններին:*

*Վազգեն Ա-ն իր բողոքն է արտահայտել Ադրբեջանում թափ հավաքած հակահայ քաղաքականության դեմ. «1950–1960-ական թվականներին, երբ խորհրդային տերությունն այլևս հրաժարվել էր պաշտամունքային հուշարձանների դեմ իրականացված կույր պայքարից, Ադրբեջանում պետական հովանավորությամբ շարունակվում էր քրիստոնեական ծագում ունեցող հայկական միջնադարյան հուշարձանների (վանքեր, եկեղեցիներ, մատուռներ և խաչքարերով գերեզմաններ) զանգվածային ջարդարարությունը»*[113]*:*

[111] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմության..., նշվ. աշխ., էջ 672–673:
[112] Տե՛ս նույն տեղում, էջ 680:
[113] Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում. «Վարձք. Էջմիածին, դեկտեմբեր 2010–ապրիլ 2011 (№ 3), էջ 3:

*Հայկական ԽՍՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ընկերության ջանքերով ձեռնարկվել է Նախիջևանի ԻԽՍՀ տարածքի հայկական պատմամշակութային հուշարձանների հաշվառման, դրանց գիտական ու համահավաք ցուցակների ու հարցակարգի կազմման, հրատարակման գործը, որը, մատենագիտական ու աղբյուրագիտական նշանակություն ունենալով հանդերձ, դառնալու էր հայ ժողովրդի այս հատվածի ստեղծած մշակութային ժառանգության վկայագիրը: Այդ աշխատանքների արդյունքում 1970–1980-ական թթ. հրատարակվել են Ա. Այվազյանի արժեքավոր աշխատությունները նվիրված Նախիջևանի ԻԽՍՀ բնակավայրերի, մասնավորապես Ջուղայի և Ագուլիսի հայկական ճարտարապետությանը, հուշարձաններին, կազմվել է դրանց համահավաք ցուցակը: Վերջինն իր ընդգրկումով ու նկարագրությամբ Նախիջևանի ԻԽՍՀ տարածքի հուշարձանների առաջին գիտական ցուցակ-փաստաթուղթն էր և կարևոր նշանակություն ուներ նկարագրվող հուշարձանների հետագա ուսումնասիրության համար, հեշտացնում էր Նախիջևանի ճարտարապետական, հնագիտական, պատմական ժառանգությամբ զբաղվողների և այդ ժառանգության պահպանությամբ շահագրգռված կազմակերպությունների աշխատանքները*[114]*:*

*Նախիջևանի հայկական նյութական մշակույթը՝ հուշարձանները, որոնց թիվն անցնում էր 4500 միավորից, հայ ժողովրդի մշակութային, քաղաքական ու սոցիալական ինքնատիպ գործունեության արդյունք էր*[115]*:*

*Հետազոտական աշխատանքը դարձել էր հասունացած ու օրախնդիր անհրաժեշտություն, քանի որ Նախիջևանի հայկական*

---

[114] Տես Այվազյան Ա., Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համահավաք ցուցակ), Երևան, 1986, էջ 4–5:
[115] Տես Այվազյան Ա., Նախիջևան. գիրք հուշարձանաց, Երևան, 1990, էջ 8:

բազմադարյա մշակութային ժառանգությունը կանգուն, կխոսվեր թե ավերակ վիճակում պերճախոս ու ամենահավաստի վկայությունն էր անցյալ հազարամյակներում այստեղ ապրած ստեղծագործ ժողովրդի գոյության ու նրա պատմական ճակատագրի. «Բազմազան են այդ ժառանգության հուշարձանները՝ հնագիտական նյութեր, աշխարհիկ ու հոգևոր շինություններ, ավաններ ու դաստակերտներ-...Եվ ամեն մի հուշարձանի ճակատին, շինվածքների որմերին, կործանման ենթարկված գերեզմանատների տապանաքարերի ու խաչքարերի վրա ժողովրդի ու երկրի հազարամյակների պատմության, պայքարի ու տքնության դաջված դրոշմներ, մեսրոպատառ վիմագրեր, որմնաքանդակներ, զարդաքանդակներ, բարեխոսության աղերսանք ու անեծք, հուշ ու հիշատակ...»[116]:

Նախիջևանի ԻԽՍՀ հայկական հուշարձանների հետազոտողների միանշանակ գնահատականներից ակնհայտ է, որ երկրամասի հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացման քաղաքականությունն Ադրբեջանում նոր ծավալներ է ընդունել 1960–1980-ական թթ., երբ քաղաքական դրդապատճառներով Ադրբեջանի հակագիտական պատմագիտությունը այդ հանրապետության տարածքի հայկական հուշարձանները փորձել է սեփականաշնորհել, «որակել» աղվանական[117], որոնց հետագա ոչնչացումն ու յուրացումը շարունակվել է նաև հետխորհրդային տարիներին:

Այս համատեքստում շատ կարևոր են հայկական արշավախմբի արձանագրած իրողությունները երկրամասի հուշարձանները հաշվառելիս. «գտնում ենք, որ ավելորդ է Նախիջևանի հայկական հու-

---

[116] Այվազյան Ա., Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համառոտ ցուցակ), էջ 5:

[117] Տես Шнирельман В., Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москва, 2003, էջ 201–216:

*շարժանների կորստի չափի ու քանակի մասին վկայակոչել գոյություն ունեցող բազմաթիվ հեղինակավոր ու վստահելի աղբյուրներ, հարկ ենք համարում ընդգծելու, որ մխիթարական չէ նաև այդ հուշարձանների այսօրվա վիճակը: Ամբողջ երկրամասի շատ ու շատ բնակավայրերում և նրանց մերձակայքում դեռևս չարագործ ձեռքերը ավերակների են վերածում հուշարձաններն ու հուշարձանախմբերը, տեղահան են անում կամ կոտրում, ձորերն ի վար են գլորում խաչքարերն ու տապանաքարերը, զանազան հնագիտական բեկորները, անտարբերություն են ցուցաբերում պետական օրենքով պահպանվող ու գնահատվող հուշարձանների նկատմամբ: Այնուամենայնիվ, մի շարք հուշարձանների արդեն ավերված ու քայքայված վիճակները և առայսօր նրանց չուսումնասիրված-չարձանագրված լինելն ու այլ հանգամանքները, հակառակ մեր պրպտումների, անհնար են դարձրել սպառիչ պատասխաններ տալու հարցակարգի բոլոր հարցերին»*[118]

*1971 թ. Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին հուշարձան կառուցելու համար վայր «ընտրվեց» Նախիջևան քաղաքի հայկական գերեզմանատունը, որը ժամանակի ընթացքում թաղվեց հողի, ավազի և շինարարական աղբի կույտերի տակ, իսկ տապանաքարերի մի մասն էլ օգտագործվեց հանրապետական հիվանդանոցի պատերը շարելու համար: Նախիջևանում շինարարություն իրականացնելու պատրվակով 1975 թ. ավերվել է նաև VII դարում կառուցված Սբ. Երրորդություն հայկական եկեղեցին*[119]*, իսկ 1986 թ. Օցնափի Սբ. Ստեփանոս եկեղեցու ավերումն արագացնելու համար պատե-*

[118] Իվանով Վ., Էթնոքաղաքական և էթնոժողովրդագրական գործընթացները Նախիջևանում պատմության լույսի ներքո (XVII–XX դարեր), Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր: Վերլուծական նյութեր, Երևան, 2010, էջ 113:

[119] Տես նույն տեղում:

ղից պոկել են հսկայական քարեր. Ցղնա գյուղի եկեղեցին վերածվել է թունաքիմիկատների և պարարտանյութերի պահեստի, Ագուլիսի հոյակերտ եկեղեցիները՝ փարախների և գոմերի: Պայթուցիկներ կազմակերպելու միջոցով հիմքից ավերվել են Աբրակունիսի, Շոռոթի և Մեծոփի (Բաղավնուի Սբ. Աստվածածին) եկեղեցիները:

1987 թ. հոկտեմբերին Նախիջևանի իշխանությունների ցուցումով ավերվել է Ագուլիսի հայկական գերեզմանոցը, նրա միջնադարյան մոտ 400 տապանաքարերը՝ ազգագրական կարևոր արժեք ներկայացնող ավելի քան 100 վիմագիր արձանագրություններով: Հայկական պատմամշակութային արժեքների ոչնչացման քաղաքականության զոհ գնացին բազմաթիվ այլ հուշարձաններ: Տարիներ շարունակ Հին Ջուղայի հռչակավոր խաչքարերն անարգել տեղափոխվում և օգտագործվում էին որպես կենցաղային շինանյութ, իսկ Նախիջևանի պատմության պետական թանգարանի մուտքի մոտ տեղադրված Ջուղայի գերեզմանատնից գողացված խոյաձև տապանաքարի վրայից քերվել են հայերեն արձանագրությունները, որը պետական մակարդակի հակահայ քաղաքականության, վանդալիզմի և մշակութային յուրացման ակնհայտ դրսևորում էր[120]: Հետխորհրդային տարիներին արդեն անկախ Ադրբեջանի իշխանությունների կողմից շարունակվեց ու նոր թափ հավաքեց հայկական մշակութային եղեռնը, որի դրսևորումներից էր Հին Ջուղայի հռչակավոր հայկական գերեզմանատան հազարավոր ժանեկահյուս խաչքարերի վերջնական ոչնչացումը: Ջուղայի խաչքարերի բարբարոսական ոչնչացման դեմ Հայաստանի պատկան մարմիններից բացի, միջազգային կա-

[120] Տես Варданян А., Исход армян из Нахиджевана // Национальная идея, № 6, 2008. http://hayasanews.com/1341125854/#sthash.scu0scow.dpuf

ռույցներին ուղղված դիմումներով է հանդես եկել նաև Նախիջևանահայոց Ազգային խորհուրդը[121]:

Համամիութենական մարդահամարների արդյունքներով 1959 թ. Նախիջևանի ԻԽՍՀ-ում բնակվում էին 9.519 (Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության 6,7 տոկոսը)[122], 1970 թ. 5.828 (2,9 տոկոս)[123], 1979 թ. 3.406 (1,42 տոկոս)[124] հայեր: Ընդհանուր առմամբ 1926–1979 թթ. ընկած ժամանակահատվածում Նախիջևանի ԻԽՍՀ ադրբեջանական բնակչությունն աճել էր 2,6 անգամ, իսկ հայ բնակչությունը նվազել՝ 3,3 անգամ[125], մինչխորհրդային շրջանի հայկական 44 գյուղերից մնացել էին մի քանիսը:

1988 թ. դրությամբ նախիջևանահայերի թվաքանակը Նախիջևանի ԻԽՍՀ-ում չէր գերազանցում բնակչության մոտ 1,5 տոկոսը, (թեև 1989 թ. Համամիութենական մարդահամարով նշվում է 1.906 հայ (0,65 տոկոս), երբ երկրամասում արդեն հայ չէր մնացել), որոնք ցաքուցրիվ բնակվում էին երկրամասի քաղաքներում և պատմական Գողթան գավառի գյուղերում (Ցղնա, Փառակա, Բիստ, Վերին Ազա, Դեր, Ռամիս, Տանակերտ, Ալահի, Մեսրոպավան): Փաստացի, նախիջևանահայերի համախումբ բնակության վերջին հենակետը Ագուլիսն էր իր 450 ընտանիքներով (մոտ 2.000 մարդ կամ Նախիջևանի ԻԽՍՀ բնակչության մոտ մեկ տոկոսը), իսկ մնացյալ կես

---

[121] Տես Նախիջևան, Երևան, թիվ 1 (28), 2005 (սեպտեմբեր), էջ 14, թիվ 2 (29), 2006 (հուլիս) էջ 16–21:

[122] Տես Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Азербайджанская ССР, Москва, 1963, էջ 140:

[123] Տես Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, Москва, 1973, էջ 19:

[124] Տես Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года, Москва, 1984, էջ 126:

[125] Տես Ходжабекян В., Асатрян Б., Из истории армянского населения Нахиджевана, Вестник общественных наук, № 6(546), Ереван, 1988, էջ 26:

*տոկոսը կամ 1.200 հայերը բնակվում էին վերոհիշյալ գյուղերում, ինչպես նաև Նախիջևան և Ջուլֆա քաղաքներում[126]:*

*ԽՍՀՄ փլուզման շեմին Ադրբեջանական ԽՍՀ-ում աճող հակահայկական տրամադրությունն ու ջարդարարությունը արտահայտվեցին նաև Նախիջևանի ԻԽՍՀ-ում: Հայության վերջնական տեղահանությունն իրագործվեց 1988 թ. նոյեմբերի 22-ին, երբ Նախիջևանի կենտրոնում կազմակերպված հակահայկական հանրահավաքից հետո մոլեռանդ ամբոխը ջարդեց մարզկոմի շենքի դռներն ու պատուհանները, այրեց խորհրդային բանակի երկու հրասայլ, ապա ցրվեց քաղաքով մեկ հայերի նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար: Մինչ կեսգիշերին ուշացումով հայտարարվեց արտակարգ դրությունը՝ քաղաքի վերջին 122 հայ ընտանիքները հեռացել էին:*

*Համանման զարգացումների հետևանքով նույն բախտին արժանացան նաև երկրամասի մնացած հայկական բնակավայրերը: Նախիջևանի ԻԽՍՀ տարածքում կազմակերպված ինքնապաշտպանություն իրականացրեց միայն հայկական Ազնաբերդը, որը, ամիսներ շարունակ օղակված մնալով, դիմակայեց մինչև 1988 թ. դեկտեմբերը: Մինչ խորհրդային զորքերի մուտքը Նախիջևանում անկարգությունները խաղաղացնելու համար, ազնաբերդցիները հետ մղեցին գյուղը գրավելու ադրբեջանական մերձակա գյուղերի զինված խառնամբոխի փորձերը՝ վերջիններիս պատճառելով մարդկային կորուստներ[127]: Խորհրդային բանակի ստորաբաժանումների ադրբեջանամետ գործելակերպը, Հայաստանից օգնություն ակնկալելու հնարավորության բացակայությունը և այլ պատճառների առկայությամբ պայմանավորված, ազնաբերդցիները ստիպված էին նոյեմբեր-*

[126] Տե՛ս Վարդանյան Ա., Ազնաբերդ. Նախիջևանահայության վերջին ամրոցը, Երևան, 2000, էջ 6:
[127] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 21 նոյեմբերի, 2013:

*դեկտեմբերին լքել հայրենի օջախը: Նախիջևանահայերի վերջին մնացորդները գաղթեցին և վերաբնակվեցին հիմնականում Վայքի, Եղեգնաձորի, Արարատի, Արտաշատի, Մասիսի, Կոտայքի շրջաններում և Երևանում:*

*Նախիջևանի հայկական հինավուրց հողը հայաթափվեց. հայկական բնիկ տարրը դուրս մղվեց թե ժողովրդագրական, թե սոցիալ-մշակութային, թե հասարակական-քաղաքական առումներով, ինչն այդ երկրամասում Ադրբեջանի վարած քաղաքականության հիմնական արդյունքն է:*

*1990 թ. հունվարին Նախիջևանի ԻԽՍՀ ԳԽ արտակարգ նիստը ընդունեց որոշում հանրապետությունը ԽՍՀՄ կազմից դուրս հայտարարելու վերաբերյալ: Նախիջևանի որպես Ինքնավար Հանրապետության (ՆԻՀ) «վերադարձը» Ադրբեջանի կազմ չի փոխել այդ երկրամասի հետ կապված աշխարհաքաղաքական ծրագրերը, որոնք բացահայտ ուղղված են Հայաստանի հանրապետության դեմ:*

*
* *

*Այսպիսով, ԽՍՀՄ փլուզման նախօրյակին Հայկական ԽՍՀ-ից դուրս, միութենական հանրապետություններում բնակվում էր ավելի քան 1,5 միլիոն հայ: Հայաբնակ էին բոլոր միութենական հանրապետությունները, հատկապես ՌԽՖՍՀ-ն, Վրացական, Ադրբեջանական և Ուկրաինական ԽՍՀ-ները: Միութենական հանրապետությունների հայահոծ համայնքներում գործում էին հայկական կրթամշակութային հաստատություններ, եկեղեցիներ, համայնքային, հասարակական և բազմաբնույթ այլ կառույցներ:*

*Հետխորհրդային շրջանում նախկին միութենական հանրապետություններում գործող հայկական ազգային-համայնքային կազմակերպությունների թիվը անհամեմատ աճեց, նրանց գործունեությունը դարձավ ավելի համակարգված, սկսեցին ձևավորվել հանրապետական մասշտաբի համայնքային կառույցներ (Ռուսաստանի հայերի միություն, Ուկրաինայի հայերի միություն, Վրաստանի հայերի միություն և այլն), որոնք ստանձնեցին հայության համախմբման և հայապահպանության խնդիրների տնօրինումը: Համայրում առաջած հայկական այս համայնքներում կարճ ժամանակ անց արձանագրված կարևոր ձեռքբերումների կողքին նկատելի էին նաև բացթողումներ, կազմակերպական խնդիրներ, հայապահպանությանն ու հայկականությանը վտանգող մարտահրավերներ:*

# ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ



Սանկտ Պետերբուրգի
Սբ. Կատարինե եկեղեցին



Քիշնևի Սբ. Աստվածածին
եկեղեցին



Դոնի Ռոստովի Սուրբ Խաչ
եկեղեցին



Ղրիմի Սուրբ Խաչ վանքը





Լվովի Սբ. Աստվածածին եկեղեցին



Թբիլիսիի Էջմիածնեցոց
եկեղեցին



Բաքվի Սբ. Գրիգոր
Լուսավորիչ եկեղեցին



Սամարղանդի Սբ. Աստվածածին եկեղեցին

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
## (արխիվային փաստաթղթեր, աղյուսակներ, նյութեր)

Հավելված 1

## ՌՈՒՍԱՍՏԱՆԻ (ՄՈՍԿՎԱ) ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ՝ «ԲԱՐԵՎ ՁԵԶ»-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

**УТВЕРЖДЕН**
**Учредительной конференцией**
**московского общества армянской**
**культуры ДОБРО ВАМ - БАРЕВ ДЗЕС**
**Москва. 17 апреля 1988 г.**

## УСТАВ
### МОСКОВСКОГО ОБЩЕСТВА АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ ДОБРО ВАМ - БАРЕВ ДЗЕС

I. ОБЩИЕ ПОЛОЖЕНИЯ

1. Московское общество армянской культуры ДОБРО ВАМ является общественной организацией, действующей на основе самоуправления в соответствии со Статьей 51 Конституции СССР и на основании настоящего Устава.

Учитывая положение вышеупомянутой Статьи Конституции СССР, где указано, что «с целями коммунистического строительства граждане СССР имеют право объединяться в общественные организации способствующие развитию политической активности и самодеятельности, удовлетворению их многообразных интересов», а также принимая во внимание, что Конституция СССР является Основным законом СССР и

никакому иному произвольному толкованию или изменению, кроме дополнений и исправлений принятых и утвержденных Верховным Советом народных депутатов СССР, не подлежит, общество ДОБРО ВАМ учреждается как орган армянской общественности города Москвы, насчитывающей, на данный момент 80 тысяч человек, и считает себя юридически подчиненным Московскому Совету народных депутатов как организация, состоящая из 50 тысяч армян, которые родились и выросли в Москве в связи с историческими и культурными связями Армении и России, насчитывающими более 300 лет, а также из 30 тысяч армян, прибывших в столицу СССР согласно кадровой политике Союза ССР.

2. Будучи в Советском Союзе его столичной общественной организацией общество ДОБРО ВАМ действует на всей территории СССР, где проживают армяне, неукоснительно соблюдая при этом законодательство СССР и союзных республик, а также через общество РОДИНА и Комитет по связи с соотечественниками за рубежом АрмССР поддерживает культурные связи с прогрессивными армянскими организациями и отдельными лицами за рубежом, рассматривая, однако, общество РОДИНА и Комитет по связи с соотечественниками за рубежом АрмССР как равных партнеров.

Учитывая исторические культурные связи армянского и русского народа, выразителем которых долгое время являлся Лазаревский институт восточных языков / здания и корпуса этого института ныне расположены в Армянском переулке Бауманского района/, общество ДОБРО ВАМ рассматривает Бауманский район города Москвы как свой базовый.

II. ЗАДАЧИ ОБЩЕСТВА

Основными задачами общества ДОБРО ВАМ являются:

а/ содействие успешному разрешению задач, выдвинутых Коммунистической партией Советского Союза и Советским государством в области совершенствования межнациональных отношений, укреплению

дружбы и взаимопонимания между народами СССР, а также с целью укрепления мира во все мире, укреплению дружбы и сотрудничества между проживающими за рубежом прогрессивными армянами с их соотечественниками в Советском Союзе.

б/ содействие удовлетворению культурных и духовных потребностей, армян-москвичей и обучающихся в столичных вузах армянских студентов, а так же армян, проживающих на территории РСФСР и в других республиках СССР;

в/ содействие ознакомлению трудящихся Москвы и студенческой молодежи с историей Армении, развитием науки и культуры Армянской ССР в братской семье советских народов;

г/ создание культурно-торговых кооперативов и кооперативных кафе-закусочных армянской национальной кухни;

д/ помощь армянам - москвичам и обучающимся в столице армянским студентам в более углубленном изучении народных традиций, обычаев и обрядов, истории и культуры других народов СССР, имея при этом в виду, что такой путь ведет не только к духовному взаимообогащению, но и к уважению, а значит, и к более крепкой дружбе между людьми разных наций, составляющих многонациональное население столицы СССР.

## III. ДЕЯТЕЛЬНОСТЬ ОБЩЕСТВА

Для претворения в жизнь поставленных перед собой задач общество ДОБРО ВАМ:

а/ сотрудничает с партийными, государственными, комсомольскими, профсоюзными и общественными организациями, творческими союзами и их учреждениями, Советским и Армянским фондами культуры, Художественным фондом АрмССР и Армлитфондом, Академией наук АрмССР и ее учреждениями, обществом «Знание» АрмССР, учебными заведениями, музеями, библиотеками, переодическими изданиями и другими средствами массовой информации, включая Гостелерадио СССР и

Гостелерадио АрмССР, Госкомиздатом АрмССР, армянскими издательствами книготоргующими организациями, отдельными представителями армянской науки и культуры, с Католикосом всех армяк, организациями и ведомствами, курирующими армянские народные художестве, иные промыслы предприятия, выпускающие изделия, отражающие армянские национальные мотивы:

б/ опираясь на авторитет и заинтересованность партийных и государственных органов АрмССР, Армсовпрофа, ЦК ЛКСМ, других организаций Армении, а также на традиционно дружеские связи Бауманского района Москвы со столицей АрмССР, мобилизует все свои возможности для внесения посильного вклада в создание Культурно-торгового центра Армении в Москве, в котором видит не только центр пропаганды армянской культуры, но и цент; центр, предоставляющий москвичам и гостям столицы СССР дополнительные возможности для приобретения ими армянских книг и популярных переодических изданий, альбомов и картин мистеров изобразительного искусства, предметов народных художественных промыслов и промышленных изделий, издаваемых по армянским национальным мотивам, а также возможность знакомиться – с армянской национальной кухней;

в/ на начальном этапе своей деятельности для осуществления изложенного в пункте «б» имеет в виду: полностью реконструировать под указаныи Культурно-торговый центр комплекс зданий в Армянском переулке, принадлежавших Лазаревскому институту – дома №№3/5 – 7, дом № 2 по Армянскому переулку, он же № 6 по Кривоколенному переулку, где располагался «малый типографский корпус» Лазаревского института восточных языков. Все эти здания были в свое время необоснованно переданы Бауманскому району постоянным представительством АрмССР, как не нужные представительству, в то время, как каждый из этих домов являтся исторически памятником, отражающим исторические связи армянского и русского народов, ведь располагавшийся в них институт был крупным культурным и научным центром, сыгравшим значительную роль в истории русско-армянских связей и в развитии

культуры армянского народа. Помимо указанного выше комплекса зданий Лазаревского института придать центру также дом на Садово-Черногрязской, принадлежавший издателю Степаносу Назарянцу, где располагалась редакция журнала «Северное сияние».

С практической и методической помощью со стороны Министерства культуры АрмССР, Армсовпрофа, ЦК ЛКСМ и других заинтересованных республиканских организаций и творческих союзов организует:

постоянно действующий музыкально-драматический театр, ансамбль песни и танца, оркестр народных инструментов;

музей русско-армянской дружбы в помещении бывших гражданских палат Милославских, входивших с 1826 года в комплекс зданий Лазаревского института, а в настоящий момент принадлежащих постпредству АрмССР;

армянскую библиотеку;

киоски армянской периодики и литературы,

магазин армянской книги ДОБРО ВАМ,

культурно-торговых кооперативов и кооперативных кафе-закусочных армянской национальной кухни,

г/ организует:

кружки художественной самодеятельности, а также кружки по интересам и клубы, вовлекая в них как армян-москвичей и обучающихся в московских вузах студентов-армян, так и лиц других национальностей;

литературно-музыкальные концерты с участием, в них лучших самодеятельных коллективов и профессиональных армянских артистов;

просмотры армянских кино-телефильмов и тематических передач – Гостелерадио АрмССР;

вечера поэзии с участием поэтов, переводчиков с армянского и армянских поэтов, переводчиков с других языков народов СССР, а также тематические вечера оригинальной армянской поэзии с привлечением для участия в них как видных поэтов Армении и артистов чтецов, так и литературоведов;

встречи с армянскими деятелями науки и культуры, писателями, разрабатывающими, как современную, так и историческую тематику, лекторами общества «Знание» АрмССР, способными достаточно компетентно рассказать о всех аспектах современной общественной жизни в республике, а также о проблемах, которые возникают в ходе осуществляемой в стране перестройки и как они разрешаются;

встречи с представителями армянских литературно-художественных журналов, с целью ознакомления с перспективными планами издательств, что должно способствовать Обществу в распространении указанных журналов как среди армян-москвичей и обучающихся в армянских вузах студентов-армян, так и в других районах и областях Советского Союза, где проживает значительное количество армян, не утративших родного языка, особенное внимание уделяя при этом армянским детским журналам, которые дублируются также на русский язык;

встречи с лучшими советскими педагогами с целью ознакомления с достижениями советской педагогической науки и особенно с этнопедагогикой народов СССР;

выставки-ярмарки книг армянских издательств;

выставки армянского изобразительного искусства, прикладного искусства, а также выставки-распродажи;

гастрольные поездки музыкально-драматических и лучших самодеятельных коллективов;

д/ ежегодно присуждает премии имени У. Сарояна в области поэзии, литературы и кино;

е/ участвует в проводимых в РСФСР праздниках славянской письменности;

ж/ проводит совместные просветительные мероприятия с Историческим музеем Москвы и Эрмитажем;

з/ устанавливает дружеские связи с аналогичными Обществами и Товариществами москвичей других национальностей / такими как: московское товарищество почитателей украинской культуры «Слазутич», московское общество почитателей древнерусской культуры «Слово о

полку Игореве» и аналогичными / и совместно с ними устраивает фестивали национальной песни, танца, народной музыки, проводить которые считает целесообразным преимущественно в домах культуры и клубах крупных московских предприятий, и высших учебных заведений столицы;

и/ особое внимание уделяет воскресным школам и дошкольным группам по изучению армянского языка, а также усовершенствованию в нем;

к/ ведет активную работу по героико-патриотическому и интернациональному воспитанию;

л/ в связи с нахождением за рубежом ряда прогрессивных армянских культурных центров. объединяющих около трех миллионов армян, разрабатывает концепцию международной деятельности для широкого обмена культурными ценностями, творческим опытом, пропаганды лучших достижений армянской культуры в братской семье советских народов в интересах мира, дружбы и взаимопонимания между народами, борьбы против ядерной угрозы, за выживание человечества;

м/ проводит в СССР международные конференции, симпозиумы, семинары по проблеммам армянской культуры, организует работу соответствующих секций, участвует в аналогичных мероприятиях за рубежом;

н/ издает на армянском и русском языках ежемесячный информативный бюллетень, также двуязычный ежеквартальный научно-художественный и общественно-политический иллюстративный альманах ДОБРО ВАН, а так же книжные приложения к нему, монографии, фотоальбомы, фотооткрытки, календари.

о/ в связи с возможным переизданием альманаха ДОБРО ВАМ и книжных приложений к нему за рубежом, одним из указанных выше армянских культурных центров. Общество совместно с ВААП контролирует соблюдение авторских прав членов Общества за рубежом.

## IV. ОРГАНИЗАЦИОННОЕ СТРОЕНИЕ ОБЩЕСТВА

1. Деятельность Общества осуществляется в соответствии с принципом демократического централизма: выборность руководящих органов, их переодическая отчетность перед общим собранием членов, коллегиальность в работе руководящих органов Общества.

2. Высшим органом Общества является общее собрание членов, созываемое не реже одного раза в год.

3. Общее собрание заслушивает доклады Секретариата и Совета Общества, а также его ревизионной комиссий, дает им свою оценку, в соответствии с основными направлениями работы Общества и в отдельных случаях, ставит вопрос об освобождении не справляющихся со своими обязанностями или скомпрометировавших себя членов Общеетва, вносит в Устав Общества изменения и дополнения, открытым голосованием избирает Совет общества и его почётных членов, определяет их количественных и персональный состав. Избранными считаются кандидатуры, получившие большинство голосов.

Первый секретарь и Секретариат Общества избираются сроком на пять лет и могут быть переизбраны не более как на два срока. На третий срок в виде исключения могут быть избраны только лица, проявившие особые заслуги перед Обществом.

4. В период между общими собраниями деятельностью Общества руководящего первый секретарь, Секретариат и Совет Общества избираемый ежегодно Первый секретарь, Секретариат и Совет Общества организуют претворение в жизнь решений общего собрания, создают с учётом запросов членов Общества тематические секции, культурно-торговые кооперативы и работающие на кооперативных началах художественные ансамбли, заключают гуманитарные и деловые договора с предприятиями учреждениями и организациями, ведают финансово-хозяйственной деятельностью Общества, созывают, по мере необходимости, собрания его членов. Совместные заседания Секретариата и Совета Общества проврдится не реже двух раз в квартал.

5. Совет общества ДОБРО ВАМ:

а/ рассматривает ежегодные отчёты Секретариата о его деятельности,

б/ определяет количественный состав Секретариата, устанавливает процедуру голосования и избирает первого секретаря и Секретариат Общества,

в/ утверждает структуру рабочих органов Общества,

г/ в необходимых случаях тайным голосованием принимает решение о выводе из состава Совета и кооптации в состав Совета новых членов,

д/ Избранными в состав Совета или выведенными из него считаются кандидаты, получившие не менее, двух третий голосов, присутствующих на Совете членов.

6 По истечении пяти лет после выборов руководящих органов Общества, Совет Общества рассматривает вопрос о практической деятельности секретарей и рёшает вопрос о переизбрании тех, кто не проявил себя в общественной деятельности Общества.

Секретарями Общества могут быть только члены Общества зарекомендовавшие себя в практической работе одной из комиссий Общества началах по секциям-комиссиям общества, на основакии заявления желающего вступить в Общество и рекомендации одного из членов Общества.

Отказ в приеме может быть обжалован в Секретариате Общества как самим вступающим, так и рекомендовавшим его лицом. Решение Секретариата Общества по вопросу о приеме является окончательны. При отказе повторное заявление о вступлении в Общество может быть подано не ранее, чем через два года.

3. Исключение из членов Общества проводится теми же органами, которым предоставлено право приема. Исключенный из Общества может вновь вступить в него на общих основаниях по истечении 5 - летнего срока.

4. Коллективное членство Общества строится на взаимовыгодных началах – на договорах между каждым коллективным членов /коллективом трудящихся/ и Секретариатом Общества.

5. Почётные члены Общества и его Совета избираются на общем собрании членов Общества простым большинством голосов.

6. Индивидуальный член Общества имеет право:

а/ избирать и быть избранным в Совет Общества и его Секретариат,

б/ участвовать в организаторской, культурно-массовой и иной деятельности Общества,

в/ получать от Совета Общества и Секретариата консультации по методике его работы,

г/ вносить в соответствующие органы Общества предложения по улучшению работы Общества и подведомственных ему предприятий и учреждений.

7. Почётные члены Общества равноправно с остальными его членами участвуют во всех проводимых им мероприятиях, имея право вносить свои предложения для улучшения его работы по тем или иным направлениям.

8. Почётные члены Совета Общества в силу их служебного или общественного положения, каждый в своей област, вправе оказывать непосредственное влияние на соответствующие участки деятельности Общества, но не в административном порядке.

9. Московские коллективные члены Общества вправе требовать от Секретариата и Совета Общества активного содействия в улучшении их кооперативных, производственных или иных связей с предприятиями, учреждениями и организациями АрмССР; аналогичные требования к Секретариату и Совету могут исходить от его армянских коллективных членов для соответствующего воздействия на их коллег в Москве.

10. Все члены Общества имеют членские билеты, индивидуальные – с фотографиями владельцев, коллективные – в особом изготовлении.

11. члены общества ДОБРО ВАМ как индивидуальные, так и коллективные обязаны соблюдать настоящий Устав, принимать активное участие в работе Общества и способствовать пополнению его рядов.

## VI. СРЕДСТВА ОБЩЕСТВА

1. Средства Общества образуется из вступительных и ежегодных взносов его индивидуальных и коллективных, членов, добровольных взносов профсоюзных, комсомольских и общественных организаций, Советского и Армянского фондов культуры, художественного фонда АрмССР и Армлитфонда, творческих союзов АрмССР, АН АрмССР, общества «Знание» АрмССР и отдельных лиц; а так же из государственных субсидии АрмССР, предназначенных на оказание финансовой и фондовой помощи общественным организациям и их кредитование, отчислений от культурно-торговых кооперативов, кооперативных кафе-закусочных национальной кухни Общества и проводимых им платных мероприятий и издательской деятельности, отчислений от прибылей собственных предприятий и организаций, в том числе от Культурно-торгового центра Общества, иных поступлений от советских и зарубежных граждан и организаций.

2. член Общества уплачивает вступительный взнос в размере 5 рублей и ежегодные членские взносы в размере 5 рублей; для учащихся и студентов соответственно 1 рубль и 3 рубля; вступительные и ежегодные взносы коллективных членов определяются договорами сторон.

3. Почётные члены Общества и его Совета от уплаты вступительных и ежегодных взносов освобождаются.

4. Право распоряжаться денежными средствами принадлежит Секретариату Общества и его первому секретарю.

5. Контроль за правильностью расходования средств Общества осуществляет ревизионная комиссия, которая, руководствуется при этом положением о ревизионных комиссиях общественных организаций.

VII. ПРАВА ОБЩЕСТВА

1. Общество ДОБРО ВАМ находится на самостоятельном балансе и является юридическим лицом. Оно имеет свой текущий счет в Сберегательном банке СССР, свой валютный счёт во Внешторгбанке СССР, печать, бланки, конверты с соответствующими наименованиями, свою эмблему и значки для членов Общества.

2. Доверенности, договоры и другие финансовые документы от имени Общества подписываются первым секретарем, секретарем по оргвопросам, главным бухгалтером и другими лицами уполномоченными на то Секретариатом Общества.

3. Общество имеет право: приобретать и отчуждать имущество, заключать договоры, создавать хозрасчётные предприятия, соответствующие уставным целям Общества, пользоваться кредитом, предъявлять иски и отвечать по искам в судах и государственных арбитражах, иметь текущий и рассчетный счётав банках.

4. Местонахождение Секретариата и Совета Общества ДОБРО ВАМ – город Москва.

**Протокол № 2**

Учредительной Конференции московского общества армянской культуры.

Присутствовали 110 делегатов, представляющих 80 тысяч армян-москвичей.

Повестка дня:

1. Обсуждение и утверждение Устава Общества и его название.

2. Выборы руководящих органов Общества.

Слушали:

1. Мирзояна Э. М. – председателя Союза композиторов АрмССР, который подчеркнул необходимость создания в Москве центра армянской культуры. Мирзояна Э. М. рассказал об истории существовавшего в Москве Дома Культуры Армении, закрытого в 1953 году по инициативе Л. Берии. Мирзоян подчеркнул, что за последние десятилетия в Москве

выросло новое поколение армян, которые остро нуждаются в едином городском центре, где бы они могли знакомиться с родной армянской культурой, изучать родной язык.

Если это необходимо, от имени общественности Еревана, которую Мирзояна представляет на конференции, он готов заверить делегатов, что обществу армянской культуры в Москве республика окажет всестороннюю помощь и при необходимости, СК АрмССР готов выступить учредителем будущего общества.

2. Баратов Б. С. зачитал по поручению Оргкомитета Устав, подготовленный инициативной группой, а также в качестве названия предложил: ДОБРО ВАМ – БАРЕВ ДЗЕС.

В прениях по Уставу приняли участие Хачатуров, Тяпкин, Саркисов, Геворкян, Аразян, Арутюнян, Гловацкая – всего 19 делегатов.

Постановили:

Единогласно принять проект Устава общества за основу и утвердить Устав с учетом высказанных предложений и пожеланий, внести которые в Устав поручить будущему Секретариату и Совету Общества. Корректировку формулировок провести в рабочем порядке.

Название общества ДОБРО ВАМ утвердить.

В связи с принятием Устава Общества Баратов Б.С. зачитал подготовленные оргкомитетом предложения-относительно его структурного строения, предложив создать 20 постоянных комиссий:

1. По организации Культурно-торгового центра в Москве.
2. По идеологии, социологическому изучению и учёту общественного Мнения.
3. По армянской истории, краеведению, этнографии, археологии и правоведению,
4. По армянскому, языку и литературе.
5. По армянской народной педагогике и этнопедагогике других народов СССР.

6. По героико-историческому и интернациональному воспитанию и работе с армянской студенческой молодежью в Москве и связям с ЦК ВЛКСМ, ЦК ЛКСМ и МГК ВЛКСМ.

7. По связям с творческими союзами АрмССР, Советским и Армянским фондами культуры, художсственным фондом АрмССР и Армлитфондом.

8. По связям с АН АрмССР, ее учреждениями, обществом «Знание» АрмССР

9. По связям с Госкомиздатом АрмССР, издательствами и книготоргующими организациями АрмССР.

10. По сотрудничеству с обществами «Родина» и Комитетом по связи с соотечественниками проживающими за рубежом и Комитетом молодежных организаций АрмССР.

11. По связям с аналогичными обществами и товариществами в Москве других народов СССР и армянами, проживающими на территории РСФСР и других республиках СССР.

12. По связям с коллективными членами общества ДОБРО БАМ.

13. По связям Госкомспортом АрмССР и его спортивными учреждениями и организациями.

14. По связям со средствами-массовой информации

15. По финансово-хозяйствекной деятельности.

16. По редакционно издательской деятельности.

17. По народной и профессиональной музыке.

18. По народной и профессиональной живописи, скульптуре, архитектуре.

19. По народному и профессиональному театру.

20. По оказанию помощи пожилым и одиноким людям, а также людям попавши в беду, учредить секцию милосердия.

Предложенные Оргкомитетом секции решено утвердить единогласно.

В ходе выборов в Совет общества и его Секретариат утверждено 33 человека. Большинством голосов избраны:

Первый секретарь Общества – БАРАТОВ Борис Суренович, член Союза кинематографистов, кинорежиссер и кинодраматург.

Ответственный секретарь по оргвопросам – АРУТЮНЯН Сергей Маратович - врач.

Секретарь Общества по народной и профессиональной живописи – АСЛАМАЗЯН Мариам Аршаковна, Народный художник АрмССР.

Секретарь Общества по народному и профессиональному танцу – БАЛИЕВА АГНЕССА СУРЕНОВНА, Заслуженная артистка РСФСР.

Секретарь Общества армянскому языку и литературе – БАЯНДУР АНАИТ СЕРГЕЕВНА, переводчик, писатель, член СП СССР.

Секретарь Общества по армянской школе и преподованию языка - ДЕМУРОВ Игорь Георгиевич, педагог.

Секретарь по связям с АН АрмССР – САРКИСОВ Михаил Арутюнович, профессор МГУ.

Секретарь по народной и профессиональной музыке – ГАДЗИЕВ Аршак Рубенович, член СК СССР, преподаватель музыки.

Помимо избранных, секретарей Общества в Совет Общества большинством голосов избраны:

1. Айрапетян Роберт Милитонович - кандидат исторических наук, лектор кафедры истории КПСС.
2. Аджемян Артак Левонович – студент МАИ.
3. Амбарцумян Борис Джангирович – экономист.
4. Андриасова Нинель Аркадьевна – дирижер, член СК СССР.
5. Багдасарян-Гловацкая Татьяна Владимировна – аспирант ЦЭМИ АН ССР, член комиссии по социалистическим странам Комитета сов. женщин.
6. Бегларян Левон Андраникович – доцент ЦИПКК МАП.
7. Геворкян Ваган Мамиконович – журналист, кандидат юридических наук, редактор журнала «США – экономика, политика, идеология».
8. Гиндоян Андраник Геворкович – профессор, заведующий лабораторией ЦНИИ Госстроя.
9. Григорян Александр Аркадьевич – преподаватель МГУ.

10. Балаян Роман Саркисович – кинорежиссер, член СК ССР. секретарь СК.

11. Григорян Самвел Самвелович – член/корр АН СССР, зав.каф. МГУ.

12. Ениколопов Николаи Сергеевич – академик. АН СССР.

13. Иванченко Александр Семенович – председатель общества почитателей: украинсой Культуры, писатель, член СП СССР.

14. Лисициан Павел Герасимович – Народный артист СССР.

15. Нуриджанов Эдвин Саркисович – журналист, член СЖ СССР.

16. Погосян Анушаван Григорьевич – журналист, член СЖ СССР.

17. Саркисов Армен Суренович – врач.

18. Серопянц Риго Артемьевич АН СССР, директор инж. центра АН СССР.

19. Хачатуров Тигран Сергеевич – академик

20. Халпахчьян Оганес Хачатурович – архитектор

21. Степанян Карен Левонович – журналист, член СЖ СССР

ПОЧЕТНЫЕ ЧЛЕНАМИ ОБЩЕСТВА

единогласно избраны:

1. Амбарцумян Виктор Амазаспович – президент АН АрмССР.

2. Аревшатян Сен Суренович – директор Матенодарана, председатель фонда культуры АрмССР

3. Асратян Григорий Иванович – директор музея этнографии.

4. Арутюнян Мартын Карапетович – председатель Совпрофа АрмССР.

5. Ахумян Семен Тигранович – министр просвещения АрмССР.

6. Битов Андрей Георгиевич – писатель.

7. Габриелян Гурген Артёмович – поэт.

8. Григорян Рафаэль Духикович – председатель союза потребительских обществ АрмССР.

9. Даллакян Карлен Левонович – председатель комитета по связи с соотечественниками за рубежом.

10. Довлатян Фрунзе Вагинакович – кинорежиссер, народный артист СССР

11. Драч Иван Федорович – поэт.

12. Дудин Михаил Александрович – поэт.

13. Игарян Ованес Мкртичевич – директор дворца молодежи.

14. Игитян Генрих Суренович – директор центра эстетического воспитания детей.

15. Капланян Грачья Никитич – председатель театрального общества АрмССР.

16. Калашьян Лорис Хачатурович – журналист, первый заместитель председателя общества «Знание».

17. Мелик-Огаджанян Юрий Аветисович – министр культуры АрмССР.

18. Мансурян Тигран Егиаевич – композитор.

19. Маркарян Маро Егишевна – поэтесса.

20. Матевосян Грант Игнатьевич – писатель.

21. Мирзоян Эдвард Михайлович – композитор, первый секретарь союза композиторов АрмССР.

22. Мугнецян Гегам Минаевич – председатель Госкомиздата АрмССР

23. Нуриджанян Марат Артаваздович – председатель Госкомспорта АрмССР.

24. Овсепян Рубен Георгиевич – писатель, секретарь СП АрмССР.

25. Пиотровский Борис Борисович – археолог, директор Эрмитажа.

26. Погосян Степан Карпович – председатель Гостелерадио АрмССР.

27. Саркисян Завен Андраникович – директор музея народного творчесчтва.

28. Симонов Евгений Рубенович – народный артист СССР, директор театра «Дружба народов» в Москве.

29. Старовойтова Галина Васильевна – этнопсихолог

30. Туманян Тамар Ованесовна – дочь классика армянской литературы Ованеса Туманяна, директор музея Туманяна.

31. Шираз Ара Аванесович – художник, первый секретарь союза художников АрмССР.

Протокол вела / Т.В. Багдасарян-Гловацкая/.
/подпись/

**МОСКОВСКОЕ ОБЩЕСТВО АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ**

**СЕКРЕТАРЮ МГК КПСС**
**тов. КАРАБАСОВУ Ю.С.**

ПОЯСНИТЕЛЬНАЯ ЗАПИСКА

Уважаемый Юрий Сергеевич,

Как Вы хорошо знаете, 17 апреля 1988 года, в Москве, начало свою работу московское общество армянской культуры ДОБРО ВАМ – БАРЕВ ДЗЕС, о чем 21 апреля 1988 года было сообщение ТАСС.

Свою работу Общество начало с визита в отдел культуры МГК КПСС, чтобы в соответствии со Статьей 6 Конституции СССР, Вы могли лично ознакомиться с задачами нашего Общества и Уставом.

Нашу делегацию принял Ваш инструктор, ведающий охраной памятников культуры, он заверил нас, что ознакомит Вас с нашей просьбой – решить вопрос регистрации Общества армянской культуры как самоуправляемой общественной организации, являющейся юридическим лицом и имеющей свой расчётный счет, печать и бланки.

Цели и задачи Общества подробно изложены в Уставе, который мы разработали совместно с товариществом почитателей украинской культуры «Славутичем», можно сказать, что уставы наши практически унифицированы

В лице товарищества «Славутич» мы нашли единомышленников, совместно с которыми мы планируем проведением в столице ряда совместных, мероприятий: совместные концерты, и культурные мероприятия, объединенные ярмарки – распродажи изделий народных промыслов, объединённые гастроли творческих коллективов общества ДОБРО ВАМ и «Славутича» в Армению, на Украину и в другие республики СССР. Сегодня, можно сказать, что наши деловые, дружеские и творческие контакты с товариществом «Славутич» плодотворно развиваются. Председатель «Славутича» Иванченко А.С. является одновременно действующим членом общества ДОБРО ВАМ; первый секретарь нашего общества – действующий член Совета «Славутича».

Для чего мы всё это делаем?

Полагаем, что совместно со «Славутичем» мы создали в столице нашей Родины Москве новые институты межнациональных отношений, основанные на единении людей доброй воли, на принципах подлинного интернационализма и уважении к культурам других народов, проживающих в многонациональной столице СССР.

Демократизация общества, во многом решающая судьбу перестройки, неминуемо должна была, как скальпель вскрыть пороки в развитии национальных отношений, в интернациональном воспитании советских людей, накопившиеся за долгий период застоя. Недопонимание того, что национальное достоинство и национализм – разные категории, и что «каждая национальная культура – драгоценность, которую немыслимо потерять», привело нас к негативным явлениям в Нагорном Карабахе и Сумгаите. Понятно, что возникают все эти явления не на пустом месте, «и в частности из-за бюрократизма, игнорирования законных прав».

Хочу сразу, прояснить мою позицию по вопросу Нагорного Карабаха – Арцаха. Армяне называют эту горную страну – Арцах. Так случилось, что Вам пишет человек, чей род долгий и длинный уходит своими корнями в каменистые нагорья Арцаха. Арцах – мой отчий

край, земля моих отцов и дедов, и их дедов, и их прадедов, это – исконная армянская земля, земля святая для сердца и души каждого армянина, ибо, это – наша колыбель, колыбель нашей культуры, нашей цивилизации, нашего языка. Арцах – это наши Афины, наш Рим, наша Киевская Русь. Включение этой исконной армянской земли, с проживающим на нёй народом, который в 1920 году на 95% состоял из лиц армянской национальности /сегодня-75%/, в состав Азербайджана, есть историческая несправедливость, которую необходимо исправить.

В период, когда детонировали события в Нагорном Карабахе и Сумгаите я высказался по этому вопросу открыто и достаточно громко. Однако, будучи гражданином СССР, полагаю, что только правительство СССР правомочно решать как этот вопрос, так и многие другие наболевшие вопросы, полагаю, что наш долг всеми силами содействовать нашему правительству в решении этого вопроса на демократической основе, а не оказывать на него давление актами терроризма и вандализма – убийством ни в чем не повинных людей и разрушением культурных памятников, воздвигнутых на земле нашим народом.

А теперь, позвольте, от памятников культуры, которые пострадали от рук вандалов на территории Азербайджанской ССР, я перейду к памятнику, который мой народ воздвиг на российской земле. Одним из таких памятников, которые мы воздвигли в Москве, когда я говорю мы, я говорю это с гордостью, ибо это мои предки воздвигли и построили комплекс зданий в Армянском переулке. Каждое из этих зданий является историческим памятником, отражающим более чем 300 – летние связи русского и армянского народа, ведь расположенный в них институт был крупным научным и культурным центром, сыгравшим значительную роль в истории русско-армянских связей и в развитии культуры армянского народа. Безнравственно было закрыть этот культурный центр и распустить работавших в нем людей.

Сейчас, в одном из зданий бывшего Лазаревского института находится Поспредство АрмССР. Конечно, это хорошо, что оно там нахо-

дится, ведь это здание символизирует дружеские связи наших народов. И все же, при всем моем уважении к Армянской. ССР, я должен сказать, что прошедшие месяцы и события показали полную-беспомощность и несостоятельное этого учреждения АрмССР, его оторванность от армянской общественности города Москвы. Более того, своими необдуманными поступками и заявлениями поспред усилил беспорядки и возмущение среди людей. Так, в период негативных явлений в Азербайджанской ССР поспред эмоционально травмировал многих армян-москвичей, так как не впустил их в здание поспредства, когда эти люди пришли туда, чтобы узнать о судьбе родных и близких, проживающих на территории Азербайджанской ССР. Эти люди пришли к поспреду, чтобы совместно с ним обсудить известия из Сумгаита, а их остановили у дверей: «кто вы такие ?» Мы вас сюда не звали. У нас режимное учреждение, мы – канцелярия Демирчяна, мы строго хозяйственная организация, мы занимаемся-промышленностью, экологией, и вообще, вы граждане РСФСР – вам у нас делать нечего!»

И вот люди, пришедшие в поспредство за советом, столпились как пасынки за дверьми, под окнами поспредства, начали кучковаться и возмущаться по всему Армянскому переулку, так что властям пришлось вызвать усиленные наряды милиции.

Ну, посудите сами, как это может подействовать на людей нашего плана? И спрашивается, куда двинулись все те, кому нет места в представительстве АрмССР, куда подались люди? На кладбище, как Вы знаете, выяснилось, что негде больше армянам-москвичам встретиться и обсудить травмирующие их известия. И вот, люди в количестве 600 – 800, до 1000 человек подались на кладбище, и стали собираться там каждое воскресенье, и стоя там на могилах своих предков, на могильных плитах и камнях начали бесконечные митинги. Туда же пожаловали и зарубежные телекомпании и репортёры со всего света, ясно, что нашей прессы там не было, и всё превратилось в безобразное представление, в унижение нашего национального достоинства. Люди

стояли на могилах своих отцов и дедов, многие из которых переехали в Москву после кровавой резни армян в Западной Армении и Азербайджане в 1915 году, и мучительно пытались сообразить, что же они должны делать в этой ситуации. Ведь рядом с нами на том же кладбище, стоя на тех же могильных камнях рыдали люди, которые только что вырвались из кошмара Сумгаита, эти люди попали в беду, они просили нас о помощи. И мы старались чем-то помочь им, утешить их, собрать для них какие-то деньги, ведь это – люди, и эти люди к тому же наши соотечественники, ведь при тебе плачет человек, твойродственник, у которого сгорел дом, убита жена, изнасилована дочь.

И вот тут, на кладбище, многие из нас армян-москвичей поняли простую истину – нет у нас в этом необъятном городе другого места, кроме кладбища, где мы могли бы собраться вместе, чтобы обсудить какую-то проблему обратиться к властям или к нашему правительству.

Оказалось, что поспредство АрмССР не является институтом подобного типа, а позиция поспреда является отголоском затхлых времен. Не разобравшись в сути происходящих событий, поспред АрмССР Айказян выступил на кладбище перед собравшейся толпой /словно у поспреда АрмССР нет в Москве места, чтобы проинформировать людей/, поспред выступил с провокационным заявлением, возмутившем всех собравшихся людей.

Затем, не ведая и не понимая настроения студенчества и всех честных людей, как армян, так и русских, и лиц других национальностей, потрясённых трагедией, произошедшей в Сумгаите, поспред АрмССР Айказян личным распоряжением отправил беженцев из Сумгаита, которые пришли к нему за помощью, как приходят к родной матери ушибленные плачущие дети, чтоб та пожалела их и залечила раны; и этих истерзанных, оскорбленных, растоптанных людей поспред Армении отправил в Азербайджанское поспредство. Айказян заявил этим людям, что они граждане Азербайджана, и им необходимо вернуться в Азербайджан.

Трудно сказать, чем руководствовался этот человек, но возмущены были все, начались стихийные митинги и демонстрации, в которых приняла участие люди разных национальностей. Неужели поспред не понимает, что его действия приводят к негативным явлениям и становятся опасны.

Опасность заключается в том, что оттолкнув от себя людей, не впустив их в поспредство, поспред допустил митинги на кладбище. Но ведь кладбище не место для митингов, да и люди, которые выступают на кладбище, часто не видят ситуацию, не владеют вопросом, часто они политически безграмотны, озлоблены, а иные, пользуясь ситуацией стараются натравить один народ на другой, шепчут что-то об освобождении. Периодически выступает на митингах некий Наапетян Корюн, который позволяет себе выступать то от имени армян, проживающих в Москве, то от имени АрмССР, и призывет к созданию беспартийной республики, призывает к освобождению народа от России и прочее, прочее, прочее.

Полагаю, что люди подобные Наапетяну аморальны, ибо стараются натравить один народ на другой. Мне пришлось дважды лично выступать и одергивать этого человека, объясняя ему, что первый день «освобождения» Армении от России будет и последним днем нашего народа, который падёт под ударами Турции, Персии и турок Азербайджана. Плохо то, что демагоги вроде Наапетяна пользуются ситуацией и оттягивают на себя нашу молодежь.

Конечно, будь у армянской общественности города Москвы культурноторговый центр, о котором пишем в Уставе, все было бы иначе. Планируется секция, по работе, с молодежью, можно будет отмечать дни национальных праздников и день национального траура 24 апреля, можно будет привлечь к работе опытных лекторов, педагогов, проводить встречи с деятелями культуры. А то, ведь что получается сегодня, к сожалению, придется рассказать Вам и об этом.

У поспреда АрмССР сложилась порочная практика приглашения на культурные мероприятия проводимые в поспредстве «нужных» ему людей.

В этот, якобы созданный при поспредстве «культурный центр», где якобы собираются представители армянской общественности Москвы, а на деле это мероприятия не для общественности Москвы, а так для «галочки в отчете». К тому же, у поспреда существует свой список «вельмож», которые могут быть, ему чем-то полезны, которые оказывают ему какие-то услуги в определённых кругах, одни в Академии наук, другие в других ведомствах, вот этих-то титулованных «вельмож» и приглашают по списку в поспредство на песенно-танцевальные мероприятия, эти «вельможи», и есть, по мнению поспреда, армянская интеллигенция Москвы, а остальные-то 80 тысяч армян, проживающих в Москве, так просто даже не знают, а где находится это поспредство, и что за клуб там такой для избранных.

Многие из нас приходили к поспреду, спрашивали в его «отделе культуры», понимают ли они, что они делают, когда одних людей приглашают из года в год, а других годами не приглашают. Ведь мы живем в одном городе, иногда даже вместе работаем в одном учреждении, и вот получается, что один из нас представляет интерес для Армении, а другие не представляют. Вот, к примеру, моя сестра – балерина Большого театра. Заслуженная артистка РСФСР Агнесса Балиева за всю свою жизнь не удостоилась одного приглашения в этот якобы «культурный центр» при поспредстве. Ну и к нему, приводит такая политика, кому она наносит вред? Прежде всего она наносит вред нам – армянам, проживающим в Москве. Подобное отношение является оскорбительным не только по отношению к московским армянам, но также к советским гражданам других национальностей, которые хотели бы приобщиться к нашей древней культуре.

Сегодня, значительное количество армян проживают вне пределов СССР: в Болгарии, Ливане, Греции, Италии, Австрии, Франции, Аме-

рике и Аргентине. В основном, это дети и внуки тех армян, которые были вынуждены бежать из исторической Армении в период геноцида армян со стороны Турецкой империи в 1910–1915 годы.

По роду своей работы мне приходилось бывать в различных странах мира, и естественно, хотелось узнать, в каких условиях происходит национальное развитие представителей моего народа в этих, странах.

Так, к примеру, в Болгарии работает армянское культурное общество, которое помимо Софии имеет свои представительства во всех крупных городах Болгарии, имеет свой культурно-торговый центр, имеет самодеятельные коллективы. Свои культурные центры, школы и журналы имеют армяне и в других перечисленных мною странах. Только армяне-москвичи не имеют ничего, что ощутимо осложняет наши отношения с АрмССР.

У всех у нас растут дети, естественно они знают, что они армяне, но стесняются общаться с детьми из АрмССР, так как не знают родного языка. Многие армяне-москвичи по тем же причинам бояться встречи с соотечественниками, ибо вынуждены оправдываться и краснеть в связи с плохим знанием языка и утратой наших культурных традиций и обрядов.

Впрочем, времена меняются. Пришла пора перемен к лучшему. Уже поселился на Арбате торгово-культурный центр Грузии и музей Грузинских поселений на Большой Грузинской. Вчера пришла радостная весть о Вашем, одобрении украинского товарищества «Славутич».

Основываясь на вышеизложенном, прошу Вас придать обществу армянской культуры ДОБРО ВАМ надлежащий-статус для работы по укреплению подлинного братства между людьми нашего многонационального государства.

Для эффективной работы Общество должно быть самоуправляемой общественной организацией, а не кружком при посредетве, для регистрации которого в соответствующем совете достаточно того или иного учредителя.

Прошу Вашего указания Мосгорисполкому зарегестрировать общество ДОБРО ВАМ как самоуправляемую общественную организацию, действующую в соответствии со Статьей 51 конституции СССР и на основании Устава.

Полагаю, что именно сейчас, когда острота национальных конфликтов в стране достигла апогея, весть о создании в Москве общества армянской культуры ДОБРО ВАМ найдет добрый отклик в сердцах миллионов армян, проживающих как в СССР, так и за рубежом.

С уважением,

первый секретарь Общества (Баратов Б.С.)

16.06.88.

*См.: ЦАОПИМ, Ф. 4, оп. 218, д. 157, лл. 8-26. Машинопись. Копия.*

Հավելված 2

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՆԱՄԱԿՆԵՐԸ ԽՍՀՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ա. ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ

**1956 թ. մայիսի 12**

**Մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ,**

*Առաջին խոսքը, որով կամենում ենք դիմել Ձեզ և ի դեմս Ձեզ՝ Խորհրդային Կառավարությանը, դա Մեր հարգալից ողջույնի և խորին երախտագիտության խոսքն է:*

*Աստծո հաճությամբ և հայության ամբողջ հավատացյալ ժողովրդի կամքով 1955 թ. սեպտեմբերի 30-ին Մենք ընդունեցինք բարձր, պատասխանատու և միաժամանակ բավականին դժվար՝ Հայոց Սուրբ Առաքելական Եկեղեցու Գերագույն Ղեկավարի պաշտոնը: Մեր պարտականությունների բարեհաջող իրականացման համար մենք Մեր հույսերը դնում ենք Հայոց Եկեղեցու բարեպաշտ հոգևոր դասի ու հավատացյալ ժողովրդի վրա: Այդուհանդերձ Մենք միշտապես հույս ենք ունեցել, որ Մեր խնդիրների իրականացման պատվարը կարող է լինել բարեհաճ Խորհրդային Իշխանությունը, որը դավանանքի ազատության իր սկզբունքներին հավատարիմ, միանգամայն բարեկամական վերաբերմունք է ցուցաբերում իր երկրի կրոնական հաստատություններին և առանձնապես՝ Էջմիածնին:*

*Իր էությամբ ու հանգամանքների բերումով Հայոց Եկեղեցին միշտ կարեկից է եղել ժողովրդական զանգվածների կարիքների ու շահերի նկատմամբ: Մի քանի դար առաջ կորցնելով իր պետակա-*

նությունը. Մեր ժողովուրդը ի դեմս Եկեղեցու, տեսնում էր իր քաղաքացիական կյանքի պաշտպանին ու միակ ղեկավարին: Եկեղեցին իր ձեռքն առավ այդ գործառույթները մեր ժողովրդի կյանքի զանազան ոլորտներում, մասնավորապես՝ իր բազմահարուստ մշակույթի պահպանման ու զարգացման ասպարեզում:

Ներկա պայմաններում, երբ խորհրդային կարգերի շնորհիվ հայ ժողովուրդը ձեռք է բերել լիակատար ազատություն ու պետականություն, հասել իր մշակույթի և տնտեսության ծաղկման աննախընթաց աստիճանի. մեր Եկեղեցու դերը բուն Հայրենիքում բոլորովին այլ է և, բնականաբար, այժմ նա նվիրել է իրեն իր հիմնական դերին, այսինքն հավատացյալ ժողովրդի բացառապես հոգևոր կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը:

Սակայն Խորհրդային Միության սահմաններից դուրս, աշխարհի բոլոր երկրներում բնակվում է հայ ժողովրդի գրեթե կեսը, որը կապված է Հայոց Եկեղեցու և Նախաթոռ Ս. Էջմիածնի հետ անխզելի կապերով, տեսնելով ի դեմս Եկեղեցու իր ազգային գոյատևման կարևորագույն կառույցը:

Այդպիսի պայմաններում Հայոց Եկեղեցու ու նրա կենտրոնի առջև կանգնած խնդիրները ձեռք են բերում առանձնահատուկ բնույթ: Այդ խնդիրները ուղղված են մեկ նպատակի՝ Եկեղեցու միջոցով փրկել արտերկրյա հայությունը ուծացումից ու ոչնչացումից, հոգով ու մշակույթով կապել նրան Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի հետ:

Իր գոյության ողջ ընթացքում Հայոց Եկեղեցին հանդես է եկել որպես ժողովրդի ազատության ու անկախության պաշտպան՝ զավթիչների ու ստրկացնողների դեմ: Այդպես է եղել միջին դարերում՝ արաբական, պարսկական ու մոնղոլական տիրապետության ժամանակ, այդպես է եղել նորագույն ժամանակներում՝ թուրքական բռնակա-

*լության [ժամանակ], այդպես է եղել ոչ վաղ անցյալում, երբ խորհրդային ժողովուրդը կանգնել էր սրբազան Հայրենական պատերազմի՝ հիտլերական զավթիչների դեմ:*

*Այժմ, երբ աշխարհի ժողովուրդները պայքարի են դուրս եկել ընդդեմ նոր պատերազմ հրահրողների, հանուն ժողովուրդների միջև երկարատև խաղաղության, Հայոց Եկեղեցին, հավատարիմ իր ավանդական սկզբունքներին, հավաքագրվել է ինչպես այդ սրբազան պայքարի հավատարիմ մարտիկ և կանի ամեն բան խաղաղության ճամբարն ամրապնդելու համար:*

*Մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ:*

*Իմ Հայոց Եկեղեցու Առաջնորդիս, վերոնշյալ նախագծերի բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով Ձեր բարձր ուշադրությանը խորին հարգանքով ներկայացնում ենք հետևյալ խնդիրները՝ հավատացած լինելով, որ Դուք սիրով կընդառաջեք և դրանց լուծման համար կանեք համապատասխան կարգադրություններ:*

*1. Թույլ տալ տարին մեկ անգամ Ս. Էջմիածնում գումարել Հայոց Եկեղեցու Եպիսկոպոսների Ժողով և 5 տարին մեկ՝ Ազգային Եկեղեցական Ժողով՝ քննարկելու և լուծելու համար Հայոց Եկեղեցու գործունեության հետ կապված կենսական հարցերը: Թույլ տալ գումարել Եպիսկոպոսների առաջիկա Ժողովը 1957թ.:*

*2. Հնարավորության ու անհրաժեշտ պայմաններ ստեղծել Խորհրդային Հայաստանի ու արտասահմանի հայության միջև գրականության, արվեստի, գիտության ասպարեզներում երկուստեք կապի ուժեղացման համար, կազմակերպելով այդ ոլորտների պատգամավորների ուղևորություններ և փոխադարձ այցելություններ:*

*3. Խորհրդային Հայաստանի հրատարակչությունները տարբեկան հրատարակում են մեծ քանակի գեղարվեստական գրականություն, դասագրքեր, պարբերականներ: Սակայն արտասահմանի հայությունը այդ գրականությունից օգտվելու հնարավորություն չունի, որովհետև բուն Հայաստանում մեծ պահանջարկի պատճառով այդ արտադրանքը բավարար չէ: Խնդրում ենք Ձեր միջամտությունը Խորհրդային Հայաստանին հատկացվող տպագրական թղթի տարբեկան ֆոնդերը ավելացնելու համար, այն հաշվարկով, որ տպագրվող գրականության մի մասը ուղարկվի արտասահման:*

*4. Սիրայիր կարգադրության համաձայն, արված 1945 թ. ապրիլի 19-ին ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի նախկին նախագահ, յուսահոգի Ի. Վ. Ստալինի կողմից, Էջմիածնին տրված են մի շարք արտոնություններ, որոնցից սակայն մեզ մինչ այժմ չհաջողվեր օգտվել թերևս Եկեղեցու գործիչների կամ էլ իշխանության տեղական մարմինների մեղքով: Ինչպես օրինակ.*

*ա. Ս. Էջմիածնի վանքին պատկանող շենքերը, որոնք գտնվում են վանքի ներքին, բակային տարածքում, պետք է վերադարձվեն միաբանությանը: Սակայն մինչև օրս այդ շենքերը չեն ծառայում իրենց նպատակին, որովհետև զբաղեցված են կողմնակի բնակիչներով և հաստատությունններով,*

*բ. Ս. Էջմիածնին թույլ է տրվել ունենալ սեփական տպարան՝ հանդեսի, կրոնական գրքերի և նմանատիպ գրականություն տպագրելու նպատակով: Սակայն տպարանը մինչ այժմ բացված չէ: Կուզենայինք խնդրել Ձեր ավելի արդյունավետ միջամտությունը այդ հարցերի լուծման համար՝ շենքերի անհապաղ ազատման ու վանքին վերադարձնելու նպատակով: Դրանցից կարևորագույնը պատրիարքարանի շենքն է, որը ավելի քան 40 տարի զբաղեցրած է զորամասերով:*

*Միաժամանակ մենք կխնդրեինք, որ այդ շենքը վերադարձվեր Ս. Էջմիածնին հիմնական նորոգումից և տպարանի անհապաղ բացման հարցը լուծելուց հետո: Տպարանի բոլոր սարքավորումները Կաթողիկոսությունը ձեռք է բերում իր միջոցներով արտասահմանի հայերի օգնությամբ:*

*5. Ձեր բարձր ուշադրությանն ենք ներկայացնում նաև Խորհրդային Միության ներսում գտնվող, մեծաթիվ հայ բնակչությամբ շրջաններում նոր եկեղեցիների բացման խնդիրը, ինչը մենք հույժ կարևոր խնդիր ենք համարում հետևյալ նկատառումներից ելնելով:*

*ա. Ադրբեջանի տարածքում բնակվում են կես միլիոնից ավել հայեր, սակայն այնտեղ գոյություն ունեն ընդամենը երկու եկեղեցի՝ Բաքվում ու Կիրովաբադում: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզում, որտեղ ապրում են շուրջ 200 հազար հայեր կա միայն մեկ եկեղեցի, այն էլ ոչ թե մարզային կենտրոնում, այլ հեռավոր գյուղերից մեկում: Եկեղեցի չկա նաև Նախիջևանի Երկրամասի հայ բնակչության շրջաններում: Գործող եկեղեցի չկա Միջին Ասիայի հանրապետություններում, որտեղ հայ բնակչության թվաքանակը հասնում է մինչև 100 հազարը: Վրաստանի հանրապետությունում, որտեղ 400 հազարից ավել հայ կա, գործում են չորս եկեղեցիներ՝ երկուսը Թբիլիսիում և երկուսն էլ հեռավոր շրջաններում: Եկեղեցի չկա հայ մեծաթիվ բնակչությամբ այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսինք են Բաթումին և Սուխումին:*

*Այդ բոլոր փաստերը հայտնի են Խորհրդային Հայաստան այցելող արտասահմանյան բարձրաղիր հոգևորականությանը և հասարակական ականավոր գործիչներին և ստիպված ենք նշել, որ դա տեղիք է տալիս անբարենպաստ կարծիքի՝ մեր երկրում եկեղեցական գործի դրվածքի մասին:*

*Ս. Էջմիածնի կաթողիկոսությունը բազմաթիվ նամակներ է ստանում հավատացյալ հայերից ինչպես Հայաստանի շրջաններից, այնպես էլ Խորհրդային Միության հայերով բնակեցված մարզերից եկեղեցիներ բացելու վերաբերյալ միջնորդելու խնդրանքով: Այդ նամակներում հավատացյալները բողոքում են, որ եկեղեցիների բացակայության արդյունքում նրանք զրկված են հոգևոր մխիթարանքից և հոգևոր անհրաժեշտ ծեսերի կատարման հնարավորությունից:*

*Ձեր բարձր հայացողությանը ներկայացնելով վերոնշված փաստերն ու հանգամանքները, Մենք կուզենայինք խնդրել կառավարության թույլտվությունը մի շարք եկեղեցիներ բացելու վերաբերյալ, ինչպես Հայաստանի շրջաններում, այնպես էլ Ադրբեջանում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում հայերով բնակեցված շրջաններում:*

*բ. Ադրկովկասում և Հյուսիսային Կովկասում կան մեր ժողովրդի համար մեծ պատմական նշանակություն ունեցող շատ հին հայկական վանքեր: Անհրաժեշտ ենք գտնում դրանցից երեքը, ներկայումս անուշադրության մատնված վանքերը տալ Էջմիածնին, որպեսզի մենք համապատասխանաբար հոգանք դրանց մասին: Դրանք են. Գանձասարը (Ադրբեջանում), Տաթևը (Հայաստանում) և Սուրբ Խաչը (Ռոստովի մարզում):*

*Մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ:*

*Թույլ տվեք, Մեր դիմումում բարձրացված հարցերի դրական լուծման մեջ հավատացած մնալով, եզրակացնենք հետևյալը:*

*Մոտ 200 տարի է հայ ժողովուրդը իր ճակատագիրը կապել ռուս ժողովրդի հետ: Իր ազգային ազատագրման, տնտեսական զարգացման և մշակութային, առաջընթացի ասպարեզում մեր ժողովուրդը շատ բանով է պարտական Ռուսաստանին: Օգտվելով բարձր ուշադ-*

*րությամբ, որով դուք Բարեհաճեցիք պատվել Մեզ, Մենք ուզում ենք որպես հայ և որպես Հայոց Եկեղեցու Բարձրագույն Գլխավոր Մեր ջերմագին ողջույնը և լավագույն բարեմաղթանքները փոխանցել մեծ ազնվաբարո ու մեծահոգի ռուս ժողովրդին:*

*Ընդունեք, բարձրապատիվ Նիկոլայ Ալեքսանդրովիչ Բուլգանին, մեր լավագույն բարեմաղթանքները Ձեր առողջության, բազմաարեկեցության և գործերի հաջողության վերաբերյալ, ինչպես նաև մեր խորին հարգանքի հավաստիքները:*

Ամենայն Հայոց Գերագույն Պատրիարք-Կաթողիկոս
Վազգեն Ա

*Ն. Ա. Բուլգանինի մակագրությունը. «Բաժանել ԽՄԿԿ ԿԿ Նախագահության անդամներին, ԽՄԿԿ ԿԿ Նախագահության անդամության թեկնածուներին և ԽՄԿԿ ԿԿ քարտուղարներին: Ն. Բուլգանին: 1956 թ. մայիսի 12:*

*Նամակների ռուսերեն բնագրերը պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում (ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 5787, թթ. 1-8)*

## *Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի նամակը Ն.Ա. Բուլգանինին*

***1956 թ., մայիսի 12, ք. Մոսկվա***

*Մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ*

*Մենք, Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա, որպես Հայոց Եկեղեցու նորընտիր Ղեկավար, Խորհրդային Կառավարության բարեհաճ վերաբերմունքի շնորհիվ հնարավորություն ունեցանք հովվական այց անել արտասահմանյան մեր թեմերը, եկեղեցիները, ծանո-*

*թանալ արտասահմանում ապրող հայերի կյանքի հետ: Երեք ամսվա ընթացքում Մենք այցելեցինք Լիբանանի, Եգիպտոսի, Իտալիայի, Ֆրանսիայի և Անգլիայի գաղութները: Մեր ժողովուրդը ամենուրեք ընդունում էր Մեզ բացառիկ ջերմությամբ և մեծագույն ոգևորությամբ, որպես Մայր Հայրենիքից ժամանող՝ Ս. Էջմիածնի Աթոռակալի և Քահանայի:*

*Վերադառնալով արտասահմանյան եռամսյա մեր ուղևորությունից՝ Մենք Մեր պարտքն ենք համարում Ձեր բարձրագույն ուշադրությանը ներկայացնել հետևյալը:*

*ա. Արտասահմանում ներկայումս ապրող ավելի քան մեկ միլիոն հայերի հայացքը ուղղված է Ս. Էջմիածնին, Մայր Հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին: Նրանք թրթիռով են սպասում Հայկական հարցի լուծմանը, որպեսզի Հայրենիքը փափագող այդ մարդիկ կարողանան վերադառնալ իրենց հայրենիք, ինչի մասին երազում են արդեն տասնյակ տարիներ:*

*Որտեղ էլ Մենք եղանք, բոլոր երկրներում, մասնավորապես Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում և Ֆրանսիայում, որտեղ բնակվում են ընդհանուր առմամբ մոտ 400 հազար հայեր, տասնյակ հազարավոր մարդիկ դիմում էին մեզ, աղերսելով. «Մի թողե՛ք մեզ վերգրեք մեզ ձեզ հետ՝ Հայրենիքն. Ամբողջ ճանապարհը Բեյրութից մինչև Եգիպտոս ու Ֆրանսիա ողողված էր իր Հայրենիքը փափագող հայ ժողովրդի արցունքներով:*

*բ. Ամենուրեք այդ երկրներում բոցաշունչ հայրենասերները, մեր ժողովրդի առաջնորդները եպիսկոպոսներն ու ազգային-եկեղեցական իշխանությունների ներկայացուցիչները խնդրում էին Մեզ փոխանցել Խորհրդային կառավարությանը իր ամենախոր երախտագիտությունն այն բանի համար, որ հայ ժողովրդի մի մասը, թվով մոտ մեկու-*

*կես միլիոն մարդ խաղաղ ու երջանիկ կյանք է ձեռք բերել հարազատ հողի վրա՝ Խորհրդային Հայաստանի տարածքում՝ ռուս մեծ ժողովրդի և մեծ Խորհրդային Միության եղբայրական փրկարար օգնության շնորհիվ: Սակայն դա ներկայացնում է Հայկական հարցի թերևս մեկ երրորդ մասի լուծումը: Ավելի քան մեկ միլիոն հայ ապրում են Անդրկովկասյան հարևան հանրապետություններում՝ Վրաստանի և Ադրբեջանի տարածքներում: Մոտավորապես այդքան էլ ապրում են արտասահմանում: Դրանք Առաջին Աշխարհամարտի ժամանակ թուրքական Հայաստանի հարազատ տեղերից պատմության մեջ չտեսնված, թուրքական իշխանությունների հալածանքների ու կոտորածների արդյունքում արտաքսվածների մնացորդներն են:*

*Ամբողջ այդ ժողովուրդն իր հույսերն ամենայն հավատարմությամբ կապել է ռուս ժողովրդի ու Խորհրդային իշխանության հետ:*

*Արտասահմանում շատերը հարցնում էին մեզ արդյո՞ք Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի, Նախիջևանի ԻԽՍՀ ու Ախալքալաքի շրջանի արդար հարցի լուծման ժամանակը չի եկել, որոնք հիմնականում բնակեցված են հայերով, բայց շարունակում են մնալ Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս՝ Արտասահմանյան հայերն այդպիսով հույս ունեն, որ բարյացակամ Խորհրդային Իշխանության կողմից հողային (տարածքային), տնտեսական ու բնակարանային անհրաժեշտ պայմաններ կստեղծվեն՝ իրենց Հայրենիք վերադառնալու համար այնպես, որպեսզի հարազատ եղբայրների հետ վերամիավորվեն հարազատ հողի վրա:*

*դ. Արտասահմանյան մեր հայության ղեկավարները խնդրում էին Խորհրդային Իշխանությանը տեղեկացնել իրենց խնդրանքը այն մասին, որ մոտակա 5–7 տարվա համար կազմվեր հայերի Խորհրդային Հայաստան հայրենադարձության ծրագիր այն հաշվարկով, որ հնա-*

բավոր լիներ տարեկան Հայաստան հայրենադարձել 30-40 հազ. հայ: Բնականաբար, իրենց տրամադրելով համապատասխան տարածություն ու աշխատանք: Այդպիսի ծրագիրը կատարելու համար, իհարկե, անհրաժեշտ կլինեն զգալի միջոցներ՝ բնակարանային և այլ շինարարության համար, ինչի համար անհրաժեշտ է լինելու նախօրոք ՛նկատի ունենալ համապատասխան միջոցառումներ:

գ. Արտասահմանյան հայերից շատերը որոշ դժգոհություն էին արտահայտում այն բանի համար, որ հայ հոծ բնակչությամբ Վրաստանի և Ադրբեջանի առանձին շրջաններում ու քաղաքներում շատ հայկական դպրոցներ ընդհանրապես փակ են, իսկ որտեղ կան՝ անբավարար են լիովին ընդգրկելու համար հայ երեխաներին, որոնք ցանկանում են ուսանել մայրենի լեզուն: Այսպես, օրինակ, Դոնի Ռոստովում, Կրասնոդարում, Արմավիրում, Պյատիգորսկում, Բաթումիում, Սուխումիում, Անդրկասպյան հանրապետություններում և այլ տեղերում, որտեղ մինչև 1937 թ. գոյություն են ունեցել հայկական միջնակարգ դպրոցներ, ներկայումս դրանք բոլորովին չկան:

Մենք ցանկանում ենք հավաստիացնել Ձեզ, մեծարգո Նիկոլայ Ալեքսանդրովիչ Բուլգանին, որ մեր նամակում շոշափված հարցերը ներկայացնում են ողջ հայ ժողովրդի ամենաանկեղծ զգացմունքները ու նվիրական երազանքները:

Թույլ տվեք ինձ համարձակվել ավելացնել և այն ճշմարտությունը, որ որքան ամուր կլինեն Անդրկովկասում հայ ժողովուրդն ու Հայաստանը, այնքան ապահոված կլինի մեր Մեծ Հայրենիքի հարավային սահմանների անվտանգությունը:

Վերջին 200 տարվա ընթացքում հայ ժողովուրդն իր պատմությունով ապացուցեց իր անսահման հավատարմությունն ու անվերապահ բարեկամությունը մեծ ու մարդասեր ռուս ժողովրդի հետ: Ինչ-

*պես միշտ, առավել ևս առ այսօր, մեր ժողովրդի ճակատագիրն ու ամբողջ կյանքը կապված է իր հյուսիսային մեծ բարեկամի, փրկարար ժողովրդի ճակատագրի հետ:*

***Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա***

*Ն. Ա. Բուլգանինի մակագրությունը. «Բաժանել ԽՄԿԿ ԿԿ Նախագահության անդամներին, ԽՄԿԿ ԿԿ Նախագահության անդամության թեկնածուներին և ԽՄԿԿ ԿԿ քարտուղարներին: Ն. Բուլգանին: 1956 թ. մայիսի 12:*

*Տես Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Գ, Եր., 2008, էջ 281-288:*

Հավելված 3

# ՅԱՐՈՍԼԱՎ Ռ. ԴԱՇԿԵՎԻՉԻ ՀՈԴՎԱԾԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ЛІКВІДАЦІЯ ВІРМЕНО-КАТОЛИЦЬКОЇ ЦЕРКВИ В ГАЛИЧИНІ 1945 Р.

Відомості про насильницьке скасування вірмено-католицького архієпископства у Львові опубліковано у Римі в першій половині 1947 р. (див.: Servizio Informazioni Chiesa Orientale. 1947,14 квітня. Т. 2. С. 1). Як день ліквідації подано 20 серпні 1945 р. Повідомлялося про арешт адміністратора архієпархії, генерального вікарія (з 1938 р.) Діонізія Каєтановича за співучасть в утворенні Вірменського легіону, який воював проти СРСР. Ці відомості досі вважаються основним джерелом для висвітлення питання. Їх повторив, зокрема, Г.Петрович у праці La Chiesa armena in Polonia e nei paesi limitrofi. Рим, 1988. С. 378–380.

В архіві Львівського обкому КП(б) України знайдено доповідну записку з грифом «цілком таємно», скеровану до першого секретаря обкому І. Грушецького. Вона складена від імені начальника управління Народного комісаріату державної безпеки Львівської області генерал-лейтенанта Вороніна (документ підписав його заступник А.Козлов) і датована 29 січня 1946 р. Доповідна велика – 8 сторінок машинопису. Вона допомагає суттєвими даними уточнити справу ліквідації. За резолюцією І. Грушецького 31 січня 1946 р. про неї коротко інформували (виконавцем була Мерецька) ЦК КП(б) України.

Доповідна має заголовок: «Про антирадянсько-зрадницьку діяльність ксьондзів вірмено-католицької церкви у місті Львові та їх приналежність до агентури гестапо». Згідно з запискою, події розгорта-

лися так (необхідно враховувати, що документ складено ворожою до церкви стороною). Органи НКДБ перехопили матеріали гестапо, за якими член капітулу і секретар генерального вікарія Казимир Ромашкан (1909 р.н.) був агентом гестапо. Це визнав також арештований «таємний радник шефа гестапо Генерал-губернаторства і Галичини» (так в документі) Роберт Рупп. К. Ромашкана арештували у вересні 1945 р. Він зізнався у співробітництві з гестапо, а також у тому, що став організатором львівської експозитури Вірменського комітету в Берліні, ЛІКВІДАЦІЯ ВІРМЕНО-підтримував зв'язки з ним, а також з аналогічним комітетом у Варшаві. До Львова 1943–1944 рр. приїздили президент Вірменського комітету в Берліні Дульян, секретар комітету Сагак Арутіян, а також організатор легіону генерал Дро. К. Ромашкан утворив у Львові вірменське військове з'єднання (підготовка офіцерів для легіону проводилася у Варшаві) для боротьби за незалежну Вірменію. Приблизно у листопаді 1945 р. (докладної дати в документі немає) було арештовано генерального вікарія Д. Кастановича. Він зізнався, що був агентом Гестапо, помагав організувати легіон. (До речі, в доповідній не вказується, що 13 квітня 1943 р. Д. Кастановича арештувало Гестапо, а звільнили його завдяки заходам митрополита Андрея Шептицького з додатком значного хабара). Під час обшуку в Д. Кастановича знайшли великий килим з гербами Вірменії та Ватикану. Цей килим, прикрашений вірменськими прапорами, висів раніше в експозитурі Вірменського комітету, а деколи й у соборі разом з написом «За незалежну Вірменію». Органи НКДБ арештували також члена капітулу Віктора Квапінського (1886 р.н.) та диякона-монаха Станіслава Дробота (1915 р.н.). Двом священикам – Іванові Ляховському (1903 р.н.) та Францискові Якубовичу (1907 р.н.), що перейшли на нелегальне становище, – вдалося уникнути арешту.

В доповідній є ще відомості, які кидають світло як на стан вірмено-католицької церкви в Галичині (у 1939 р. вона мала вісім парафій: Львів, Станіслав, Бережани, Лисець, Тисмениця, Городенка, Снятин, Кути), так і на ставлення радянської влади до неї. За доповідною, «у

Львові мешкало всього 240 вірних вірмено-католицького віровизнання, які, по суті, не мали нічого спільного з вірменською нацією, вважали себе поляками, і лише зберігали релігійний обряд своїх предків-вірмен. Більша частина цих вірних виїхала на територію Польщі й церкву відвідувало не більше 40–50 осіб». Не можна заперечити полонізацію львівських вірмен, але, з іншого боку, наведені в доповідній дані про експозитуру Вірменського комітету, участь в організації Вірменського легіону, вивішування в церкві килиму з гербом Вірменії, вірменських прапорів, гасла «За незалежну Вірменію» цьому частково протирічать. Собор було закрито розпорядженням виконавчого комітету обласної ради депутатів трудящих та передано в розпорядження православного єпископа Макарія. Документ закінчується словами: «З ліквідацією вірмено-католицької церкви і арештом її керівників у місті Львові цю церкву ліквідували на території області, як вогнище впливу Ватикану на населення вірмено-католицького віросповідання». В світлі доповідної подана Римом 1947 р. дата ліквідації архієпископства (20 серпня 1945 р.) виглядала неправильною; такою датою, мабуть, треба вважати листопад 1945 р. (арешт Д. Каєтановича). Дальші дослідження повинні уточнити хронологію подій. До речі, існування під час Другої світової війни відділень берлінського Вірменського комітету в містах Криму стало причиною депортації вірмен з півострова, згідно з ухвалою Державного комітету оборони 2 червня 1944 р., підписаною Й.Сталіним.

Необхідно підкреслити, що Рим примирився з ліквідацією вірмено-католицької церкви в Україні й, наскільки відомо, не заявляв жодних протестів. Навіть навпаки. Як виходить з повноважень, наданих примасові Польщі кардиналові Августові Ґльондові й краківському митрополитові кардиналові Адамові-Стефанові Сапе, статс-секретаріатом Ватикану (за підписом кардинала Домініка Тардіні 25 жовтня 1946 р.; документ № 7800/46) було видано вказівку не робити перешкод для переходу вірних вірменського обряду (як, зрештою, і для українців греко-католиків) на латинський обряд, а священикам вірменського обряду – для виконання літургічних функцій в латинському обряді. Шлях до

остаточної асиміляції було відкрито. Про відновлення організованої вірмено-католицької церкви не могло бути мови.

У спогадах українців, що перебували в ув'язненні разом з останнім адміністратором львівської вірмено-католицької архієпархії Д. Каєтановичем (1878–1954), він залишився дуже світлою постаттю. Ще з юнацьких років зв'язаний українським оточенням (він народився в містечку Тисмениці біля Станіслава, вільно розмовляв по-українськи. (Між іншим, у статті Я. Пасечника Mlodosc i zycie zakonne ksifdza infulata Dionizego Kajetanowicza // Studia Franciszkanskie. 1 1986. Т. 2. С. 205–237 та в окремій брошурі, Варшава, 1989, це питання обійдене мовчанкою). В ув'язненні Д. Каєтанович відправляв богослужіння, опікувався українцями-католиками, завжди поспішав до них духовною порадою та допомогою.

*См. Дашкевич Я. Р., Вірмени в Україні: дорогами тисячоліть. Збірник наукових праць. Львів: Вид-во Львівського музею історії релігії «Логос», 2012. с. 1072–1074.*

Հավելված 4

# ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԹԵՄԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## № 1

## ՍՍՀՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Պուլկանինի հետ Վազգէն Ա Կաթողիկոսի զրոյցի արձանագրութիւնը

12 Մայիսի 1956 թ.
Մոսկուա

*«Երկրորդ փաստաթուղթին (ծնթ.- Խօսքը Վազգէն Ա-ի՝ Պուլկանինին հասցէագրուած երկրորդ նամակ-դիմումին կը վերաբերի, զոր Վեհափառը գրած էր արտասահմանեան ուղեւորութենէն վերադարձին, սակայն ժամանակ չէր ունեցած հասցէատիրոջը ուղարկելու: Հետեւաբար, հանդիպման սկիզբը, ան այս փաստաթուղթն ալ կը յանձնէ Պուլկանինին, որ զայն կ'ընթերցէ) ծանօթանալէ ետք, Ընկ. Պուլկանին յայտարարեց հետեւեալը.*

*«Առաջին երկու հարցերը, որոնք կը վերաբերին Ատրպէյճանական եւ Վրացական ՍՍՀ-ներու կարգ մը շրջաններու Սովետական Հայաստանի փոխանցման ու արտասահմանի հայութեան Սովետական Հայաստան հայրենադարձութեան վերսկսման, ամէնէն բարդ ու ամէնէն դժուար լուծելի հարցերն են: Երկար ժամանակ անցած է այն օրերէն, երբ Նախիջեւանի հանրապետութիւնն ու Լեռնային Ղարաբաղը կը գտնուին Ատրպէյճանի կազմին մէջ, եւ Ախալքալաքի շրջանը՝ Վրաստանի կազմին մէջ: Կը կասկածիմ,- յայտարարեց Ընկ. Պուլկանին,- որ նպատակայարմար է այդ հարցերը ներկայիս*

*բարձրացնել եւ լուծել: Ինչ կը վերաբերի հայրենադարձութեան վերսկսման, ապա անիկա, իմ տեսակէտով, ինչպէս եւ, կ'ենթադրեմ, կառավարութեան միւս անդամներուն կարծիքով, պէտք է այնպէս անցկացնել, որ հայրենադարձութեան գաղափարը չվարկաբեկուի: Մենք միշտ դրականօրէն վերաբերած ենք հայրենադարձութեան, եւ ժամանակին զանգուածային հայրենադարձութիւն թոյլ տուինք: Բայց անոր գործնական իրականացման առեն պարզուեցաւ, որ տեղական իշխանութիւնները վատ նախապատրաստուած էին հայրենադարձող հայոց ընդունման. այսպէս, թէ՛ բնակարանային առումով եւ թէ՛ աշխատանքի տեղաւորման ոլորտին մէջ այդքան քանակութեամբ մարդիկ ընդունելու բաւարար հնարաւորութիւններ չէին ստեղծուած: Անիկա կարգ մը հայրենադարձ հայոց մօտ դժգոհութիւն յառաջ բերաւ եւ որոշ չափով բացասական տպաւորութիւն ձգեց: Սակայն կը կրկնեմ՝ մենք սկզբունքով կողմնակից ենք հայրենադարձութեան, սակայն պէտք է այնպէս ընել, որ այդ գործը վերջին հաշուով դրական յաջողութիւն ունենայ: Այսպէս կրնայ այնպէս ըլլալ, որ լաւ գործ սկսելով, յետոյ հնարաւոր ըլլայ խայտառակուիլ, նման պարագան խելամիտ պիտի չըլլայ Ձեզի՝ այդ հարցի հեղինակին եւ հայկական ու խորհրդային կառավարութեանց համար: Ինչպէս նախապէս ըսի, Երկուշաբթի պիտի ընդունիմ Ընկ. Քոչինեանը ու անոր հետ կը խորհրդակցիմ նաեւ այս կապակցութեամբ»:*

*Անկէ ետք, կաթողիկոսը յայտարարեց. «Ես շատ գոհ եմ, որ դուք, Նիքոլայ Ալեքսանդրովիչ, քաջածանօթ էք հայրենադարձութեան հետ կապուած հանգամանքներուն: Ես ինքս երբ 1948ին Հայաստան եկայ, սեփական աչքերով տեսայ հայրենադարձութեան վատ կազմակերպումն ու համոզուեցայ անոր այդպէս ըլլալուն: Այս մասին կարգ մը հայրենադարձներ նոյնիսկ կը գանգատէին: Ան-*

*շո՛ւշտ, յետագային ասիկա պէտք չէ կրկնուի: Ատոր համար, իմ տեսակէտով,- ըսաւ Կաթողիկոսը,- անհրաժեշտ է սկիզբէն 3 խնդիրներ լուծել.*

*1. Որոշել այն տարածքը, ուր պէտք է հաստատուին հայրենադարձները:*

*2. Բոլոր հայրենադարձները անհրաժեշտ է բնակարանով ապահովել:*

*3. Նախապէս պատրաստել ամէն ինչ անոնց աշխատանքի տեղաւորման համար»:*

*Ատոր ի պատասխան՝ Ընկ. Պուլկանինը կը յայտարարէ, որ ասիկա ճի՛շդ մօտեցում է:*

*Կաթողիկոսը կը շարունակէ. «Ես արտասահմանի մէջ շատ հայերու հետ զրուցեցի եւ պէտք է ըսեմ, որ տեղափոխման հետ կապուած բոլոր ծախսերը հայկական արտասահմանեան կազմակերպութիւնները կրնան իրենց վրայ վերցնել: Մնացեալը, այսինքն տեղոյն վրայ՝ Սովետական Հայաստանի մէջ ամէն ինչի նախապատրաստութիւնը պէտք է ըլլայ պետութեան (ծնթ. - Նկատի ունի Ս. Հայաստանի պետութիւնը) կողմէ՝ կառավարութեան (ծնթ. Նկատի ունի համամիութենական կառավարութիւնը՝ Մոսկուան) օգնութեամբ ու նեցուկով: Երբ ես նկատի ունիմ վերը նշուած 3 խնդիրները,- շարունակեց Կաթողիկոսը,- մասնաւորաբար կ'ուզեմ կանգ առնել, յատկապէս առաջին խնդիրին վրայ, որը տարածքներուն կը վերաբերի: Նոյնինքն տարածքին հետ են սերտօրէն կապուած իմ երկրորդ փաստաթուղթին առաջին երկու հարցերը, քանի որ այն տարածքը, որու մասին կը խօսիմ այդ փաստաթուղթին մէջ, կրնայ լուծել անոր վրայ հայոց որոշ քանակի տեղաւորման հարցը: Այդ տարածքը քիչ բնակեցուած է: Մասնաւորաբար, ասիկա կը վերաբերի Նախի-*

չեւանի երկրամասին, ուր ես անձնապէս գտնուեցայ եւ լաւ ծանօթ եմ երկրամասին: Այդ շրջանը շատ ցանցառ է բնակեցուած, միեւնոյն ժամանակ՝ թողլքուած է: Անիկա ծանր տպաւորութիւն կը ձգէ: Հոն ոչ մէկ շինարարութիւն կը կատարուի: Որոշ միջոցառումներ իրագործելով, այնտեղ, հնարաւոր պիտի ըլլար բազմաթիւ հայրենադարձներ տեղաւորել: Կը համարձակիմ ըսել,- յայտարարեց Կաթողիկոսը Ընկ. Պուլկանինին,- որ այս հարցը ես կը դնեմ յանուն ինչպէս հայ, այնպէս ալ ռուս ժողովուրդներու շահերուն»:

* * *

Վազգէն Ա կաթողիկոսը կը ծանօթանայ ՏԱՍՍի (ծնթ.- Սովետական Միութեան Լրատուական գլխաւոր գործակալութիւնը) Հաղորդագրութեան (ծնթ.- Խօսքը 11 Մայիս 1956ին սովետական կեդրոնական թերթերուն մէջ լոյս տեսած հաղորդագրութեան կը վերաբերի՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հարցին մասին: Հաղորդագրութիւնը զրոյցի ընթացքին Պուլկանին կը յանձնէ Վազգէն Ա-ին) եւ կ՚ըսէ, որ դեռ Փարիզէն, ինք նամակագրութիւն ունեցած է եւ հեռաձայնային կապ պահ- պանած «անկախներ» ու համախմբումին հետ եւ նոյնիսկ Մոսկուա մեկնումի օրը հեռաձայնային խօսակցութիւն ունեցած է Պէյրութի մէջ այդ համախմբումի ղեկավարներէն մէկուն՝ Բարունակ Թովմասեանի հետ: Այդ հաղորդագրութեան մէջ, զոր Կաթողիկոսը ընթերցեց, կը զգացուին արձագանգները այն ցուցմունքներուն,- զորս ինչպէս ըսաւ Կաթողիկոսը,- ինք տուած է «անկախներ»ուն: Եթէ մեր կառավարութիւնը,- այնուհետեւ ըսաւ Կաթողիկոսը,- գոհ է իմ կատարած աշխատանքէն՝ ես շատ երջանիկ եմ: Պէտք է ըսել, որ արտասահմանի հայոց 90%ը կը մտածեն ինծի նման, թէ իրենք պէտք է ամուր կերպով համախմբուին իրենց Սովետական հայրենիքին շուրջ եւ թէ հայ ժողովուրդին երջանկութիւնն ու փրկու-

թիւնը միայն անոր մէջ են: Սակայն, յայտնեմ, թէ մինչեւ իմ արտասահման ուղեւո- րութիւնը, թէեւ հայոց մեծամասնութիւնը կապուած էր Սովետական Միութեանը ու Հաւատարիմ էր անոր, սակայն կարգ մը հայոց մօտ դեռ տատանումներ կային: Դաշնակցականները յաջողած էին իրենց զրպարտու- թիւններով, խեղաթիւրած տեղեկութիւններով, իսկ երբեմն ալ՝ սարսափով արտասահմանի հայոց մէկ մասին մօտ տատանումներ մտցնել: Ես քաջութիւնն ունիմ ըսելու, որ իմ ուղեւորութենէն ետք այդ վիճակին ամբողջովին փոխուեցաւ: Հայ ժողովուրդին ջախջախիչ մեծամասնութիւնը դաշնակցականներուն դէմ է եւ Սովետական Հայաստանի ու Սովետական Միութեան ետեւէն կ՚ընթանայ: Շատ շարքային դաշնակցականներ մինչեւ իսկ սկսած են հաւատքը կորսնցնել իրենց ղեկավարներուն նկատմամբ եւ սկսած են հասկնալ, թէ անոնք օտար շրջանակներու ձեռքին զէնքեր են: Դաշնակցականները աւելի ու աւելի կը մեկուսացուին ժողովուրդէն, որու լայն զանգուածները անոնցմէ կը հեռանան: Հիմա իմ հաստատած կապերս յետագային պիտի ամրապնդուին: Ազդեցութիւնն ա՛լ աւելի լաւ պիտի ըլլայ: Դաշնակցականները փաստի առաջ կանգնած են. երբ ժողովուրդը կռնակ կը դարձնէ իրենց, անոնք ամէն միջոցի, երբեմն նոյնիսկ նենգութեան կը դիմեն, սակայն բնաւ չեն յաջողիր, քանի որ հայ բարձրաստիճան ամբողջ հոգեւորականութիւնը իմ շուրջը համախմբուեցաւ, եւ դաշնակցականներու սադրանքներուն եւ նենգութեան չենթարկուեցան: Որպէս օրինակ Ձեզի կ՚ուզեմ մէկ դէպք պատմել: Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրէի մէջ (ծնթ.- Մարտ 1956ին Կահիրէի մէջ գումարուեցաւ Հայ Եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսներու ժողովը՝ Վազգէն Ա-ի նախագահութեամբ, օրակարգի գլխաւոր նիւթ ունենալով Կիլիկիոյ Աթոռին տագնապը), Խորէն Եպիսկոպոս Բարոյեանը մօտեցաւ Կ. Պոլսոյ

*Պատրիարք Գարեգին Խաչատուրեանին եւ ըսաւ, որ Լիբանանի մօտ Թուրքիոյ դեսպանը գացած է դաշնակցականներու դրածոյ Զարեհ Եպիսկոպոս Փայասլեանի մօտ եւ շնորհաւորած է զայն՝ Կաթողիկոս ընտրուելու առթիւ: Ըստ որուն, թուրք դեսպանը հետաքրքրուած է, թէ արդեօ՞ք Խաչատուրեան Պատրիարք շնորհաւորած է զայն: Ասով Խորէն Բարոյեան հասկցնել կ'ուզէր Խաչատուրեան Պատրիարքին, որ թրքական կառավարութիւնը գոհ չէ վերջինիս վերաբերմունքէն: Բայց Խաչատուրեանը անոր շատ արժանի հակահարուած տուաւ: Ան ըսաւ. «Դուն մի՛ մտահոգուիր իմ մասին, ես գիտեմ թէ ի՛նչ բացատրութիւն կու տամ թրքական կառավարութեանը իմ ընթացքիս մասին: Ասիկա ի՛մ գործս է»:*

*Թարգմանություն ռուսերենից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 113, թ. 6-13. Մեքենագիր: Պատճեն: Ռուսերեն բնագիրը լույս է տեսել «Բանբեր Հայաստանի արխիվների» պարբերականի թիվ 1 (99), 2001, արևմտահայերեն թարգմանությունը՝ Բեյրութի «Զարթօնք» օրաթերթի 2003 թ. Յունիսի 11 ի համարում, որից էլ արտատպում է այս հատորում:*

*Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), Կազմող Գ. Յազըճեան, Երևան, 2008, էջ 253-256:*

№ 2

## ՀԵԳԽ-ի նախագահ Հր. Գրիգորեանի գրութիւնը ՀՍՍՀ ՊԱԿ-ի նախագահ Գէորգի Բաղամեանցին՝ Վազգէն Ա-ի հետ Սեպտեմբերի 18-ի զրոյցի արձանագրութիւնը կից ուղարկելու մասին

Թիւ 46 գ
21 Սեպտեմբերի 1956 թ.
Երեւան
**Գաղտնի**

*Սոյնին կից ի գիտութիւն Ձեզ եմ ուղարկում Վազգէն Ա Կաթողիկոսի հետ զրոյցի արձանագրութիւնը:*

*Առդիր յիշեալը 6 էջերում:*

*Խորհրդի նախագահ՝ Հր. Գրիգորեան*

***Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 117, թ.: Մեքենագիր: Պատճէն:***

18 Սեպտեմբերի 1956 թ.
Երեւան
**Գաղտնի**

## Վազգէն Ա Կաթողիկոսի հետ 18.09.1956 թ. զրոյցի արձանագրութիւնը

*Զրոյցը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Երուսաղէմի Պատրիարքութեան վերաբերեալ էր եւ տեղի ունեցաւ Կաթողիկոսին նախաձեռնութեամբ, որը չափազանց մտահոգուած է ստեղծուած իրավիճակով*

եւ նոյնիսկ որոշ չափով շփոթուած է ու չի պատկերացնում, թէ ինչ կարելի է ձեռնարկել գործնականում:

- Ներկայ իրավիճակում,- ասում է նա,- անշուշտ, աւելի նպատակայարմար է հրաւիրել Եպիսկոպոսական արտակարգ Ժողով, որը միայն ինքը կարող է իրաւազօր որոշում կայացնել ու դա իրականացնել:

Սակայն Կաթողիկոսը հաստատ համոզուած չէ, որ եթէ Եպիսկոպոսների Ժողով հրաւիրուի, չի ձախողուի անհրաժեշտ քւորումի բացակայութեան պատճառով: Կաթողիկոսը կարծում է, որ հաշուի առնելով հարցի լրջութիւնը, բազմաթիւ եպիսկոպոսներ, պատասխանատուութիւնից խուսափելով, այս կամ այն պատրուակով կհրաժարուեն Ժողովին գալուց, իսկ դա կարող է շատ ուժեղ ազդել Էջմիածնի հեղինակութեան վրայ:

Զրոյցի ընթացքում յանգեցինք հետեւեալ եզրակացութեանը. առայժմ սահմանափակուել Վազգէն Ա Կաթողիկոսի ստորագրութեամբ ներքոբերեալ շրջաբերական նամակի առաքմամբ, որը հասցէագրուած կլինի «Հայ Առաքելական Եկեղեցու բոլոր եպիսկոպոսներին»: ...

Զրոյցի ընթացքում Վազգէն Ա Կաթողիկոսն արծարծեց նաեւ ՍՍՀՄ Մինիստրների Սովետի նախագահ ընկեր Ն. Ա. Բուլգանինին ուղարկած իր նամակի հարցը: Նա ասաց, որ «ինձ հետ ուզում է առաւելագոյնս անկեղծ լինել»: Իր խօսքով՝ որոշ չափով հիասթափուած է եւ վստահ չէ, որ իրեն խոստացուած ամէն ինչ կատարուելու է, իսկ դա շատ լրջօրէն անդրադառնալու է իր հեղինակութեան եւ այն ամէնի վրայ, ինչ նա ցանկանում է իրականացնել արտասահմանում:

- Եթէ ես հաստատ համոզուած լինէի,- ասում է նա,- որ Հայ Եկեղեցին ՍՍՀՄ-ում բարենորոգելու իմ բոլոր ծրագրերը հնարաւոր կլինի իրագործել, ես աւելի վճռականօրէն կգործէի արտասահմանեան

*գործունէութեանն առնչուող բոլոր հարցերում, սակայն քանի որ որոշ չափով յոյս կորցրել եմ այդ հարցում, ապա ամէն անգամ արտասահմանին առնչուող որեւէ հարցի լուծման ժամանակ լուրջ տատանումներ եմ ունենում: Ինձ նաեւ հետապնդում է այն միտքը, որ վաղ թէ ուշ կարժանանամ Հայ Եկեղեցու արտասահմանի գործիչների կշտամբանքին, թէ բազմաթիւ խոստումներ եմ տուել եւ ոչինչ եմ կարողացել անել ՍՍՀՄ-ի ներսում, այլ միայն կոչեր եմ ուղղում արտասահմանին:*

*Իմ հարցին, թէ ի՞նչ հիմքեր ունի նման կասկածների համար, նա ասաց.*

*- Ես Վարչապետ Ն. Ա. Բուլգանինին եօթը խնդրանք եմ ներկայացրել, այդ բոլոր խնդրանքներին դրական պատասխան եմ ստացել, այդպիսի պատասխան եմ ստացել նաեւ վարչապետ Ա. Քոչինեանի մօտ ընդունելութեան, ինչն ինձ շատ ուրախացրեց: Ես այդ մասին ոգեւորուած պատմում էի ամէնքին, գրում էի իմ նամակներում, խօսում քարոզների ժամանակ: Այդ եօթը խնդրանքների իրականացումն ինձ համար վիթխարի գործ կլինէր: Սակայն արդէն քանի ամիս է անցել, որեւէ հարց գործնական լուծում չի ստացել: Նոյնիսկ այնպիսի հարցը, ինչպիսին է արտասահմանի հայութեան համար գրականութիւն հրատարակելու նպատակով թղթի տրամադրումը, որն, ըստ իս, պէտք է լուծուած լինէր մէկ շաբաթուայ ընթացքում, նոյնպէս անիրագործելի մնաց: Չի լուծւում Նոր եկեղեցիների բացման հարցը, մասնաւոր բնակիչներից վանական շինութիւնների ազատման հարցը նոյնպէս չի լուծւում…*

*Այնուհետեւ Կաթողիկոսը շօշափեց Վրաստանի Թեմական Խորհրդի կազմի հարցը, ասաց. Որ շատ բողոքներ են ստացւում այդ Խորհրդի եւ մասնաւորապէս Խորհրդի անդամներից մէկի՝ Յակոբ Տէր-Յարութիւնեանի վերաբերեալ, որն ակնյայտ խաբեբայ է եւ անխ-*

*նայօրէն վատնում է թեմի միջոցները: Նա հարցրեց ինձ վրացական իշխանութիւնները չե՞ն առարկի, եթէ ինքը Թեմական Խորհրդի կազմը թարմացնի եւ յատկապէս եթէ աշխատանքից ազատի Յակոբ Տէր-Յարութիւնեանին:*

*Մեքենագրուել է, 5 օր<ինակից>՝ ՀԿԿ Կենտկոմին, ՀՍՍՀ Մինիստրների Սովետին, ԿՊԳԽ-ին, ՀՍՍՀ ՊԱԿ-ին, <կցել> գործին*
*Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 117, թթ. 2-7: Մեքենագիր: Պատճէն:*

*Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), Կազմող Գ. Յազըճեան, Երեւան, 2008, էջ 307–312:*

## № 3

## ՀԵԳԽ-ի նախագահի ժամանակաւոր պաշտօնակատար Ա. Յովհաննիսեանի գրութիւնը ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինին Դոնի Ռոստով քաղաքի հայկական եկեղեցու փակման որոշումն անդառնալի լինելու մասին

*Թիւ 59 զ 22 Յուլիսի <19>59 թ.*
*Երեւան*
*Գաղտնի*

*Սոյնով կից Ձեզ ուղարկելով Վազգէն Ա Կաթողիկոսի Ռոստովի եկեղեցու վերաբերեալ Ձեզ հասցէագրուած նամակը, յայտնում եմ, որ երբ նա Խորհրդի նախագահի ընկ. Գասպարեանի հետ զրոյցի ժամանակ իր դժգոհութիւնն արտայայտեց յիշեալ եկեղեցու փակման որոշման առթիւ, նրան շատ յստակ բացատրութիւն տրուեց, թէ ներ-*

կայունն, ինչպէս յայտնի է, մեր երկրում շատ քաղաքներ բարեկարգւում են, որի ընթացքում անխուսափելիօրէն անհրաժեշտութիւն է ծագում շէնքերի, այդ թւում եւ եկեղեցիների տեղափոխման կամ վերակառուցման եւ թէ այս օրինաչափ երեւոյթը պէտք չէ դիտարկել իբրեւ պատրուակ այս կամ այն եկեղեցու, մզկիթի կամ աղօթատան փակման համար: Տուեալ դէպքում, Ռոստովի հայկական եկեղեցու վերակառուցման եւ դա այլ նպատակներով օգտագործելու հարցը եւս ծագել է քաղաքի մշակութային համալիրի բարեկարգման կապակցութեամբ, եւ Ռոստով քաղաքի տեղական մարմինների որոշման փոփոխութեան դիմումը չի կարող բաւարարուել:

Չնայած ընկ. Գասպարեանի այս որոշակի բացատրութեան, այնուհանդերձ, Կաթողիկոսը յամառօրէն խնդրեց իր նամակը Ձեր քննարկմանն ուղարկել:

ՀԵԳԽՍ-ը պաշտպանում է այն կարծիքը, թէ Կաթողիկոսին դիմումը պէտք է մերժել:

ԱՌԴԻՐ՝ ըստ շարադրանքի 2 էջերում:

Խորհրդի նախագահի ժ<ամանակաւոր> պաշտօնակատար

(Ս. Յովհաննիսեան)

Մեքենագրուել է 2 օրինակից հասցէատիրոջը, <կցել> գործին

***Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 159, թթ. 26–27: Մեքենագիր: Պատճէն: (ծնթ. — Փաստաթղթի երկրորդ էջի բաց տարածութեան մէջ, մատիտով, անստորագիր գրուել է ռուսերէն «տեղեկանք». «Քանի որ առաջին օրինակում յանկուածի համար 2 տեղ չկար, ապա գործի համար բան չի թողնուել: Յանկուածին իսկականը Մոսկուա է ուղարկուել 22.07.1959 թ.»)***

***Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ, Երեւան, 2008, էջ 754–755:***

№ 4

## ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինի գրությունը ՀԵԳԽ-ի նախագահի տեղակալ Մ. Հովհաննիսեանին Դոնի Ռոստով քաղաքի, հայկական Եկեղեցու փակման որոշումն անդառնալի լինելու մասին

*Թիւ 6-67*
*31 Յուլիսի 1959 թ.*
*Մոսկուա*

*ԿՊԳԽ-ը Կաթողիկոսից նամակ ստացաւ Դոնի Ռոստով քաղաքում հայկական տաճարի փակման մասին Ռոստովի Մարզգործկոմի որոշման վերաբերեալ:*

*Դոնի Ռոստով քաղաքի հայկական տաճարը գտնւում է մի շէնքում, ուր 1939 թուականին կազմակերպուել է Քաղաքային մանկական տեխնիկական կայանը, որի սարքաւորման վրայ շուրջ 1 մլն ռուբ. է ծախսուել Գերմանական գրաւման ժամանակաշրջանին այդ շէնքում աղօթաժողովներ սկսեցին անցկացուել:*

*Ներկայումս, Դոնի Ռոստով քաղաքի վերակառուցման գլխաւոր յատակագծի համաձայն, պէտք է վերակառուցուի Կ. Մարքսի հրապարակը, ուր գտնւում է տաճարը: Հրապարակի վերակառուցումն արդէն սկսուել է տաճարին կից գտնուող անյայտ զինուորի գերեզմանին անմար կրակ է վառւում, մօտ ժամանակներս տաճարի շէնքին կից Կ Մարքսի նոր արձանն է կանգնեցուելու:*

*Ռոստով քաղաքի Պրոլետարսկի Շրջգործկոմում եւ Ռոստովի քաղգործկոմում Ռոստով քաղաքի բնակիչների յայտարարութիւններ են ստացուել Մանկական տեխնիկական կայանը նորից բացելու խնդրանքով:*

*Հաշուի առնելով այս բոլորը եւ քաղաքի բնակիչների խնդրանքը կատարելով, Ռոստովի Մարզգործկոմը Դոնի Ռոստով քաղաքի հայկական տաճարը փակելու որոշում է կայացրել:*

*Քննարկելով Ռոստովի Մարզգործկոմի որոշումը, ԿՊԴԽ-ը համաձայնութիւն տուեց Ռոստով քաղաքի հայկական տաճարի փակմանը ելնելով այն բանից, որ տաճարից ոչ հեռու, քաղաքում կայ եւս մէկ, գրանցուած հայկական եկեղեցի, որտեղ էլ Ռոստով քաղաքի հայ հաւատացեալները կարող են իրենց կրօնական պահանջմունքները կատարել:*

*ԿՊԳԽ-ը Ձեզ յանձնարարում է ամբողջ վերոշարադրեալը հասցնել Կաթողիկոսին ի գիտութիւն:*

*Խորհրդի նախագահ (Ա. Պուզին)*

***<Մեքենագրուել է> 2 օրինակից***

***Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 159, թթ. 30-31: Մեքենագիր: Բնագիր: (ծնթ.- Մեքենագրուէլ է ԿՊԳԽ-ի պաշտօնաթղթի վրայ: Փաստաթղթի առաջին էջին վերը, ձախին, Ս. Գասպարեանի թանաքով արած է ռուսերէն մակագրութիւն. Հարցը վերջնականապէս լուծուած է: Քաղաքային իշխանութեան որոշումը վերանայման ենթակայ չէ: Այս մասին Կաթողիկոսին հաղորդուել է: 31.08.59 թ.»):***

***Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ, Երևան, 2008, էջ 755–756:***

## № 5

## ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինի գրությունը ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարեանին ՍՍՀՄ Մինիստրների Սովետի նախագահի առաջին տեղակալ Ա. Կոսիգինի մօտ Վազգէն Ա-ի ընդունելութեան արձանագրութիւնը կից ուղարկելու մասին

*Թիւ 14-66 գ*

*8 Հոկտեմբերի 1960թ.*

*Մոսկուա*

*Գաղտնի*

*ՍՍՀՄ Մինիստրների Սովետին առընթեր ԿՊԳԽ-ը ի գիտութիւն Ձեզ է ուղարկում արձանագրութիւնը ՍՍՀՄ Մինիստրների Սովետի նախագահի առաջին տեղակալ ընկ. Ա. Ն. Կոսիգինի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ի հետ զրոյցի, որը կայացել է ս. թ. Հոկտեմբերի 1-ին:*

*Զրոյցի ընթացքում, ինչպէս երեւում է արձանագրութիւնից, Վազգէն Ա-ն առաջադրել է Էջմիածնի միջազգային գործունէութեանը եւ Հայ Եկեղեցու ներքին վիճակին վերաբերող մի շարք հարցեր…*

*Առդիր՝ յիշեալը:*

*Մեքեն<ագրուել է> 2 օր<ինակից>՝ հասցէատիրոջը, <կցել> գործին*

*Գործ<ադրող>՝ Սոլովեվ*

*Մեքեն<ագրուհի> Ռասսադինա*

*Թիւ 415, 7.10.1960 թ.,*

*Խորհրդի նախագահ՝ Ա. Պուզին*

*Թարգմանություն ռուսերենից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 169, թթ. 72-72-ի դարձերես: Մեքենագիր: Բնագիր: (Ծնթ. - Փաստաթղթի առաջին էջին վերը, կենտրոնում, արված են ռուսերէն մակագրութիւններ. «Ընկ. Ասատրեանին – Առդիր ընկ. Պուզինին մեր պատասխանին: 13.10.1960 թ.»: «Մուտքահամար 27 գ, ստաց<ուած> 10.10.1960 թ-ին»):*

## Ա. Ն. Կոսիգինի եւ Հայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոս Վազգէն Ա-ի զրոյցի արձանագրութիւնը

(ծնթ.- Փաստաթղթում «Հայ-Գրիգորեան Եկեղեցի»)

*Փոխադարձ ողջոյններից յետոյ Վազգէն Ա-ն երախտագիտութիւն է յայտնում ՍՍՀՄ կառավարութեանը՝ իրեն արտասահմանեան երկրների հայկական եկեղեցիներ այցելելու հնարաւորութիւն ընձեռելու համար:*

*Գրեթէ մէկուկէս միլիոն հայեր,- ասում է Վազգէն Ա-ը,- ներկայումս ապրում են Սովետական Հայաստանի սահմաններից դուրս...*

*Հարկ է նշել, որ կրօնական կեանքի նկատմամբ հետաքրքրութիւնն արտասահմանում շատ մեծ է: Բազմաթիւ մամուլի ասուլիսներում, հանդիպումների ու զրոյցների ընթացքում Մենք մշտապէս ու անփոփոխ կերպով շեշտում էինք, որ Սովետական Հայաստանում, ինչպէս եւ ՍՍՀՄ-ի միւս հանրապետութիւններում, Եկեղեցու եւ պետութեան միջեւ գոյութիւն ունեն բնականոն յարաբերութիւններ: Քաղաքացիներն իրենց կրօնական զգացմունքներն արտայայտելու ազատ են...*

*Միւս հարցերը, որոնք կուզէի ներկայացնել Ձեզ, վերաբերում են Էջմիածնի ներքին գործունէութեանը, որը կապուած է արտասահմանի գաղթօջախներում մեր հեղինակութեան հետ: Ինձ աննպատակայարմար է թւում, որ մեր դիրքերն արտասահմանում թուլանան: Հի-*

մա ՍՍՀՄ տարածքում կան աննշան թուով հայկական եկեղեցիներ, եւ եթէ դրանց մի մասը փակուի, ապա դա կվնասի արտասահմանում մեր գործին: Վերջին երկու տարուայ ընթացքում, մասնաւորապէս նման երեւոյթ գրանցուեց Հիւսիսային Կովկասում, ինչպէս նաեւ Աստրախանում, Կրասնոդարում եւ այլուր: Կուզէի պարոն Կոսիգինի, ինչպէս նաեւ կառավարութեան բարձր ու հրաւիրել այն բանի վրայ, որ ներկայումս գոյութիւն ունեցող եկեղեցիների նուազագոյն քանակը պէտք է պահպանել՝ ի շահ արտասահմանում մեր ընդհանուր գործին:

Նոյնը կուզէի ասել նաեւ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի մասին: 5-6 տարի առաջ մեր Հոգեւոր ճեմարանը 60–70 սան ունէր, իսկ ներկայումս 26 հոգի կայ: Դա շատ փոքր թիւ է: Հիմա առկայ է յետագայ կրճատման վտանգ, քանի որ 10 հոգի բանակ են զօրակոչւում: Դա հաւասարազօր է ճեմարանը փակելուն, ինչը մեզ վրայ աղիտալի ազդեցութիւն կգործի: Դա աւելի մեծ տպաւորութիւն կթողնի արտասահմանում: Ուստի, կարծում եմ (ես չեմ ուզում, որ մեր Հոգեւոր ճեմարանի սաների թիւը չափից դուրս մեծ լինի), հանրապետութիւնից 30 սովորող եւ արտասահմանից 10 հոգին բաւարար կլինէր: Դա այն նուազագոյն թիւն է, որպէսզի տպաւորութիւն առեղծուի, թէ մեզ մօտ Հոգեւոր ճեմարան է գործում:

Կայ եւս մէկ փոքր հարց, որն ուզում եմ Ձեր բարձր ուշադրութեանը ներկայացնել՝ Բաքուի եւ Մոսկուայի թեմերի Առաջնորդների բնակարանների խնդիրը: Արդէն մի քանի տարի է (աւելի քան 4 տարի) հարցը ձգձգւում է, սակայն դեռ լուծում չկայ:

Ահա՛ այն հարցերը, որոնք ցանկացայ Ձեր ուշադրութեանը ներկայացնել...

*Զրոյցին ներկայ էին ՍՍՀՄ Մինիստրների Սովետին առընթեր ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինը եւ ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարեանը (ծնթ.- Վերջին պարբերութիւնը ավելացրուել է ձեռագիր):*

*Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 169, թթ. 73-78: Մեքենագիր: Պատճէն:*

*Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գիրք ԺԶ, Երևան, 2008, էջ 886–892:*

## № 6

## ՀԵԳԽ-ի նախագահ Ս. Գասպարեանի գրութիւնը ԿՊԳԽ-ի նախագահ Ա. Պուզինին, ՀԿԿ Կենտկոմին եւ ՀՍՍՀ Մինիստրների Սովետին՝ Եղիշէ Վրդ. Սարգսեանի կարգաթողութեան մասին

Թիւ 30 գ
3 Մայիսի 1961թ.
Երեւան
Գաղտնի

*Ս. թ. Ապրիլի 26-ին Եկեղեցուց հրաժարուեց եւ Էջմիածնի վանքից հեռացաւ Ադրբեջանի թեմի (ծնթ.- ճիշտը՝ «Ադրբեջանի եւ Թուրքեստանի թեմ») Առաջնորդ Եղիշէ Վրդ. Սարգսեանը:*

*Վազգէն Ա-ի հետ Ապրիլի 30-ին կայացած զրոյցի ընթացքում հետաքրքրուեցինք Եղիշէ Վրդ-ի հեռացման պատճառներով: Կաթողիկոսին խօսքով՝ Եղիշէն դեռեւս չի ասել այն շարժառիթները, որոնք նման որոշման են յանգեցրել: Վազգէն Ա-ը հակուած է դա բացատ-*

*ելու նրանով, որ «երիտասարդ հոգեւորականութեան մօտ հոգեւոր հիմքերն ընդհանրապէս թոյլ են, նրանք չունեն գիտակցութիւնն այն գործի օգտակարութեան, որին իրենք ծառայում են»: Կաթողիկոսին կարծիքով՝ Եղիշէի հեռացմանը ինչ-որ չափով նպաստել է «աթէիստական աշխատանք տանելու անընդհատ իրավիճակը»: Սկզբում,- այնուհետեւ ասաց Կաթողիկոսը,- իմ շրջապատում ենթադրութիւն յայտնեցին, որ Եղիշէն, հաւանական է, ընտանիք է ուզում կազմել: Յայտարարելով, թէ այդ հանգամանքը քիչ հաւանական է. Կաթողիկոսն աւելացրեց, որ եթէ Եղիշէ Վարդապետին հեռացումը այդ պատճառի հետ կապուած լինէր, ապա ինք, Կաթողիկոսը, դա ամբողջովին բնական կհամարէր (**Ծնթ.**-* Իսկապէս, Եղիշէ Վրդ-ն ամուսնացաւ, դարձաւ ամուսնացեալ քահանայ եւ երկար տարիներ վարեց Հոգեւոր ճեմարանի տեսչութիւն): *Այնուհետեւ նա ասաց, որ ինք չափազանց դառնացել է այդ հանգամանքից, քանի որ Եղիշէ Սարգսեանը մէկն էր այն քչերից, ում կարելի էր արտասահմանեան հարցերում օգտագործել: Ինչպէս Կաթողիկոսը յայտարարեց, ինք փորձել է նրան այդ քայլից հեռու պահել, բայց ապարդիւն: Ինք խորհուրդ է տուել նրան՝ լաւ մտածել, նրան մինչեւ վեց ամիս արձակուրդ է առաջարկել, առաջարկել է ուղեւորութիւն կատարել Մոսկուա, Լենինգրադ, ապա, երբ վերջնական որոշում կընդունի՝ այդ մասին հաղորդել, սակայն Եղիշէն մերժել է եւ ասել, որ իր որոշումը վերջնական է:*

*Էջմիածնի Կաթողիկոսութեան միաբանութեան նախկին անդամ Եղիշէ Վրդ. Սարգսեանը ծնուել է 1929 թուականին, Էջմիածին քաղաքում, գիւղացու ընտանիքում:*

*Էջմիածնի Հոգեւոր ճեմարան է մտել 1945 թուականին եւ դա աւարտել 1951 թուականին:*

*Որոշ ժամանակ Կաթողիկոսի գաւազանակիր է աշխատել:*

*1960 թուականին Կաթողիկոսի շքախմբի որպէս անդամ ուղեւորութիւն է կատարել ԱՄՆ եւ Հարաւային Ամերիկա:*

*1961 թ. Փետրուարի 1-ին Վազգէն Ա Կաթողիկոսի կողմից Աղբերանի, թեմի Առաջնորդ է նշանակուել:*

*Խորհրդի նախագահ Ս. Գասպարեան*

***Մեքենագրուած է 2 օրինակից՝ հասցէատիրոջը, <կցել> գործին***

***(Թարգմանութիւն ռուսերէնից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 3, գ. 179, թթ. 21-22: Մեքենագիր: Պատճէն***

***(Ծնթ.- Փաստաթղթի առաջին էջի վերեւում՝ թանաքով, ձեռագիր աւելացուել են միւս հասցէատէրերի անունները՝ «ՀԿԿ Կենտկոմ, Հայկ. ՍՍՀ Մինսովետ»):***

***Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ, Երևան, 2008, էջ 952–953:***

№ 7

## Քաղուածք ԿՊԳԽ-ի նիստի արձանագրութիւնից՝ Հայ Եկեղեցու Հիւսիսային Կովկասի եւ Նոր Նախիջեւանի թեմը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի վերակազմակերպելու առաջարկութեանը հաւանութիւն տալու մասին

Թիւ 319

22 Մայիսի 1964 թ.

Մոսկուա

**12.<05.> 1964 թ. թիւ 10 արձանագրութիւնից**

Լսեցին

*6. Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր ՀԵԳԽՍ-ի 2 Ապրիլի 1964 թ. թիւ. 91 նամակը (ծնթ.- Այս տողերի ներքեւում թանաքով արուել է ռուսերէն նշում՝ ՀԵԳԽ մուտքագրման տուեալներով. «Մուտքահամար 55, 26.05.64»):*

Որոշեցին

*Համաձայնել Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր ՀԵԳԽՍ-ի՝ Հայ Եկեղեցու Հիւսիսային Կովկասի եւ Նոր Նախիջեւանի թեմը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի վերակազմակերպելու մասին առաջարկութեանը՝ այդ թեմի կենտրոնը Ռոստովից Մոսկուա տեղափոխելով (ծնթ.- Այս տողերի ներքեւում մատիտով արուել է ռուսերէն նշում. «Հաղորդուել է Էջմիածնին: 27.05.64 թ.»):*

*Լ. Ն. (ծնթ.- Լիազոր Ներկայացուցիչ),*

*Խորհրդի Նախագահ՝ Ա. Պուզին*

*Խորհրդի պատասխանատու քարտուղար՝ Բ. Տիտկով*

*Քաղուածքը ճիշտ է (Խորհրդի քարտուղարութեան վարիչ՝*

*Սելիվանովա*

Թարգմանություն ռուսերենից: ՀԱԱ, ֆ. 823, ց. 1, գ. 254, թ. 18: Մեքենագիր: Բնագիր:

***Տե՛ս Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955-1994 թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, գիրք ԺԶ, Երևան, 2008, էջ 1185:***

Հավելված 5

# ԽՍՀՄ-Ի ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ 1970 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Աղյուսակ 1

Հայ բնակչության թվաքանակն ու տեղաբաշխումը միութենական հանրապետություններում. նրանց տոկոսային կշիռը

| | թվաքանակը | ամբողջը %-ով |
|---|---|---|
| ԽՍՀՄ, որից | 3.559.151 | 100 |
| 1. Հայկական ԽՍՀ | 2.208.327 | 62.0 |
| 2. Ադրբեջանական ԽՍՀ | 483.520 | 13.6 |
| 3. Վրացական ԽՍՀ | 452.309 | 12.7 |
| 4. ՌԽՖՍՀ | 298.718 | 8.4 |
| 5.Ուզբեկական ԽՍՀ | 34.174 | 1.0 |
| 6.Ուկրաինական ԽՍՀ | 33.439 | 0.9 |
| 7. Թուրքմենական ԽՍՀ | 23.054 | 0.6 |
| 8. Ղազախական ԽՍՀ | 12.814 | 0.4 |
| 9. Տաջիկական ԽՍՀ | 3.787 | 0.1 |
| 10. Կիրգիզական ԽՍՀ | 2.688 | 0.1 |
| 11.Բելոռուսական ԽՍՀ | 2.362 | 0.07 |
| 12. Լատվիական ԽՍՀ | 1.511 | 0.04 |
| 13. Մոլդովական ԽՍՀ | 1.336 | 0.04 |
| 14. Էստոնական ԽՍՀ | 604 | 0.02 |
| 15. Լիտվական ԽՍՀ | 508 | 0.01 |

Աղյուսակ 2

ԽՍՀՄ առավել մեծաթիվ հայ բնակչություն ունեցող հանրապետությունները և նրանց կազմերում գտնվող ԻԽՍՀ-երի հայության թվաքանակը. տոկոսային կշիռն ըստ 1959 և 1970 թվականների Համամիութենական մարդահամարների արդյունքների

| | 1959 | % | 1970 | % |
|---|---|---|---|---|
| 1. ՌԽՖՍՀ , որից | 255.978 | 0.2 | 298.718 | 0.2 |
| Հյուսիս-Օսական ԻԽՍՀ | 12.012 | 2.7 | 13.335 | 2.4 |
| Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ | 13.213 | 1.9 | 14.543 | 1.4 |
| 2. Վրացական ԽՍՀ, որից | 442.916 | 11.0 | 452.309 | 9.7 |
| Աբխազական ԻԽՍՀ | 64.425 | 15.9 | 74.850 | 15.4 |
| Աջարական ԻԽՍՀ | 15.830 | 6.5 | 15.614 | 5.0 |
| 3. Ադրբեջանական ԽՍՀ, որից | 442.089 | 12.0 | 483.520 | 9.4 |
| Նախիջևանի ԻԽՍՀ | 9.519 | 6.7 | 5828 | 2.9 |

Աղյուսակ 3

ՌԽԴՍՀ որոշ ինքնավարությունների, երկրամասերի և քաղաքների հայություն թիվը, մայրենի, ռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| ԽՍՀՄ, ՌԽԴՍՀ առանձին երկրամասեր | Ամբողջը | Մայրենի լեզու | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | այլ | հայ. | ռուս | այլ |
| ԽՍՀՄ | 3.559.151 | 3.254.132 | 268.824 | 36.195 | 80.328 | 1.071.758 | 132.657 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կրասնոդար | 98.589 | 76.207 | 22.263 | 119 | 7.910 | 64.295 | 405 |
| Ադղեական ԻՄ | 5.217 | 4.088 | 1.119 | 10 | 370 | 3.617 | 42 |
| Ստավրոպոլ | 31.096 | 21.188 | 9.878 | 30 | 3.343 | 18.800 | 214 |
| Աստրախան | 1.784 | 861 | 912 | 11 | 228 | 819 | 22 |
| ք. Լենինգրադ /քաղ-խորհրդին ենթ. բնակավայրերով/ | 6.628 | 2.290 | 4.286 | 52 | 1.366 | 2.172 | 172 |
| ք. Մոսկվա /քաղ-խորհրդին ենթ. բնակավայրերով/ | 25.584 | 9.008 | 16.448 | 128 | 5.595 | 8.453 | 741 |
| Մոսկվայի մարզ | 5.683 | 2.296 | 3.360 | 27 | 1.100 | 2.110 | 184 |
| Ռոստով | 53.620 | 37.383 | 16.220 | 17 | 5.287 | 31.471 | 164 |
| Դաղստանի ԻԽՍՀ | 6.615 | 5.041 | 1.563 | 11 | 276 | 4.530 | 95 |
| Կաբարդինա-Բալկարական ԻԽՍՀ | 2.033 | 1.364 | 647 | 22 | 120 | 1.241 | 40 |
| Հյուսիս-Օսական ԻԽՍՀ | 13.355 | 10.345 | 2.925 | 85 | 573 | 9.582 | 138 |
| Չեչենա-Ինգուշական ԻԽՍՀ | 14.543 | 10.081 | 4.437 | 25 | 1.017 | 8.896 | 107 |

Աղյուսակ 4

## Ուկրաինական ԽՍՀ որոշ մարզերի հայության թիվը, մայրենի, ռուսերեն ուկրաիներեն և այլ լեզուներին տիրապետելու վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | ուկր | այլ | հայ. | ռուս | ուկր | այլ |
| Ուկրաինական ԽՍՀ | 33.439 | 12.853 | 19.587 | 855 | 144 | 5.257 | 11.805 | 3.722 | 605 |
| ք. Կիև | 2.976 | 1068 | 1.853 | 40 | 15 | 569 | 997 | 482 | 58 |
| Դոնեցկ | 6.029 | 2.137 | 3.827 | 44 | 21 | 1.086 | 1.960 | 578 | 98 |
| Ղրիմ | 3.091 | 1.372 | 1.706 | 2 | 11 | 436 | 1.217 | 46 | 67 |
| Օդեսա | 3.588 | 1.215 | 2.310 | 46 | 17 | 613 | 1.111 | 307 | 60 |
| Խարկով | 4.832 | 1.653 | 3.111 | 56 | 12 | 954 | 1.522 | 562 | 58 |

Աղյուսակ 5

Բելոռուսական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, բելոռուսերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ընդամենը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | բելոռ. | այլ | հայ. | ռուս. | բելոռ. | այլ |
| Բելոռուսական ԽՍՀ, որից | 2.362 | 1.055 | 1.224 | 74 | 9 | 319 | 962 | 103 | 83 |
| Քաղաքաբնակ | 1.999 | 857 | 1.098 | 37 | 7 | 289 | 788 | 87 | 75 |
| Գյուղաբնակ | 363 | 198 | 126 | 37 | 2 | 30 | 174 | 16 | 7 |
| Արական | 1.615 | 871 | 698 | 40 | 6 | 223 | 794 | 42 | 55 |
| Իգական | 747 | 184 | 526 | 34 | 3 | 96 | 168 | 61 | 27 |

Աղյուսակ 6

## Ուզբեկական ԽՍՀ որոշ մարզերի հայության թիվը, մայրենի, ռուսերեն, ուզբեկերեն և այլ լեզուների տիրապետելու վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս. | ուզբ. | այլ | հայ | ռուս. | ուզբ. | այլ |
| Ուզբեկական ԽՍՀ, որից | 34.174 | 21.585 | 12.517 | 35 | 37 | 2.672 | 17.797 | 1.210 | 334 |
| Քաղաքաբնակ | 32.309 | 20.083 | 12.171 | 25 | 30 | 2.642 | 16.832 | 1.058 | 307 |
| Գյուղաբնակ | 1.865 | 1.502 | 346 | 10 | 7 | 30 | 965 | 152 | 27 |
| ք. Տաշքենդ | 13.361 | 6.748 | 6.593 | 10 | 13 | 1.510 | 5.788 | 414 | 95 |
| Տաշքենդի մարզ | 1.621 | 997 | 617 | 2 | 5 | 113 | 826 | 60 | 19 |
| Անդիժան | 2.254 | 1714 | 536 | 4 | - | 92 | 1.409 | 129 | 5 |
| Սամարղանդ | 9.280 | 6.600 | 2.661 | 9 | 10 | 626 | 5.430 | 242 | 97 |
| Սիրդարյա | 1.206 | 996 | 208 | 1 | 1 | 31 | 753 | 37 | 16 |
| Ֆերգանա | 3.307 | 2.296 | 1.009 | 1 | 1 | 176 | 1.844 | 145 | 24 |

Աղյուսակ 7

## Ղազախական ԽՍՀ հայության թիվը. մայրենի, ռուսերեն, ղազախերեն և այլ լեզուներին տիրապետելու,քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ընդամենը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս. | ղազախ | այլ | հայ. | ռուս. | ղազախ | այլ |
| Ղազախական ԽՍՀ, որից՝ | 12.814 | 7.604 | 4.752 | 5 | 453 | 800 | 6.899 | 82 | 298 |
| Քաղաքաբնակ | 9.677 | 5.837 | 3.782 | 2 | 56 | 694 | 5.227 | 51 | 254 |
| Գյուղաբնակ | 3.137 | 1.767 | 970 | 3 | 397 | 106 | 1.672 | 31 | 44 |
| Արական | 8.357 | 5.523 | 2.614 | 2 | 218 | 521 | 5.072 | 46 | 218 |
| Իգական | 4.457 | 2.081 | 2.138 | 3 | 235 | 279 | 1.827 | 36 | 80 |
| ք. Ալմա-Աթա | 1.516 | 818 | 688 | - | 10 | 126 | 716 | 12 | 37 |
| Գուրևի մարզ | 1.833 | 1.165 | 657 | - | 11 | 145 | 1.041 | 15 | 77 |

Աղյուսակ 8

## Վրացական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ընդամենը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | վրաց. | այլ | հայ. | ռուս. | վրաց. | այլ |
| Վրացական ԽՍՀ, որից | 452.309 | 383.349 | 36.410 | 32.246 | 304 | 7.903 | 160.435 | 51.477 | 2.656 |
| Քաղաքբնակ | 255.115 | 194.200 | 35.019 | 25.656 | 240 | 7.050 | 109.778 | 45.371 | 1.075 |
| Գյուղաբնակ | 197.194 | 189.149 | 1.391 | 6.590 | 64 | 853 | 50.657 | 6.106 | 1.581 |
| Արական | 217.874 | 184.866 | 17.112 | 15.753 | 143 | 3.797 | 87.970 | 24.885 | 1.448 |
| Իգական | 234.435 | 198.483 | 19.298 | 16.493 | 161 | 4.106 | 72.465 | 26.592 | 1.208 |
| ք. Թբիլիսի | 150.205 | 108.867 | 25.941 | 15.224 | 173 | 4.609 | 59.169 | 36.928 | 482 |
| Հանրապետական ենթ. Շրջաններ | 210.383 | 188.642 | 5.752 | 15.894 | 95 | 2.064 | 46.022 | 12.797 | 2.037 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Աբխազական ԻԽՍՀ | 74.850 | 72.151 | 2.577 | 108 | 14 | 757 | 45.659 | 420 | 71 |
| Աջարական ԻԽՍՀ | 15.614 | 13.405 | 2.053 | 153 | 3 | 456 | 8.997 | 1.211 | 22 |
| Հարավ-Օսական ԻՄ | 1.254 | 283 | 86 | 866 | 19 | 17 | 588 | 121 | 44 |

Աղյուսակ 9

Ադրբեջանական ԽՍՀ հայության թիվը մայրենի, ռուսերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս. | ադրբ. | այլ | հայ. | ռուս. | ադրբ. | այլ |
| Ադրբեջանական ԽՍՀ, որից՝ | 483.520 | 403.610 | 79.123 | 700 | 87 | 26.814 | 168.545 | 43.549 | 467 |
| Քաղաքաբնակ | 344.577 | 265.203 | 78.698 | 610 | 66 | 26.571 | 153.500 | 33.385 | 392 |
| Գյուղաբնակ | 138.943 | 138.407 | 425 | 90 | 21 | 243 | 15.045 | 10.164 | 75 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Արական | 231.222 | 193.287 | 37.712 | 185 | 38 | 12.699 | 87.114 | 23.847 | 227 |
| Իգական | 252.298 | 210.323 | 41.411 | 515 | 49 | 14.115 | 81.431 | 19.702 | 240 |
| ք. Բաքու /քաղ-խորհրդին ենթ. բնակավայրերով/ | 207.464 | 141.131 | 65.966 | 334 | 33 | 21.615 | 98.885 | 16.325 | 239 |
| Հանրապետական ենթ. Շրջաններ | 149.160 | 137.797 | 10.965 | 349 | 49 | 3.560 | 48.017 | 21.776 | 193 |
| Նախիջևանի ԻԽՍՀ | 5.828 | 5.738 | 77 | 11 | 2 | 30 | 800 | 1.306 | 6 |
| Լեռնային Ղարաբաղի ԻՄ | 121.068 | 118.944 | 2.115 | 6 | 3 | 1.609 | 20.843 | 4.142 | 29 |

Աղյուսակ 10

**Մոլդովական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, մոլդովերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների**

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | մոլդ. | այլ | հայ. | ռուս. | մոլդ. | այլ |
| Մոլդովական ԽՍՀ, որից | 1.336 | 481 | 803 | 39 | 13 | 124 | 490 | 148 | 48 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Քաղաքաբնակ | 1.154 | 381 | 732 | 34 | 7 | 113 | 394 | 136 | 38 |
| Գյուղաբնակ | 182 | 100 | 71 | 5 | 6 | 11 | 96 | 12 | 10 |
| Արական | 794 | 350 | 412 | 23 | 9 | 79 | 351 | 69 | 23 |
| Իգական | 542 | 131 | 391 | 16 | 4 | 45 | 139 | 79 | 25 |

Աղյուսակ 11

### Կիրգիզական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, կիրգիզերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս. | կիրգ. | այլ | հայ. | ռուս. | կիրգ. | այլ |
| Կիրգիզական ԽՍՀ, որից | 2.688 | 1.806 | 676 | 4 | 202 | 113 | 925 | 220 | 350 |
| Քաղաքաբնակ | 1.288 | 660 | 598 | 1 | 29 | 106 | 594 | 10 | 50 |
| Գյուղաբնակ | 1.400 | 1.146 | 78 | 3 | 173 | 7 | 331 | 210 | 300 |
| Արական | 1.495 | 1.022 | 360 | 2 | 111 | 73 | 627 | 108 | 159 |
| Իգական | 1.193 | 784 | 316 | 2 | 91 | 40 | 298 | 112 | 191 |

Աղյուսակ 12

Տաջիկական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, տաջիկերեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս | տաջ. | այլ | հայ. | ռուս. | տաջ. | այլ |
| Տաջիկական ԽՍՀ, որից | 3.787 | 2.415 | 1.364 | 1 | 7 | 202 | 1.906 | 92 | 94 |
| Քաղաքաբնակ | 3.422 | 2.095 | 1.322 | 1 | 4 | 196 | 1.794 | 79 | 73 |
| Գյուղաբնակ | 365 | 320 | 42 | - | 3 | 6 | 112 | 13 | 21 |
| Արական | 2.066 | 1.325 | 738 | - | 3 | 129 | 1.086 | 49 | 54 |
| Իգական | 1.721 | 1.090 | 626 | 1 | 4 | 73 | 820 | 43 | 40 |

Աղյուսակ 13

Թուրքմենական ԽՍՀ հայության թիվը, մայրենի, ռուսերեն, թուրքմեներեն և այլ լեզուներին տիրապետելու, քաղաքաբնակների և գյուղաբնակների վերաբերյալ տվյալները ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հայ. | ռուս. | թուրք. | այլ | հայ. | ռուս. | թուրք. | այլ |
| Թուրքմենական ԽՍՀ. որից* | 23.054 | 16.191 | 6.850 | 6 | 7 | 1.621 | 13.383 | 357 | 184 |
| Քաղաքաբնակ | 22.463 | 15.692 | 6.758 | 6 | 7 | 1.598 | 13.145 | 350 | 179 |
| Գյուղաբնակ | 591 | 499 | 92 | - | - | 23 | 238 | 7 | 5 |
| Արական | 11.450 | 8.013 | 3.429 | 4 | 4 | 817 | 6.744 | 217 | 98 |
| Իգական | 11.604 | 8.178 | 3.421 | 2 | 3 | 804 | 6.639 | 140 | 86 |
| ք. Աշխաբադ | 11.722 | 8.153 | 3.566 | 1 | 2 | 869 | 6.971 | 146 | 73 |
| Հանրապետական ենթ. Շրջաններ | 4.865 | 3.518 | 1.342 | 3 | 2 | 240 | 2.883 | 41 | 65 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մառի մարզ | 4.903 | 3.539 | 1.360 | 2 | 2 | 379 | 2.813 | 115 | 23 |
| Չարջոու | 1.307 | 792 | 514 | - | 1 | 121 | 600 | 42 | 13 |

Աղյուսակ 14

### ԽՍՀՄ հայության լեզվական պատկանելիությունը և տարիքային կազմը ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի արդյունքների

| | Ամբողջը | Մայրենի լեզու | | | Որպես երկրորդ լեզու ազատ. տիրապետողներ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | ազգ. լեզու | ոչ իր ազգ. լեզու | | ազգ. լեզու | ոչ իր ազգ. լեզու | |
| | | հայերեն | ռուս. | այլ | հայերեն | ռուս. | այլ |
| Հայեր, այդ թվում | 3.559.151 | 3.254.132 | 268.824 | 36.195 | 80.328 | 1.071.758 | 132.657 |
| 0-10 տարեկան | 895.936 | 839.392 | 50.375 | 6.169 | 8.928 | 67.362 | 6.946 |
| 11-15 | 418.308 | 385.149 | 29.960 | 3.199 | 8.977 | 81.273 | 8.736 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16-19 | 251.545 | 232.296 | 17.360 | 1.889 | 5.636 | 94.226 | 7.012 |
| 20-29 | 383.917 | 356.610 | 23.644 | 3.663 | 8.396 | 192.966 | 13.607 |
| 30-39 | 522.356 | 492.918 | 24.248 | 5.200 | 9.253 | 235.104 | 25.673 |
| 40-49 | 382.454 | 358.564 | 19.168 | 4.722 | 7.894 | 169.041 | 23.924 |
| 50-59 | 197.892 | 184.808 | 9.854 | 3.230 | 4.298 | 73.609 | 13.079 |
| 60 տ. և ավելի | 325.484 | 309.125 | 10.738 | 5.621 | 4.657 | 80.633 | 23.950 |
| Ըստ տարիքային խմբի չբաշխվածներ | 181.259 | 95.270 | 83.487 | 2.502 | 22.289 | 77.544 | 9.730 |

Աղյուսակ 15

## Ամուսնացած հայ տղամարդկանց և կանանց թվաքանակը Վրացական ԽՍՀ-ում, Ադրբեջանական ԽՍՀ-ում, Թուրքմենական ԽՍՀ-ում, Հայկական ԽՍՀ-ում 1959 թ. և 1970 թ.

| Հայեր | Տվյալ սեռի և տարիքի 1000 մարդուց ամուսնացած | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | բոլորը, 16 տ. և բարձր | | 16-19 տ. | | 20-29 տ. | | 30-39 տ. | | 40-49 տ. | | 50-59 տ. | | 60 տ. և բարձր | |
| | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին |
| ՎԽՍՀ 1959 թ. | 700 | 575 | 24 | 142 | 521 | 660 | 930 | 788 | 954 | 652 | 947 | 588 | 855 | 351 |
| 1970 թ. | 741 | 632 | 21 | 151 | 452 | 700 | 915 | 850 | 953 | 792 | 938 | 621 | 859 | 409 |
| ԱԽՍՀ 1959 թ. | 697 | 583 | 10 | 167 | 498 | 690 | 927 | 801 | 964 | 632 | 951 | 580 | 895 | 293 |
| 1970 թ. | 726 | 615 | 8 | 127 | 383 | 683 | 913 | 867 | 952 | 791 | 949 | 585 | 877 | 350 |
| ԹԽՍՀ 1959 թ. | 673 | 558 | 15 | 149 | 479 | 644 | 913 | 789 | 961 | 650 | 941 | 487 | 845 | 219 |
| 1970 թ. | 707 | 582 | 22 | 107 | 446 | 663 | 894 | 852 | 923 | 762 | 910 | 537 | 852 | 268 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀԽՍՀ 1959 թ. | 691 | 592 | 19 | 166 | 522 | 674 | 952 | 822 | 977 | 662 | 964 | 579 | 865 | 332 |
| 1970 թ | 698 | 640 | 16 | 160 | 437 | 695 | 931 | 865 | 967 | 826 | 956 | 642 | 878 | 419 |

Աղյուսակ 16

Ամուսնացած հայ տղամարդկանց և կանանց թվաքանակը ԽՍՀՄ-ում 1959 թ. և 1970 թ.

| Հայեր | Տվյալ սեռի և տարիքի 1000 մարդուց ամուսնացած | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդհանուրը 16 տ. և բարձր | | 16-19 տ. | | 20-29 տ. | | 30-39 տ. | | 40-49 տ. | | 50-59 տ. | | 60 տ. և բարձր | |
| | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին | տղ. | կին |
| 1959 թ. | 694 | 583 | 18 | 158 | 515 | 671 | 941 | 807 | 968 | 649 | 957 | 576 | 868 | 326 |
| 1970 թ. | 711 | 630 | 15 | 152 | 434 | 692 | 923 | 861 | 960 | 808 | 950 | 619 | 872 | 395 |

Աղյուսակ 17

ԽՍՀՄ հայ բնակչության կրթության աստիճանը 1959 թ. և 1970 թ.

| ԽՍՀՄ | 10 տարեկան և ավելի 1000 մարդուց կրթություն ունեցող | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տարին | Բարձրագույն | Թերի բարձր. | Միջին մասն. | Ընդհ. միջն. | Թերի միջն. | Ընդամենը միջ. և բարձրագույն /առանց թերի/ | Տարրական |
| Ամբողջը, որից՝ | 1959 | 38 | 14 | 38 | 120 | 233 | 443 | 252 |
| | 1970 | 55 | 20 | 50 | 185 | 208 | 518 | 271 |
| քաղաքաբնակ | 1959 | 58 | 21 | 47 | 156 | 238 | 520 | 238 |
| | 1970 | 76 | 27 | 59 | 224 | 205 | 591 | 242 |
| գյուղաբնակ | 1959 | 13 | 6 | 27 | 72 | 226 | 344 | 270 |
| | 1970 | 16 | 6 | 31 | 112 | 212 | 377 | 325 |

*Տե՛ս Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, М.,1973.*

# ՎԵՐՋԱԲԱՆ

ԽՍՀՄ կազմի մեջ մտնող միութենական բոլոր հանրապետություններում հայեր էին բնակվում, ովքեր իրենց աշխատանքով ու վաստակած հարգանքով առաջնակարգ տեղ էին զբաղեցնում բազմազգ այդ պետության ժողովուրդների շարքում: Հայկական ԽՍՀ-ում և նրա սահմաններից դուրս, խորհրդային մյուս հանրապետություններում բնակվող հայահոծ համայնքները լիարժեք ներգրավվել էին ԽՍՀՄ-ում ընթացող հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացներին՝ իրենց վրա կրելով ժամանակի տարաբնույթ վերափոխումները, մարտահրավերներն ու խնդիրները, որոնք հատուկ էին ստալինյան պատմափուլին:

Հայաստանի և ԽՍՀՄ ամբողջ հայության համար ծանր մարտահրավեր էին 1940-ական թթ., երբ համայն հայությունը ծանրակշիռ մասնակցություն ունեցավ ֆաշիստական Գերմանիայի ագրեսիայի և թուրքական ներխուժման սպառնալիքի կասեցմանը, իսկ բռնությունների նոր ալիքի զոհը դարձան և հիմնականում Միջին Ասիա, Ուրալ, Սիբիր ու Ալթայ աքսորի ենթարկվեցին ՌԽՖՍՀ (Ղրիմի և Հյուսիսային Կովկասի), Արևմտյան Ուկրաինայի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի (այդ թվում՝ ներգաղթած սփյուռքահայերը) հազարավոր հայեր:

Հետպատերազմյան տասնամյակներին Հայաստանի և միութենական հանրապետությունների հայությունը թևակոխեց քաղաքական ու սոցիալ-տնտեսական սաստիճանական կայունության շրջան, սակայն սրվել էին հայության ազգային և հոգևոր-մշակութային խնդիրները հարևան Ադրբեջանական ու Վրացական ԽՍՀ-ներում: Այս հանրապե-

տություններում բացահայտ կերպով իրականացվում էր հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացում ու յուրացում, հայ բնակչության իրավունքների և կամարտահայտման ոտնահարում, հասարակական-պետական կյանքից, բնակության վայրերից դուրս մղման քաղաքականություն:

Ազգային կյանքի դրսևորման, հայկական ինքնության, լեզվի, կրթության ու մշակույթի զարգացման իրական հնարավորությունները սահմանափակ էին նաև խորհրդային մյուս հանրապետություններում: Այստեղ բնակվող հայությունը հայտնվել էր հասարակական-քաղաքական և գաղափարական նոր իրողությունների պայմաններում:

Հետպատերազմյան տարիներին միութենական հանրապետություններում հայ ազգային կյանքի կազմալուծումը (հայկական դպրոցների թվի կտրուկ կրճատումը, մամուլի վերացումը, եկեղեցիների փակումն ու ավերումը, խտրական վերաբերմունքի դրսևորումները և այլն) շարունակվեց, սակայն հայությանը վերադարձվեցին մի քանի եկեղեցիներ, որով դրանց հետագա ավերումը կանխվեց (Մոսկվա, Դոնի Ռոստով):

Խորհրդային հանրապետություններում բնակվող հայության թվաքանակի, աճի դինամիկայի, տեղաբաշխման, մայրենի լեզվին տիրապետելու, գրագիտության մակարդակի, սեռատարիքային կազմի ու այլ տվյալների մասին ամփոփ պատկեր է վեր հանվում Համամիութենական մարդահամարներով:

Ըստ այդ մարդահամարների տվյալների, ընդամենը 50 տարում՝ 1939-1989 թթ., ԽՍՀՄ հայ ազգաբնակչության թվաքանակն ավելի քան կրկնապատկվել էր (1939 թվականին՝ 2.152.860 մարդ, իսկ 1989 թվականին՝ 4.623.232 մարդ), իսկ միայն Հայկական ԽՍՀ-ում՝ այդ ցուցանիշը գրեթե՝ եռապատկվել (1.061.997-ից հասնելով 3.083.616 մարդու):

Հատկանշական է, որ նախապատերազմական մարդահամարի տվյալներով՝ 1939 թ. դրությամբ, Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր ԽՍՀՄ ամբողջ հայության ընդամենը 49.3 տոկոսը, իսկ միութենական մյուս հանրապետություններում միասին՝ 50.7 տոկոսը:

ԽՍՀՄ-ում անցկացված վերջին 1989 թ. Համամիութենական մարդահամարով Հայկական ԽՍՀ-ում բնակվում էր ամբողջ ԽՍՀՄ հայ բնակչության 2/3-ը, միութենական հանրապետություններում միասին՝ 1/3-ը կամ 1.539.616 հայ:

Հայկական ԽՍՀ-ից հետո հայ բնակչության թվաքանակով երկրորդ ՌԽԴՍՀ-ն էր՝ 532.390, ապա՝ Վրացական ԽՍՀ-ն՝ 437.211, Ադրբեջանական ԽՍՀ-ն՝ 390.505, Ուկրաինական ԽՍՀ-ն՝ 54.200, Ուզբեկական ԽՍՀ-ն՝ 50.537, Թուրքմենական ԽՍՀ-ն՝ 31.829 մարդով:

ԽՍՀՄ-ում կյանքի կոչված «Վերակառուցման» քաղաքականությունը, ազգային-ազատագրական շարժումը Լեռնային Ղարաբաղում, Սպիտակի աղետալի երկրաշարժը, ազգային ինքնագիտակցության վերելքը ազդակ դարձան, հնարավորություն ընձեռեցին նորոգել հայ ազգային կյանքը Խորհրդային Հայաստանից դուրս և զորավիգ կանգնել ազգային խնդիրներին: Ազգային ինքնագիտակցության վերելքի պայմաններում ՌԽԴՍՀ-ում, Ուկրաինական ԽՍՀ-ում, Բելոռուսական ԽՍՀ-ում և մյուս միութենական հանրապետություններում աստիճանաբար վերստեղծվեցին կամ ձևավորվեցին հայկական ազգային մշակութային հաստատությունները՝ համայնքնային, մշակութային միությունները, դպրոցները, մամուլը, հասարակական-բարեգործական բազմաբնույթ կազմակերպությունները:

Ազգային կյանքի վերելքը հատկապես ակնառու էր ՌԽԴՍՀ-ում՝ Մոսկվայում, Լենինգրադում (Սանկտ Պետերբուրգում), Կրասնոդարի ու Ստավրոպոլի երկրամասերում, Դոնում և Պովոլժիեում:

Հետխորհրդային տարածքում կազմավորված նորանկախ հանրապետություններում հայ ազգաբնակչության թվաքանակը հիմնականում շարունակեց աճ արձանագրել (բացառությամբ Միջին Ասիայի որոշ հանրապետությունների և Ադրբեջանի, որտեղից տեղի ունեցավ հայ ազգաբնակչության զանգվածային բռնագաղթ):

Այդ հանրապետությունների հայկական համայնքների թվաքանակի մեխանիկական աճը պայմանավորված էր Ադրբեջանից, միջինասիական հանրապետություններից, մասամբ՝ Վրաստանից և Աբխազիայից հայ բնակչության բռնագաղթով կամ աստիճանական արտահոսքով: Նորանկախ Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական դժվարությունները, Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական իրողությունները, Հայաստանի շրջափակումը պատճառ դարձան ՀՀ-ից հիմնականում դեպի ՌԴ, Ուկրաինա, Բելոռուս և Ղազախստան հարյուր հազարավոր հայերի ներգաղթի՝ հայաշատ այդ համայնքների հայության թվաքանակի մեծացման, հայկական նոր համայնքների ձևավորման

Զգալի համալրում ստացած հայկական այս համայնքներում կարճ ժամանակ անց արձանագրված կարևոր ձեռքբերումների կողքին նկատելի էին նաև բացթողումներ, կազմակերպական խնդիրներ, հայապահպանությանն ու հայկականությանը վտանգող մարտահրավերներ. Հետխորհրդային այդ հանրապետությունների հայկական համայնքների հետագա զարգացումը, հզորացումը, կազմակերպական նոր որակները կարող են դրանք դարձնել ՀՀ-ին և համայն հայությանը սատարող, միջպետական հարաբերությունները խթանող կարևոր գործոնի:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1 *Արխիվային սկզբնաղբյուրներ*

1.1 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

ֆ. 823, ց. 1, գ. 254; ց. 3, գ. 108, գ. 129, գ. 160; ց. 4, գ. 23, գ. 36

ֆ. 409, ց. 1, գ. 5787, ց. 3, գ. 129

1.2 ЦАОПИМ (Մոսկվայի հասարակական-քաղաքական պատմության կենտրոնական արխիվ)

Ф. 4, оп. 218, д. 157

Ф. 635, оп. 1, д. 886

1.3 ГАРФ (Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ)

Ф. Р-9401, оп. 2, д 65

Ф. Р-9479, оп 1, д. 436

1.4 РГАСПИ (Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ)

Ф. 17, оп. 88, д. 958

## 2. *Տպագիր սկզբնաղբյուրներ*

2.1 Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Երևան, 2011:

2.2 Վավերագրեր Հայ եկեղեցու պատմութեան: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա (1955–1994 թթ.): Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, գիրք ԺԶ (16-րդ), Կազմող Գ Յազըճեան, Եր., 2008:

2.3 *Бугай Н., Депортация народов Крыма: документы, факты, комментарии, М., 2002.*

2.4 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, СССР (Сводный том), М., 1962.*

2.5 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Белорусская ССР, М., 1963*

2.6 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, РСФСР, М., 1963.*

2.7 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Украинская ССР, М., 1963.*

2.8 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Азербайджанская ССР, М., 1963.*

2.9 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Грузинская ССР, М., 1963.*

2.10 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Казахская ССР, М., 1962.*

2.11 *Итоги Всесоюзной переписи населения 1959 гда, Киргизская ССР, М., 1963.*

2.12 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Молдавская ССР, М., 1962.*

2.13 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Таджикская ССР, М., 1963.*

2.14 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Туркменская ССР, М., 1963.*

2.15 *Итоги Всесоюзной переписи населения 1959 года, Узбекская ССР, М., 1962.*

2.16 *Итоги Всесоюзной переписи населения 1970 года, том IV, Национальный состав населения СССР, союзных республик, краев, областей и национальных округов, Статистика, М.,1973.*

2.17 Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г., М., 1990.

2.18 СССР в цифрах в 1984 году, Москва, 1985.

2.19 Численность и состав населения СССР. По данным Всесоюзной переписи населения 1979 года, М., 1984.

## 3 Մենագրություններ, աշխատություններ, ժողովածուներ

3.1 Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ., Եր., 2011:

3.2 Աթյան Մ., Հայ տպագիր խոսքը Ուկրաինայում, Օդեսա, 2012:

3.3 Այվազյան Ա., Նախիջևան. գիրք հուշարձանաց, Երևան, 1990:

3.4 Այվազյան Ա., Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները (համառոտ ցուցակ), Երևան, 1986:

3.5 Բայրամյան Հ., Էջեր հայ-վրացական գրական կապերի պատմությունից, Երևան, 2010:

3.6 Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Երևան, 2015:

3.7 Գալստյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես – XX դարի 80-ական թթ.), Հայ ազգագրություն և բանահյուսություն: Նյութեր և ուսումնասիրություններ, պր. 26, Երևան, 2009

3.8 Դավթյան Ա., Հայկական և հայախառը բնակավայրերը Վրաստանում, Երևան, 1997:

3.9 Եղիշէ ատ. Քահ. Սարգսեան, Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանը. Գէորգեան ճեմարան. Աստուածաբանական համալսարան (1945–2006), Ս. Էջմիածին, 2009:

3.10 Իվանով Վ., Էթնոքաղաքական և էթնոժողովրդագրական գործընթացները Նախիջևանում պատմության լույսի ներքո (XVII–XX դա-

բեր), Նախիջևան. պատմական և արդի շրջանի որոշ հիմնահարցեր: Վերլուծական նյութեր, Երևան, 2010:
3.11 Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794–1980), կազմ.՝ Մ. Բաբլոյան, Երևան, 1986:
3.12 Հարությունյան Գ., Կյանքը և գործունեությունը, կազմողներ՝ Ավետիսյան Հ. և ուրիշներ, Երևան, 2000:
3.13 Մաղոյեան Ա., Գէորգ Զ Չորէքչեան. Կաթողիկոս Ամենայն Հայոց. Ս. Էջմիածին, 2011:
3.14 Մաղալյան Վ., Հայ տեղական մամուլը և գրատպությունը Վրաստանում (1885–1990 թթ.), Երևան, 2012:
3.15 Պողոսյան Պ., Աստապատ. արարատեան հայաշխարհ, Երևան, 2005
3.16 Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, Երևան, 2011:
3.17 Ստեփանյանց Ս., Հայ Առաքելական եկեղեցին ատալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:
3.18 Վազգեն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008:
3.19 Վարդանյան Ա., Ազնաբերդ. Նախիջևանահայության վերջին ամրոցը, Երևան, 2000:
3.20 Алексанян О., Армяне и армянская церковь в Молдавии, Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений, Сб. статей и материалов. Составели: К. Хачатрян, О Алексанян, Ереван, 2012.
3.21 Амелин В., Межнациональные конфликты в республиках Средней Азии на рубеже 80–90-х годов, Москва, 1993.
3.22 Армяне Ставрополья и Терека, под общ. ред. Акопяна В., Пятигорск, 2007.

3.23 Арутюнян Ю., Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, 2011.
3.24 Беднарский И., Атлас «Крым. Армяне», Армянское население Крыма с древних времен до наших дней, Симферополь, 2008.
3.25 Белозеров В., Этническая карта Северного Кавказа, Москва, 2005.
3.26 В семье единой, Мясниковский райисполком, Ростов-на-Дону, 1989.
3.27 Всемирный армянский атлас, Москва, 2015.
3.28 Всесоюзная перепись населения 1970 года: Сб. статей, М., 1976.
3.29 Всесоюзная перепись населения 1979 года: Сб. статей, М., 1984.
3.30 Григорьянц В. Е., Армяне Средней Азии: История, современное положение, перспективы, Ереван, 1994.
3.31 Давтян Д., История храма Св. Григория Просветителя армянской Апостольской церкви в Одессе, Одесса, 2004
3.32 Документы армянской архитектуры: 1: Церковь Сурб Ншан Сурб Никогайоса, Тбилиси, 2012.
3.33 Иванов В., Деарменизация Нахиджевана XX в (сжатый обзор), Нахиджевана в XX – начале XXI веков: некоторые факты Сб. статей под. ред. Захарова В., Москва, 2011.
3.34 Иванцов И. Г., Малоизвестные факты истории Армянского района в 1920–1930-е гг., Армяне юга России: история, культура, общее будущее: материалы Всероссийской научной конференции (30 мая 2 июня 2012 г., Ростов-на-Дону) /отв. ред. акад. Г.Г. Матишов, Ростов н/Д, Изд-во ЮНЦ РАН, 2012:
3.35 История Грузии, т. III, Тбилиси, 1968.
3.36 Каграманов Н., Дом Культуры Советской Армении в Москве, Е ,1982.
3.37 Мамулов С. С., Армяне в Грузии, Москва, 1995.
3.38 Мелик-Шахназаров Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ереван, 2007.

3.39 *Минасян М., Этнические меньшинства Грузии; потенциал интеграции на примере армянского населения страны, Ереван, 2006.*

3.40 *Очерки истории Абхазской АССР, часть II, Дзидиря Г. и др., Сухуми, 1964.*

3.41 *Рафиенко Л., Армянский религиозный, культурный и благотворительный центр в Москве в конце XVIII–первой трети XX вв., Московский регион: этноконфессиональная ситуация, М., 2000.*

3.42 *Тер-Саркисянц А., Армяне на Дону: Их прошлое и настоящее, Вторые Лазаревские чтения по истории армян России (25–27 ноября 2003 г.), Москва, 2006.*

3.43 *Ходжабекян В., Демография и проблемы занятости в Армении с начала XIX века до середины XXI века, Ереван, 2006.*

3.44 *Шнирельман В., Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье, Москвя, 2003.*

3.45 *225-летию основания города Нахичевани-на-Дону и сел Мясниковского района Ростовской области, Ростов-на-Дону, 2004.*

3.46 *Дашкевич Я. Р., Вірмени в Україні: дорогами тисячоліть. Збірник наукових праць. Львів: Вид-во Львівського музею історії релігії "Логос", 2012.*


## 4. *Հոդվածներ*


4.1 *Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը ԽՍՀՄ միութենական հանրապետություններում ըստ 1970 թ. Համամիութենական մարդահամարի տվյալների, Հայոց պատմության հարցեր, Երևան, 2012:*

4.2 *Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1959–1989 թթ. մարդահամարների տվյալների, Սփյուռքագիտություն տարեգիրք, Երևան, 2013.*

4.3 Ակերսանյան Հ., Հայկական ազգային գյուղխորհուրդներն ու շրջանները ՌԽՖՍՀ-ում, Հայոց պատմության հարցեր, № 14, Եր., 2013.

4.4 Աստոնյան Ա., Համշենահայության պատմությունից, Բանբեր Հայաստանի արխիվների, № 3 (55), 1979:

4.5 Գրիգորյան Մ., Միգրացիոն պրոցեսները Հայաստանում (1960-1980 թթ.), Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1991. № 5 (581):

4.6 Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում, Վարձք, Երևան, դեկտեմբեր 2010 – ապրիլ 2011, № 3:

4.7 Նախիջևան, Երևան, թիվ 1 (28), 2005 (սեպտեմբեր), էջ 14, թիվ 2 (29), 2006 (հուլիս):

4.8 Վարդանյան Ս., Արևմտյան Ուկրաինայի հայկական հուշարձանները, Վարձք, Երևան, № 9, 2013:

4.9 Акопян Т., Язык-сердце народа, Համайнк, вып. 3, Минеральные Воды, 1996.

4.10 Акопян В., Церковь, ставшая символом общины, Համайнк, вып 3, Минеральные Воды, 1996.

4.11 Варданян А., Исход армян из Нахиджевана // Национальная идея, № 6, Ер., 2008. http://hayasanews.com/1341125854/#sthash.scu0scow.dpuf

4.12 Григорьянц В., Возрождение армянской общины Крыма: достиже ния и проблемы. Историческое наследие Крыма, 2004, № 5.

4.13 Ходжабекян В., Асатрян Б., Из истории армянского населения

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Ներածություն* .......................................................... 3

*Հայությունը խորհրդային հանրապետություններում*

*ա. ՌԽՖՍՀ ում, Ուկրաինական և Բելոռուսական ԽՍՀ-ներում* ... 8

*բ. Միջինասիական խորհրդային հանրապետություններում* ........ 40

*գ. Մերձբալթյան հանրապետություններում և Մոլդովական ԽՍՀ-ում* .................................................. 51

*դ. Ադրբեջանական և Վրացական ԽՍՀ ներում Նախիջևանի ԻԽՍՀ-ում* .................................................. 55

*Հավելվածներ*

*(արխիվային փաստաթղթեր, աղյուսակներ, նյութեր)*

*Հավելված 1*

*Ռուսաստանի (Մոսկվա) առաջին հայկական մշակութային միության՝ «Բարև Ձեզ»-ի Կանոնադրությունը* .................................. 93

*Հավելված 2*

*Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա –Ի նամակները ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Բուլգանինին* ................ 119

*Հավելված 3*

*Արևմտյան Ուկրաինայի հայ կաթոլիկ եկեղեցական թեմի վերացումը* .................................................. 130

*Հավելված 4*

*Հայ Առաքելական եկեղեցին, խորհրդային հանրապետություններում գործող թեմերին վերաբերող փաստաթղթեր* ........................ 134

*Հավելված 5*

*ԽՍՀՄ և առանձին միութենական հանրապետությունների հայ բնակչությանը վերաբերող տվյալներն ըստ 1970 թվականի Համամիութենական մարդահամարի ամփոփ արդյունքների* .......... 155

***Վերջաբան*** .......................................................... 173

***Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ*** ........... 177

# ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՏՅՈՊԱՅԻ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1941–1991 ԹԹ.

---

# АЛЕКСАНЯН ОВАННЕС СТЕПАЕВИЧ

# АРМЯНСКИЕ ОБЩИНЫ СОВЕТСКИХ РЕСПУБЛИК В 1941-1991 ГГ.

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 20.12.2016 թ.
Տպաքանակը՝ 200 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

[2000 թ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0441659

А П 102187



## Հովհաննես Ստյոպայի Ալեքսանյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

1996 թ. ավարտել է Գյումրի քաղաքի Ակադեմիական վարժարանը, 2000 թ.՝ ԵՊՀ Պատմության ֆակուլտետի բակալավրի, 2002 թ. մագիստրատուրայի ծրագրերը՝ «Հայաստանի հարակից երկրների պատմություն» մասնագիտացմամբ: 2006 թ. ավարտել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917–1941 թթ.» թեմայով, պատմական գիտությունների թեկնածու է (2009 թ.), դոցենտ (2014 թ.):

2006–2016 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Հայ գաղթօջախների և սփյուռքի պատմության» բաժնի կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող: 2016 թ. մարտից Պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող է:

2007–2010 թթ. դասավանդել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, 2010–2012 թթ. աշխատել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի /ԵԿՏԱ/ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ:

2010–2016 թթ. դասավանդել է Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

2012 թ. դասավանդում է ԵՊՀ-ում (Հայաստանի հարակից երկրների պատմության և Սփյուռքագիտության ամբիոններում) և ՀՀ ԳԱԱ Միջազգային Գիտակրթական կենտրոնի միջազգային հարաբերությունների ամբիոնում:

Հայաստանի պատմաբանների միության անդամ է:

Երեք մենագրությունների, շուրջ երեսուն գիտական ու մեթոդական հոդվածների հեղինակ է, մասնակցել է բազմաթիվ միջազգային կոնֆերանսների, այդ թվում՝ արտերկրում: Գիտական ուսումնասիրությունների շրջանակը խորհրդային և հետխորհրդային տարածքի, Արևմտյան Եվրոպայի հայկական համայնքների պատմության տարբեր հիմնահարցերն են:

Ամուսնացած է, ունի մեկ որդի: